

Մ. Ա. Պ. ԶԵՂԵՎԵԼԴ

ԾՈՎՔԻ
ՀԱԴՏՆԵՔԸ



ՊԵՏՎՐԱԾ



30 MAY 2011

891.7/8.2

7-62

4

ՀՊՐՈՅԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Մ. ՌՈԶԵՆՖԵԼԴ

ԾՈՎԻ ԳԱՂՏՆԻՔԸ

ԹԱՐԳԱՄ. Ս. ՏԵՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԵՏՐՈՎԱԾ

ՏԵՐԵՎԱՆ

1939

24.07.2013

4982

ԱՎԱԽԱԲԱՆ

19... թվի ուշագնը Մոսկվայի, Հեռավոր Արեգելքի, Սիբիրի և ուրիշ շատ քաղաքների թուրքերում լույս տեսավ մեր թերթերի համար փոքր ինչ անսովոր մի հաղորդում.

Առեսի տուեղծվածային ազդանշանը

Յերեկ, Մոսկվայի ժամանակով ժամի 9-ից 45 րոպե անց, Բարնաուլի ուղիովայանը 500-600 մետր ալիքով կարճ ուղիողիր ընդունեց, վորը հաղորդում եր ըստ յերեւնաթիւ Հյուսիսում լողացող շողենավի աղետի մասին:

Ուղիողիրը լաղկացած եր ընդամենը յերեք րոպեց.

«...SOS! SOS!... սուզվմամբ ենք...»

Նույն որը, ժամի 17-ից 28 րոպե անց, նույն ալիքով ընդունվեց յերկրորդ ուղիողիրը.

«...Սուզվմամբ ենք... վրկեցեք... «Խորհուրդների աստղ...»

Մայրաքաղաքի թերթերի թղթակիցները դիմեցին Արկադիական կոմիտեին, վորի գեկավարներից մեկը հետեւյալ յենթադրությունները հայտնեց.



2863

34

— Առայժմ,—հայտարարեցնա, — բացի արդին հրատարակվում հաղորդումներից մեզ վոչինչ հայտնի չեմ Ռադիոգրի լակոնականությունը և աղետի վայրի մատնանշման բացակայությունն ակամայից սովորում են կասկածել նրա ճշտության մասին, Յես չեմ հավատում, վոր շոգենավերից վորեն մեկը, աղետի աղդանշաներ ուղարկելիս, չհաղորդի, թե ինքը վարեկ ե գանվում:

Ջրմոլկոմատում ժուռնալիստներին վորոշակի հայտնեցին, վոր ԽՍՀՄ առեվտրական նախատրմի ցուցակներում «Խորհուրդների աստղ» անունով նաև չկա և չի յեղել: Բերինգյան ծովում, Ոխսայան ծովում և Խաղաղ օվկիանոսում մոլեգնում և տայֆունը, սակայն այդ ծովերում լողացող բոլոր նավերը բարեհաջող կերպով վերադարձել են իրենց նավահանգիստները:

— Աղդանշանը կեղծելու լուրը, — ժուռնալիստների հետ զրուցելիս ասաց Կապի Ժայռմատի զեկավար աշխատողը, — յերեկ ծաղել ե սիրող-կարճալիքայիներից մեկի՝ վերջերս ունցած սխալից հետո: Նա տագուալանան եր ընդունել, վորը տրված եր իրը թե Սեմպալատինսկից: Ռադիոգրիքը հաղորդում եր, վոր քաղաքը հեղեղվել ե ջրով: Սակայն պարզվեց, վոր ուղիսարը շփոթվել եր. ստուգումից յերեաց, վոր նույնորը և նույն ժամին աղդանշաներ եր տալիս Իրկուտսկի մոտ գտնվող մի փոքր քաղաք, վորը հանկարծ հեղեղից յեր մատնվել: Տվյալ գեպքում յես կողմանակից եմ յենթագրելու, վոր Բառնառուլի ընդունած աղդանշանն իրոք աղետի աղդանշան ե: Հաղորդատուի ալիքը մոտ և «SOS» աղդանշանի հաղորդման ժամանակ սովորաբար կիրառվող ալիքներին: Միանդամայն ակներեւ և, վոր

ռադիոսիրողների համար տեխնիկապես անհնար և 600 մետր ալիքով կեղծ աղդանշան հաղորդել: Մինք կարդարել ենք ՀԱՄԿԵ-ի կայանին հայտարարել, վոր աղդանշաններն ընդունված են, և պահանջել նավից, վոր նա հայտնի, թե ինքը վնասակար է գանվում:

Յեթե աղդանանները կրկնվեն, մենք պելենգման* միջոցով բոլոր հսարավոր միջոցները ձեռք կառնենք կործանվող նավի ավարիայի վայրը պարզելու համար: Հիմք կա նույնպես յենթագրելու, — յեղբափակեց իր հաղորդումը Կապի Ժայռմատի աշխատողը, — վոր աղդանշանները տվել ե վորեն հիգրոինքնաթիո:

Այդ հաղորդումներից հետո թերթերում տպվեց Քաղաքացիական ողային նախատրմիզի Համամիութենական միավորման պատասխանը:

«Դիմավոր վարչությունում, ուր դիմել եյին թերթերի ներկայացուցիչները, հայտարարեցին, վոր ներկայումս Հյուսիսում խորհրդային ողանավեր չկան, ողային ողերացիաներն ավարտված են, իսկ «Խորհուրդների աստղ» անունով ողանավ ընդհանրապես գոյություն չունի»:

Յեկ իսկույն նոր յենթագրություն ծագեց. չլինք թե դժբախտություն ե պատահել անդրեսուային կայաններից վորեն մեկում: Հնարավոր ե, վոր ձմեռողների խումբը ծով ե գութ յեկել արհեստագործական նավով և վատ յեղանակի հետեւանքով աղետի մատնվել սառույցների մեջ:

*Պելենգեր (պելենգոված) — ձայնենկալ գործիքով վորոշել ձայն հաղորդող կետի տեղը:

Բոլոր թեհոային կայանները հարցմանը պատասխանեցին, վոր իրենց մոտ ամեն ինչ կարդին եւ Իսկ Վրանգելի կղզու ձմեռողները, ինչպես յերեւում եւ, չհասկանալով, թե ինչու յեն անհանգստանում մայրաքաղաքում, հայտնեցին.

«Ամսն ինչ լիովին կանոնավոր եւ Գերազանցորեն պատրաստվել ենք՝ թեհոային զիշերվանու Խոհարարն առողջացել եւ»:

Յերբորդ որը Խարաբովսկի կարճալիքային Կուտասովը և Հեռավոր Սրբելքի յերեք ուղիոսիքողներ ընդունեցին վերջին ազգանշանը»

«Խացիա... ավարա... Աստղ... քսաներկու... Կորցնում ենք լողունակությունը... քշում — տանում ես, փրկեցք...»

Անինչ Վլադիլոստոկ եյին վերադարձել զրեթե բոլոր նավերը: Մնացածները, վորոնց վրա յեր հասել տայֆունը, չնայած սպառնալից դրության, համեմատարար հանգիստ հաղորդումներ եյին տվել:

Նույն որը Մոսկվաի Խաղիովարչություն ներկայացալ քաղաքացունի Վլասովան և հայտնեց, վոր իր ծանոթներից մեկը մի խումբ տուրիստների հետ յերեք ամիս առաջ զնացել եւ ձկնորսական արշավի: Տուրիստները քսաներկու հոգի եյին: Երսպեղիցիան ուղևորվել եր Ռոբորսկ և իր հետ ուղիոկայան ուներ: Խաղիովարում էիշատակված 22 թիվը նրան բերեց այն մըտքին՝ չլինի՞ թե այդ ուղիովիքն իր ծանոթներն են ուղարկել: Յերեկոյան Խաղիովարչությունը «կայծակ» ստացավ տուրիստներից:

«Լսեցինք ՀԱՄԿԾ կայանի հարցումը: Բոլորս վողջառողջ ենք, ստիպված ենք ձմեռելու»:

Հյուսիսային նավահանգիստներում պատրաստ կանգնած եյին փրկող շողենավեր: Հրաման ստանալով, չնայած տայֆունին, նավերը ծով դուրս յելան աղետյալին փնտոելու համար:

Տաս որ անց պարզվեցին մըրիկի հետեանքները: Ծովում կործանվել եյին յերեք ձկնորսական մակույկ, սացահատի տիպի «Աստղագետ» փորր շողենավը և Սախալինից վերադարձող շճարպիկ» բուքսիրը: Անհայտ խորհրդավոր նավը փրկելու համար զնացած շողենավերը փրկեցին ձկնորսների մեծ մասին, վերցրին սուզոված բուքսիրի ծովագնացների մակույկները և վերադան:

Աղետի աղդանշանների պատմությունը հետզհետե մոռացվեց, և յերկու ամսից հետո, ամերիկական անդրաովկիանոսային «Պրեզիդենտ» հոկայի հեռագրի կապակցությամբ նրա մասին վոչ չհիշեց:

«Խաղաղ ովկիանոսի հարավային մասում, — հայտնվում եր հեռագրում, — Սան-Ֆրանցիսկո—Շանհայ լողենթացքը կատարելիս, բնակելի կղզիներից հեռու, չավայից զեպի հարավ, շողենավին ովկիանոսում գտավ զիտակցությունը կորցրած մի մարդու, վորին ջրի մակերեսի վրա յեր պահում փրկող գոտին»:

Փրկված մարդու բախտով հետաքրքրվեցին ամերիկական թերթերը: Դժբախտաբար պարզվեց, վոր նալիսկատար ուժասպառ վիճակում եր և ժամանակագործակես զրկվել եր խոսելու ընդունակությունից:

«Պրեզիդենտ»-ի նավապետի հանձնարարությամբ հիփանդի անկողնի մոտ անընդհատ հերթապահում եր զեկապետ Ֆրեդ Իրվինը:

Թերթերից մեկի խնդրով, Սահ-Ֆրանցիսկո ու-
ղարկած իր հեռազրում, Իրվինգը հաջորդում եր.

«Փրկվածը, ապրումների հետեանքով, կորցրել ե
խոսելու ընդունակությունը: Նույնիսկ տեսնդի
նոպաների ժամանակ նա միայն հառաչում ե,
վոչ մի բառ չի արտասանում: Այսպիսով, միզ հա-
մար հանելուկ և մնում, թե այդ ժարդը կործան-
ված վո՞ր նավիցն ե և ով ե»:

Հոնոլուրույում «Պրեդիկենտի» նավապետն ան-
ձանոթին հանձնեց տեղական հիվանդանոց: Մի ամիս
ել չանցած՝ դժբախտն առողջացավ, բայց ամբապենդ-
վելուց և համարյա բոլորովին կազուրվելուց հետո յել
նա դեռ չեր խոսում: Նրան հսկող բժիշկները համոզ-
վեցին, վոր նա կորցրել ե նաև հիշողությունը: Կյանքի
վերաբերած յերիտասարդը նայում եր բժիշկներին
անտարբերությամբ և կործես վոչ մի հետաքրքրու-
թյուն չեր ցույց տալիս գեպի շրջապատը:

Զանգան պատրվակներով անընդհատ հիվանդա-
նոց եյին գալիս թերթերի զիտազություններով հետաքրք-
րքրված մարդիկ: Դիրեկտորը կտրուկ կերպով արգելեց
աննպատակ այցելությունները, սակայն նա մի քանի
անգամ ստիպված յիղավ զիջելու վոմ ճապոնացու-
առանձնակի համառությանը, վորը անդում եր, թե
հույս ունի ճապոնական նավի կործանման ժամանակ
կորած իր ընկերոջը գտնելու հանձին այդ հիվանդի:
Համոզվելով, վոր սխալվել ե, ճապոնացին այնուամե-
նայնիվ յեկավ գարձյալ յերկու անգամ և, զարմացնելով
բժիշկներին, համառորեն ուզում եր հիվանդի հետ առ-
յերես մնալու թույլտվություն ստանալ: Զնայած բժիշկ-
ների վստահացումներին, թե հիվանդը կորցրել ե հի-


շողությունն ու խոսելու ընդունակությունը, համառ
պարոնն անհամար հարցեր եր տալիս նրան, բայց վոչ
մի պատասխան չեր ստանում:

Մի անգամ, բժշկի ուղեկցությամբ քաղաքային
պուրակում զրուսնելու ժամանակ, անհայտ մարդը հան-
կարծ կանգ առավ արմավենու մոտ: Նրա ուշադրու-
թյունը գրավել եր մի փոքրիկ գորչ թոշուն: Ի զարմանա-
բժշկի, հիվանդի գեմքը կերպարանափոխվեց և նա հուզ-
մունքով յերկու անգամ կրկնեց մի անձանոթ բառ:
Ամերիկացի բժիշկը լավ հիշեց այդ բառը և հաղորդեց
հիվանդանոցի զիրեկտորին: Հիվանդն արտասանել եր
«Ճնձղուկ» բառը: Պարզվեց, վոր այդ ուսւական բառ ե,
և այդ հնարավորություն տվեց վարչությանը՝ փրկվածի
պզությունը վորոշելու:

Շուտով Հոնոլուրույում կանգ առավ Սահ-Ֆրան-
ցիսկոյից Վլադիվոստոկ գնացող խորհրդային Շաջիկ՝
շոգենավոր: Հիվանդանոցի զիրեկտորը կանչեց նավա-
պետին, և համբը, ոռուսերեն խոսակցություն լսելով,
ընդհանուրին ուրախացնելով՝ նետվեց նրա մոտ: Մեղմ-
վելով նրա կրծքին, նա հանկարծ ցնցվեց հեծկլտոցից
և գարձալ միքանի խոսք արտասանեց.

— Յես կլողամ...—հեծկլտալով, հաղիկ լսելի
արտասանեց նա, —կլողամ... ինձ կտեսնեն...

«Տաջիկ» նավապետն ընդունեց նրան իր նավի
վրա: Սակայն ճանապարհորդության յերկար որերին
այդ մարդը վոչինչ չեր ասում, յերեկի հարցերը չհաս-
կանալով կամ բոլորովին անուշադիր թողնելով: Վլադի-
վոստոկում անսովոր ճանապարհորդին հանձնեցին ա-
ռողջապահության մարդային բաժնին: Բժշկական կոն-
սիլիումի վորոշմամբ նա ուղարկվեց Լենինգրադի հոգե-
նյարդաբանական ինստիտուտ:



ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

Ս.Ռ.Ա.Վ.ՈՅԸ ԿՈՒՐԼԱՑՄ.Ն ԿՂՋԻՆԵՐԻՑ Ս.Յ.Ն ԿՈՂՄԸ

Ավագ զեկապետ Ալեքսանդր Գոլովինն արթնացավ մի անհասկանալի աղմուկից: Նավասենյակում մութ եր: Գլխավերեկց վստքերի տրոփ եր լսվում, վագում ելին ձախ նավեղը ըստ: Նեկապետը տարակուսանքով իջեցրեց կեռից կախ տված զրպանի ժամացույցը և ավելի զարմացավ: Առավոտյան ժամի վեցն եր: Ի՞նչը կարող եր այդքան վաղ արթնացնել նավակազմին:

Մեկ ժամ առաջ, յերբ նա հեռացավ հերթափոխությունից, գուրսը տիրում եր գորշ, խոնավ մթություն, անձրեն սպիտակավուն շիթերը վազում ելին վերնաշենքերից տախտակամածի վրա, և վոտների տակ

ճլրփում եր սառը, պղուոր ջռւը: Հապա ի՞նչն է վերկացրել բոլորին՝ զարթնելու սավորական ժամանակից յերկու ժամ առաջ: Կամաց և զգույշ թակեցին դուռը:

— Մտեք, — զժկամորեն զոռաց զեկապետը: — Ո՞վ ե: Ներեցեք, — լսվեց հավաքարարունի Նինա Սամազինայի յերկուոտ և մի քիչ վախեցած ձայնը, — թույլ տվեք հավաքելու:

— Միթե ձեզ հայտնի չե, — մուայլ և միաժամանակ զարմացած՝ ասաց զեկապետը, — վոր յես նոր եմ հերթափոխվել: Այդ ինչ աղմուկ և տախտակամածու մ:

Դեկապետը լիակատար հիմք ուներ զժողոնելու: Նա քննել եր մեկ ժամից մի քիչ ավելի: Դեռ նոր եր, վոր նա, մանրամաղ անձրենից սարսանելով, հերթափոխվեց և իր վրայից զցեց ծանր, խսնավ մուշտակը: Նա իրավամբ կարող եր մի յերեք ժամ ևս հանգստանար:

— Խնդրում եմ ներեք, — վարանելով արդարանում եր Նինան, — րայց այսոր բոլորը վեր են կացել դեռ լոււյսը չբացված: Յես կարծում եմ՝ դուք արթնացել եք: Այս ինչ արի յես: Քննեցք, խնդրում եմ, քննեցք...

Բայց Գոլովինը վրգովված ցած թռավ մահճակալից, գեմքը կնճռոտելով, վոտքով շպրտեց թաց վոտնամինները, բաժակը ջուր լցրեց և հետ քաշեց իլլումինատորի (լուսանցույց) թանձր, կանաչ վարպատյրը: Ակամայից աչքերը կկոցելով՝ նա բաժակը մի կողմ քաշեց և, զարժացած, սկսեց նայել զեպի առաջ: Իւյումինատորի մեջ եր նայում շլացուցիչ կապույտ յերկինքը: Մանուշակագույն ալիքների շողջողանքներում կայծկլտում ելին նորածագ արևի վոսկի ցոլքերը: Պայծառ ճառաղայթ վայլից լաքած սեղանի վրա, և զեկա-

պետն զգաց, թե ինչպես ջերմություն անցավ իր ձեռքի վրայով։ Վարագույրը ճմուելով և իր աչքերին չհավատալով՝ նա անընդհատ նայում եր պարզ հորիշ գոնին։

Հոկտեմբերի վերջին որերն եյին։ Գիշերն անհարացան կուրիլյան կղզիները, և շողենավը, Կամչալոկայից Վլագիվոստոկ վերադառնալով, դնում եր լրիվ ընթացքով, վրայեսզի ինչքան հնարավոր և շուտ անցնի կատաղի մրբկային քամիների շրջանից։ Գիշերն ընթանում եյին մասախուղի միջով և հաճախ դանդաղեցնում եյին ընթացքը։ Ապա մասախուղը ցրվեց, և կամբջակի յեզրերը թակեց տաղտկալի աշնանային անձրև։

Ծովագնացներից հվ չգիտե, թե ինչ և թագնված կուրիլյան շարքի ժոայլ ժայռերի հետեւ։ Անֆսաս աշխույժ քամին այստեղ անսպասելի կերպով վեր և ածվում կատաղի մրբիկի։ Հանդարտ մառախուղի մեջ թեթև սպիտակ բմբուներ են յերեսում, և հանկարծ ալիքների վրա բարձրանում ե ձյունահողմը, յերեսին են զարնուծյունի կուրացնող փաթիլները, և զեկապետն արդեն վոմ չինչ չի նշմարում առցնում։ Ծովս անհայտանում ե, և կատաղի բուքը պտավում ե սարսափեցնող փոռնոցով։

Չուկոտկայից և Կամչատկայից վերադառնող նավերն աշնանը միշտ աշխատում են։ արագ անցնել կուրիլյան շարքը։ Յեկ հանկարծ—արե։ Ամառնային տաք արե և հանդարտություն։ Գոլովինը բոլոր հիմքերն ուներ զարմանալու։

Նա փայրկենապես հագնվեց և, այն ե՛ռ զուում եր վերեւ վազել, բայց, սթափվելով, նորից փակեց դուռը՝ սողնակը զցելով։ Կարգ ու կանոն, նախ և առաջ կարգ ու կանոն։ Նա դանդաղորեն մաքրեց հագուստը, լվաց

ձեռները և սկսեց սափրվելու Դեռևս ծովալիքն տեխնիկումու ուսանելիս նա սկսել եր իրեն ճիշտ կարգ ու կանոնի ընտելացնել և վերջին յերեք տարիներում, հեռավոր նավարկություն կատարող նավերի վրա նա միշտ ընդհանուր նավասենյակ եր զալիս սափրված դեմքով, հիանալի հարթուկած շալվարով և փայլող կոշիկներով։

Նավապետի ավագ ոգնական Ալեքսանդր Պավլովիչ Գոլովինը, չնայած վոր 24 տարեկան եր, արդեն յերեք տարի յեկ հեռավոր նավարկության եր գնում։

Նա միջաւասակ մարդ եր, մի քիչ ավելի նիհար, քան պետք եր, բայց բավականին լայն թիկունք ու առողջ մկաններ ուներ։ Ծեր ծովագնացներին նայելով նրանց նմանվելով և նրանց անվրդովելի փստահությունն ընդորինակելով, նա շուտով իսկապես հանգարտ ու իրեն ուժերին վատահող մի մարդ գտրձավ։ Նրա անդորրությունը վարակում եր մյուսներին։ Յերբ, զլուխը կախ զցած, Գոլովինը լսում եր իրեն ստորագրյալին և պատասխանում եր յերկու-յերեք հախաղասությամբ, նա հեռանում եր միշտ բավարար ված և ինքն ել ինչ-վոր առանձին ուժ ու վստահություն եր զգում։

2863
35

Իր հարդարանքն ավարտելով՝ Գոլովինը տախտակամած բարձրացավ։ Տաք արեի տակ նավաստիները ծիծաղելով վագվուս եյին տախտակամածի վրայով, աշխատելով իրար բռնել։

Նավաքթի վերնաշնքում ֆրանսիական ըմբշամարտի խաղամրցանք եր սկսվել, և ըմբիշների շուրջը, դատավորի զերում, վրդովմունքով աճապարում եր խոհարարը՝ հուղված շարժելով շերեփը և թատակը կողքի վրած։ Նավախելում, պարանի կապոցի վրա

նստած՝ բոցման՝ Բակուտայի շուրջը մոտ տաս մարդ
եր հավաքել։ Ամբողջ նավակազմին հայտնի յեր բոց-
մանի՝ մտացածին բաներ պատմելու անընդորինակելի
հմտությունը, և զեւապետը, վորպեսզի չխանզարի,
անհկատելի կերպով հեռացավ, մտավ ստվերի մեջ։

Գոլովինի աշքերի առաջ փովել եր հանդարտ ծովը։
Շոգենախմ առանց աղմուկի սլանում եր արեի տակ և
կարծես չեր կպչում ջրին։

Սպիտակ ռազիոսիցիկի վրա զողողում եյին շող-
քերը, մակոււկների տակ բաց-կապույտ սավերներ եյին
ճոճվում։ Բոպե առ բոպե շոգը խստանում եր։

Պարանի կապոցի վրա նստած բոցման Բակու-
տան վրայից զցեց բածկոնը և մնաց զոլավոր բաթի-
պարու։ Անագին բոցմանին շըջապատող նավաստիները
նրա մոտ վախտ պատանիներ եյին յերեսում։ Բակու-
տան ինչ վոր բան եր հուսում բարակ պարանից, ժա-
մանա, առ ժամանակ ատամներով պնդացնում եր կա-
պերը և տաքացած՝ ինչ վոր պատմություն եր անում։

Գոլովինը աննշարելի կերպով մոտեցավ և, ու-
ղիովիցիկի պատին հենվելով, ականջ եր գնում։

Բոցմանի վոտների մոտ, իրեն ծնկները զրկած,
նստե, եր նավակազմի ամենա, երիտասարդ նավաստին—
տասնյոթ տարեկան Անդրեյ Մուռաշովը։ Նա առանձ-
նապես անհագ ուշադրությամբ եր լսում բոցմանին։
Անդրեյն անհանդիսա շարժումներ անելով, անկեղծ
բերկանքով ունինդրում եր Բակուտայի աբասանած
յուրաքանչյուր բառը, և այդ հանդամանքը մեծ հա-
ճույքով նկատում եր Բակուտան։ Մնացած նավաստի-
ները, լարված ուշադրություն ձեսցնելով, խորաման-
կուեն աչքով-ունքով եյին անում իրար։

Արշալույսին շողենախմ արթնացնող անսպասելի
արեգակը, ինչպես յերեւում ե, տաքացրել եր բոցմանի
հիշողությունը, և այժմ Բակուտան պատմում եր իր
անհամար պատմվածքներից մեկը, թե ինքն ինչպես եր
ահ ներշնչում դաժան նավապետներին և սովորեցնում
նրանց լավ վարվեցողության։

— Լոնգոնում, — լսեց Գոլովինը, — յես յեղել եմ ան-
թիվ-անհամար անզամ։ Զեմ ստելու, թե այդ քանի-
յերսրդ անզամն եր։ Մենք Հօնդոն յեկանք, խարիսխ-
ները զցեցինք և, արձակուրդ ստանալով, յես առա-
ջինն ափ իջա։ Ոմն բուս (հանրակառը) նստեցի ու
քաղաք սլացա։ Այն ժամանակ ավտոմոբիլները նույ-
նիսկ անզիւցների մոտ հազվագել եյին պատահում,
իսկ նավահանգստից քաղաք եյին զնում ձիաքարշ ոմ-
նիբուսներ։ Հինգ պեհս վճարելով՝ կարելի յեր հիա-
նալի տեղ ստանալ ծածկի վրա — սլացիր ու բոլորին
դիտիր՝ թոշունի թռիչքի բարձրությունից։

Են վեր յեկա զլիսավոր փողոցում, մի արժանա-
վայել հիմնարկ զտա, յերկու զավաթ ու զարեջուր խմե-
ցի, մեկ շիշ ել պահանջեցի ու ընկա մտածմունքների
մեջ։ Ի՞նչ անել, ինչնվ զքաղվել։ Յերեկվա ժամի յեր-
կուսն եր միայն, իսկ պետք ե ասել, վոր Հօնդոնը շատ
տիսուր քաղաք և, Կիրակի որերը, յերբ բոլորն աղատ
են և փոչ վոր չի աշխատում, բոլոր թատրոններն ու
ճաշարանները փակվում են, իսկ փողոցներում ու այ-
գիներում, ինչպես յեկեղեցում, սաղմոսներ են յերգում։
Վոչ վոքի խորհուրդ չեմ տա Հօնդոն հասնել կիրակի
որը, կամ շարաթ որը յերեկոյան։ Մեկ անզամ յես,
անզիւցներան սովորութներին անծանոթ լինելով, կանգ
առա թատրոններից մեկի մոտ։ Տեսնեմ՝ ամբողջ

նստած՝ բոցման՝ Բակուտայի շուրջը մոտ տաս մարդ
եր հավաքել։ Ամրող նավակազմին հայտնի յեր բոց-
մանի՝ մտացածին՝ բաներ պատմելու անընդորինակելի
հմտությունը, և դեկապետը, վորապեսդի չխանգարի,
աննկատելի կերպով հեռացավ, մտավ ստվերի մեջ։

Գոլովինի աշքերի առաջ փափել եր հանդարտ ծովը։
Ծովենախն առանց աղմուկի սլանում եր արեի տակ և
կարծես չեր կպչում ջրին։

Սպիտակ ոսպիտիցիկի վրա գողղողում եյին շող-
քերը, մակոււկների տակ բաց-կապույտ սավերներ եյին
ճոճվում։ Բոպե առ բոպե շոգը խստանում եր։

Պարանի կապոցի վրա նստած բոցման Բակու-
տան վրայից զցեց բաձկոնը և մնաց զոլավոր քաթի-
պարու։ Ահազին բոցմանին շրջապատող նավաստիները
նրա մոտ վարտ պատանիներ եյին յերեսում։ Բակու-
տան ինչ վոր բան եր հուռում մ բարակ պարանից, ժա-
մանա, առ ժամանակ ատամներով պնդացնում եր կա-
պերը և տաքացած՝ ինչ վոր պատմություն եր անում։

Գոլովինը աննշարելի կերպով մոտեցավ և, ու-
ղիուցիկի պատին հենվելով, ականջ եր գնում։

Բոցմանի վոտների մոտ, իրեն ծնկները գրկած,
նստե, եր նավակազմի ամենա, երիտասարդ նավաստին—
տասնյոթ տարեկան Անդրեյ Մուռաշովը։ Նա առանձ-
նապես անհագ ուշագրությամբ եր լսում բոցմանին։
Անդրեյն անհանդիսա շարժումներ անելով, անկեղծ
բերկանքով ունկնդրում եր Բակուտայի արտասանած
յուրաքանչյուր բառը, և այդ հանգամանքը մեծ հա-
ճույքով նկատում եր Բակուտան։ Մնացած նավաստի-
ները, լարված ուշագրություն ձեացնելով, խորաման-
կուեն աչքով-ունքով եյին անում իբրա։

Արշալույսին շոգենախն արթնացնող անսպասելի
արեգակը, ինչպես յերեսում ե, տաքացրել եր բոցմանի
հիշողությունը, և այժմ Բակուտան պատմում եր իր
անհամար պատմվածքներից մեկը, թե ինքն ինչպես եր
առ ներշնչում դաժան նավապետներին և սովորեցնում
նրանց լավ փարփառության։

— Լոնդոնում, — լսեց Գոլովինը, — յես յեղել եմ ան-
թիվ-տնհամար անզամ։ Չեմ ստեղու, թե այդ քանի-
յերորդ անզամն եր։ Մենք Լոնդոն յեկանք, խարիսխ-
ները զցեցինք և, արձակուրդ ստանալով, յես առա-
ջինն ափ իջա։ Ոմն բուս (հանրակառը) նատեցի ու
քաղաք սլացա։ Այն ժամանակ ավտոմոբիլները նույ-
նիսկ անզլիացների մոտ հազվագեպ եյին պատահում,
իսկ նավահանգստից քաղաք եյին գնում ձիաքարշ ոմ-
նիբուսներ։ Հինգ պենս վճարելով՝ կարելի յեր հիա-
նալի տեղ ստանալ ծածկի վրա—սլացիր ու բոլորին
դիտիր՝ թուչունի թափչքի բարձրությունից։

Ես վեր յեկա զլխավոր փողոցում, մի արժանա-
վայել հիմնարկ զտա, յերկու զավաթ սև զարեջուր խմե-
ցի, մեկ շիշ ել պահունչեցի ու ընկա մտածմունքների
մեջ։ Ի՞նչ անել, ինչով զրազվել։ Յերեկվա ժամի յեր-
կուսն եր միայն, իսկ պետք ե ասել, վոր Լոնդոնը շատ
տիտուր քաղաք ե, Կիբակի որերը, յերբ բոլորն ազատ
են և վոչ վոր չի աշխատում, բոլոր թատրոններն ու
ճաշարանները փակվում են, իսկ փողոցներում ու այ-
դիներում, ինչպես յեկեղեցում, սաղմուներ են յերգում։
Վոչ վորի խորհուրդ չեմ տա Լոնդոն հասնել կիբակի
որը, կամ շարաթ որը յերեկոյան։ Մեկ անզամ յես,
անզլիական սովորութներին անծանոթ լինելով, կանգ
առա թատրոններից մեկի մոտ։ Տեսնեմ՝ ամբողջ

պատով մեկ ահազին հայտարարություններ են փակցված: Պարտերի մի թանգաղին տոմս դնեցի և նստել սպասում եւ, թե ի՞րք պիտի վարագույրը բարձրանա: Բայց թատրոնում չեյին շտապում: Բեմ դուրս յեկավ ֆրակ հաղած մի ծերուկ և սկսեց խոսել: Յես համրերությունս հավաքեցի ու լսում եմ: Սպասում եմ, վոր ահա վերջացնելու յի, ներկայացումն և սկսվելու. ծերուկը ֆրակը կհանի ու կսկսի ֆոկուսներ ցույց տալ: Բայց անցավ կես ժամ, մի ժամ, ծերուկն անընդհատ խոսում, հայ խոսում ե, ձեռքը թափահարում, վոռնում, իսկ մեկ անգամ նույնիսկ լաց յեղավ: Հետ նայեցի, և ինչկանայք հանել են թաշկինակները և նույնպես ալիս են, հեծկլտալով լալիս:

«Միսս, — զիսեցի յես հարիսանուհուս և ձեռք ու վոտով ցույց տալով, հարցը — յերբ և սկսվելու ներկայացումը»:

Նա քիթը մաքրեց, նայեց ինձ ու ձեռքս զրեց մի զիրք՝ կազմի վրա խաչ նկարած: Վոչինչ չեմ հասկանում: Բարկությունից մոնչում եմ, սակայն սպասում: Ծերուկը յերկու ժամ խոսեց, հետո բոլորը միասին վոտքի յելան, սադոսս յերգեցին ու ցրվեցին: Այդ որվանից յես վախենում եմ թատրոններ դնալ, նույնիսկ յեթե հայտարարության վրա շեկ կին նկարած լինի: Ասենավտահելին կրկեսն ե, Բայց կրկեսը յերեկոյան ե բացգում: Իսկ ինչպես սպանել ժամանակը: Նստել գարեջրատանը, անվերջ խմել:

Ճիշտն ասած՝ յես յերբեք չեյի կոնծում, ինչպես մեր ծովագնացներից շատերը, և զրա շնորհիվ մոտս միշտ զրամ եիր ունենում և միայն անվանի նավերով եյի լողում: Յես միշտ խարություն անող մարդ եմ

յեղել և իմ վարկը չեմ զցել: Այսպիսով, գարեջրին վերջ տալով, յես փողոց դուրս յեկա, մտադրվելով կրկես զնալ: Բայց հանկարծ, չզիտեմ ինչնու, իմ մեջ միտք ծագեց՝ այսոր այնպես զվարձանալու, վոր ամբողջ կրանքումս չմոռացվի, և վոր ուրիշներն ել իմանան: Նախ և առաջ պետք է ձեզ ասեմ, վոր «Վարյագի» նավապետը, վորի վրա յես այն ժամանակ առաջին կարգի նավաստի եյի, դաժանագույն սատանա յեր: Պարզ ե, վոր Բակուտափի նման նավաստու նկատմամբ նավապետի բնավորությունը չեր արտահայտվում, բայց իմ մեջ միտք ծագեց այդ կոպիտ մարդուն խրատել և քթին տալ: Ինչ մտածեցի՝ այն կատարեցի: Չորս կողմաղիտելով արագ սլանում եմ առաջնակարգ խանութը: Դոնավահը, խանութի տերը և վաճառըրդուհիները՝ բռնըն անմիջապես հասկացան, թե ով և իրենց մոտ յեկել: Վիրաթղթապանակս հանեցի զրի վաճառսեղանին. «Հապա, ինչ ունեք, ամենառաջարավ բանիրից: Բոլորին վերև կանչեք»: Հրամայեցի ու ձգեցի բազկաթուին:

Բակուտան ցույց տվեց, թե ինչ վեհությամբ եր նստել բազկաթուին, ու շարունակեց.

— Մի վայրկյանում վաճառըրդուհիները, — ինչպես հարկն ե՝ բռնըն ել չտեսնված զեղեցկուհիներ, հանում են կոշիկներս, իրենց ձեռքերով հագցնում են զանազան գույնի մետաքսե գուլպաներ, կոշիկներ չափում: Իսկ յես նստել եմ ու միայն ուսերս եմ վեր քաշում: Կես ժամից, յերբ յես խանութից դուրս յեկա, վոչ վոք չեր ճանաչի իվան Բակուտային: Հազիս՝ Լոնդոնի ամենալավ ֆրակն եր, ոսլոյած կրծքակալը գլխիս ցիկնոր, ձեռներիս՝ սպիտակ լաքե ձեռնոցներ, վատնե-

պատով մեկ ահազին հայտարարություններ են փակցված: Պարտերի մի թանգաղին տոմս գնեցի և նստել սպասում եւ, թե ի՞նքը պիտի վարագույրը բարձրանա: Բայց թատրոնում շեյխն շտապում, թեմ դուրս յեկավ ֆրակ հաղած մի ծերուկ և սկսեց խօսել: Յես համրերությունս հավաքեցի ու լսում եմ: Սպասում եմ, վոր ահա վերջացնելու յի, ներկայացումն և սկսվելու, ծերուկը ֆրակը կհանի ու կսկսի ֆոկուներ ցույց տալ: Բայց անցավ կես ժամ, մի ժամ, ծերուկն անընդհատ խոսում, հայ խոսում ե, ձեռքը թափահարում, վոռնում, իսկ մեկ անգամ նույնիսկ լաց յեղավ, Հետ նայեցի, և ինչ.կանայք հանել են թաշկինակները և նույնպես ալիս են, հեծկլտալով լալիս:

«Միսս, — զիմեցի յես հարեանուհուս և ձեռք ու վոտով ցույց տալով, հարցըրի—յի՞րը և սկսվելու ներկայացումը»:

Նա քիթը մաքրեց, նայեց ինձ ու ձեռքս դրեց մի զիրք՝ կազմի վրա խաչ նկարած: Վոչինչ չեմ հասկանում: Բարկությունից մոնչում եմ, սակայն սպառնում: Ծերուկը յերկու ժամ խոսեց, հետո բոլորը միասին վոտքի յելան, սաղմոս յերգեցին: Այդ որվանից յես վախենում եմ թատրոններ գնալ, նույնիսկ յեթե հայտարարության վրա շեկ կին նկարած լինի: Ամենավստահելին կրկեսն ե: Բայց կրկեսը յերեկոյան և բացգում: իսկ ինչպես սպանել ժամանակը: Նստել գարեջրատանը, անվերջ խմբել:

Ճիշտն ասած՝ յես յերբեք չեյի կոնծում, ինչպես մեր ծովագնացներից շատերը, և դրա շնորհիվ մոտամիշտ զրամ եւի ունենում և միայն անվանի նավերով եյի լողում: Յես միշտ խարություն անող մարդ եմ

յեղել և իմ վարկը չեմ զցել: Այսպիսով, զարեջրին վերջ տալով, յես փողոց դուրս յեկա, մտադրվելով կրկես զնալ: Բայց հանկարծ, չզիտեմ ինչն, իմ մեջ միտք ծագեց՝ այսոր այնպես զվարձանալու, վոր ամբողջ կրանքումս չմոռացվի, և վոր ուրիշներն ել իմանան: Նախ և առաջ պետք է ձեզ ասեմ, վոր Շվարյագին նավապետը, վորի վրա յես այն ժամանակ առաջին կարգի նավասորի եյի, զաժանագույն սատանա յեր: Պարզ ե, վոր Բակուտաի նման նավաստու նկատմամբ նավապետի ընավորությունը չեր արտահայտվում, բայց իմ մեջ միտք ծագեց այդ կոպիտ մարդուն խրատել և քթին տալ: Ինչ մտածեցի՝ այն կատարեցի: Զօրս կողմանից ելով արագ սլանում եմ առաջնակարդ խանութը: Դռնապահը, խանութի տերը և վաճառորդուհները՝ բոլորն անմիջապես հասկացան, թե ով և իրենց մոտ յեկել: Վիրաթիթապանակս հանեցի զրի վաճառսահղանին: «Հապա, ինչ ունեք, ամենառոշագրավ բանիրից: Բոլորին վերև կանչեք»: Հրամայեցի ու ձգվեցի բաղկաթուին:

Բակուտան ցույց տվեց, թե ինչ վեհությամբ եր նստել բաղկաթուին, ու շարունակեց.

— Մի վայրկյանում վաճառորդուհները, — ինչպես հարկն ե՝ բոլորն ել չտեսնված զեղեցկուհիներ, հանում են կոշիկներս, իրենց ձեռքերով հագցնում են զանագան գույնի մետաքսե գուլպաներ, կոշիկներ չափում: Իսկ յես նստել եմ ու միայն ուսերս եմ վեր քաշում: Կես ժամից, յերբ յես խանութից դուրս յեկա, վոչ վոչ չեր ճանաչի իվան Բակուտային: Հաղիս՝ Լոնդոնի ամենալավ ֆրակն եր, ոսլոյած կրծքակալ, զլխիս ցիլինդր, ձեռներիս՝ սպիտակ լաքե ձեռնոցներ, վատնե-

թիս՝ լաքե կոշիկներ։ Ծիծաղի համար շան արծաթե դնչով մի ձեռնափայտ գնեցի, շվացնելով կառք կանչեցի։ Ամբողջ ուժով, սիդարը ծխելով, ոլանում եմ նավահանգիստ։ Կառապանա՝ կանաչ լիվրեյով, ցիլինդրով, շատ՝ յերկար մտրակով, ձիերս՝ առաջնակարգ—թագավորի կառք։ Ուրիշ բան՝ չեն, իսկ ձիեր յես լուզ եմ ճանաչում։ Յեվ ահա այսպիսով յես զալիս եմ մեր նավի մոտ, հանդիսավորության համար զանդաղորեն սահում եմ բարձերից, դիտմամբ՝ զանդաղելով հանում եմ թղթապանակս ու կառապանին նաշայ եմ տալիս այնպես, վոր նա գիտենա և հիշի, թե ինչ ասել ե ոռու ծովագնաց։ Վճարում եմ դրամը և ինքս տեսնում եմ, թե հերթափոխն ինչպես ե վազում գեղի նավապետի սենյակը։ Ցիլինդրս իջեցնում եմ աչքերիս և լսում եմ, թե նավապետն ինչպես ե դուրս վաղում ու ամրող ուժով գոռում։ «Բոցման, դիխավոր նավասանդուխը»։ Աղկմեց գլխավոր նավասանդուխը։ Յես շարժում եմ ձեռնափայտս և բարձրանում եմ նավը։ Նավապետը վազում ե ինձ դիմավորելու, պատիվ ե տալիս, թեանցուկ ե անում ինձ ու վերև տանում։

«Զերդ պայծառափայլություն,—անհանգիստ շարժվում ե նա և չգիտի, թե ինչպես մեծարի ինձ,—վնրաքան յերջանիկ եմ յես... Ու՞մ հետ պատիվ ունեմ...»

Առանց խոսք ասելու, հետ եմ դառնում ու քայլում գեղի նավաստիների սենյակը։

Նավապետն առաջ գ վազում, կանգնեցնում ե ինձ, ցույց ե տալիս դահլիճը։

«Այդտեղ չե։ Թույլ տվեք ներկայանալու... ներեցէք, չեյինք սպասում, ներեցէք, հարգելի պարօն»։

Նա ձեռքն ե մեկնում, իսկ յես՝ մեջքս եմ դարձ-

նում ու քայլում դեպի նավաստիների սենյակը։

«Այդ ուր եք դնում։ Համեցէք ընդառնուր նավաստինյակը։ Դուք սխալվում եք, ձերդ պայծառափայլություն...»

Իսկ յես՝ վոչ մի ուշադրություն, ինձ գցում եմ նավաստիների սենյակն ու, չը՞մփ իմ մահճակի վրա։

Նավապետը սառեցմաց։ Առանց ժամանակ կորցնելու, յես շպրտում եմ ցիլինդրը, հանում եմ ֆրակը, կարծես այդ բոլորն ինձ շոգենում են։

«Բակուտասա...» մռնչում ե նավապետը և... ուշաթափվում ե։

— Լսեցիր, — հիացմունքով ծիծաղում ե բոցմանը, թեքվելով դեպի ցնցիած Մուրաշնը։ — Այ թե ինչեր ե արել Բակուտան իր հանգուգն տարիներին։

— Այ թե խոսում ե այս մարդը, — մեկը զարմացած բացականչեց ու նկնդիրների խմբից, — ինչպես ստված ջութակի վրա։

— Այդ ինչպես յեղավ, վոր նավապետը քեզ չըճանաչեց, — հարցրեց մյուսը։

— Յերդվում եմ արեսիս, — բացականչեց հնոցապան վիշնյակովը, — ինձ կախեք, յեթե յես այս պատմությունն առնվազն վեց հարյուր անգամ լսած չլինեմ։ Բոլոր նովահանգիստներում հին ծովագնացներն այդ պատմում են... բառացի նույնը։

Բակուտան վրդովված բարձրացրեց գլուխը, — նա արդեն պատրաստ եր հարձակվելու հանդուգն հնոցապանի վրա, բայց կշուղադատելով՝ ծնկներից գցեց լաւանը և հիացմունքով ասաց։

— Այլ կերպ չի ել կարող լինել, Անշուշտ բոլոր

ծովերում այդ պատմում են: Այժմ ինքներդ տեսնում
եք... — նավառտիների վրա հպարտ հայացք զցելով
բացականչեց նա: — Իվան Բակուտային ճանաշում են
բոլոր ծովերում:

Այժմ բոցմանին վոչ վոք չեր կարող զսպել, և
նա անմիջապես նոր պատմություն կսկսեր, յեթե մեկը
հանկարծ չշնչար.

— Լեռնարդ Կարլովիչը զալիս ե:

Վարկենապես լուռթյուն տիրեց:

Զախ նավեղրով դեպի նավախելն եր գնում նա
վապետը, ձեռքերը մեջքին դրած, մի քիչ կռացած:
Բակուտան լոեց, կերպարանափոխվեց և իր մարմնի
ծանրության համեմատ զարմանալի արագությամբ վեր
ցատկեց պարանից: Ամբողջ հասակովը մեկ ձգվելով և
գլուխը ցցելով՝ նա, կարծեք զեկուցում տալով, դուռաց:

— Բարի լուրս, Լեռնարդ Կարլովիչ: Պատիվ
ունեմ լավ յեղանակը շնորհափորելու:


Ապա հոնքերը խոճուելով զարձալ նավաստինե-
րին ու մռնչաց.

— Այս ի՞նչ բանթող ե: Ի՞նչու ձեր տեղերում
չեք: Այս ի՞նչ կարգ ու կանոն ե:

Նավապետը կանգ առավ Բակուտայի առաջ և
հետաքրքրությամբ նաւեց նրա դեմքին:

— Կամաց, — հանդարտ շարժումով կանգնեցրեց
նա փութաջան բոցմանին, — չի վոր գեռ ժամի ութը
չկա:

Կարծես շքերթի պահին սառած հսկա-բոցմանն ու
նավապետը տարուինակ տեսարան եյին ներկայաց-
նում: Հեռվից այդ յերկու մարդուն, յերբ նրանք իրար
մոտ եյին կանգնած, չեր կարելի առանց ժպիտի նայել:



ՅԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

Նավապետ Կլանդի վերջին ուխար

Կռացած, զարմանալի փոքրիկ մարդուկը կանգ
առավ հսկա Բակուտայի առաջ: Գլուխը կողքի թեքհ-
լով՝ նա ձեռքը տարավ դեպի գլխարկի հովարը և
վողջունեց նավի տնծնակազմին: Ապա ձեռքով շփեց
փարթամ ալեզարդ բակենբարդները:

Նավապետ Կլանդը հեռվից նման եր ծովային
տարագ հագած յերեխայի: Բայց ուռուցիկ գորշ աշ-
քերով կնձռոտ դեմքը և ձերմալ մազերը վկայում
եյին նրա մեծ տարիքի մասին: Վոչ վոք չգիտեր,
թե նա քանի տարեկան ե, թեև փորձված ծովագնաց-
ները վաղուց ճանաչում և հիշում եյին նրան իբրև
հյուսիսային ծովերի փորձված, ճին նավապետի:

Կլանգը դրապանից հանեց վոսկեզույն յերկաթե
մի տուփ և մեկնեց բոցմանին:

Նավապետը չեր ծխում և հետը միշտ մոնպաս
ուներ:

— Զափաղանց ջնորհակալ եմ, — ասաց հրապուր-
ված Բակուտան և զգուշությամբ ընտրեց զնդասեղի
նման մի մոնպաս:

Նախկին ձկով, առանց մի խոսք ասելու, Կլանգը
շուր լեկավ կրունկների վրա և շարժվեց դեպի ընդ-
հանուր նավասենյակը:

Սակայն պետք ե պատմել, թե այդ ինչ նավ եր
վերադառնում կամչատկայից և ինչ անձնակազմ ուշ
ներ այդ նավը:

Սապցահատի տիպի փոքր շոգենալ «Աստղագետը»
500 տոնն ջրածավալով, հունիսի սկզբիներին թողել եր
վլադիկոստոկը և լողում եր կամչատկայի ծովափին,
բեռներ եր տանում ստանիցաների ու ձմեռանոցների
համար: Հնացած, զառամ «Աստղագետն» իր վերջին
ույյսն եր կատարում: Վլադիվոստոկ վերադառնալուց
հետո նա կամ պետք ե մնար նավահանգստում աշխատե-
լու համար, կամ, ավելի շուտ, պետք ե տարվեր քանդվե-
լու: Նավի հին անձնակազմը լսելով, վոր այդ ույյսից
հետո նավապետը հրաժարական ե տալու, վաղորոք
հեռացալ «Աստղագետից», և ույյսին մեծ պատրաստա-
կամությամբ մասնակցեց յերիտասարդությունը, ուշ
րախանալով կամչատկան տեսնելու հնարավորության
համար:

Ծերերից «Աստղագետի» վրա մնաց միայն բոց-
ման Բակուտան, վորը վերջին հինգ տարիների ըն-
թացքում լողում եր նավապետ Կլանգի հետ:

Նորեկներից բաղկացած նավակազմն աշխատում
եր յերիտասարդական ամբողջ ջանասիրությամբ, և
դրա հետեւլանքով «Աստղագետը» ոեկորդային արա-
գությամբ կատարեց իր լողենթացը: Կամչատկայի
Պետրոպավլովսկում նավակազմին պատվով դիմավո-
րեցին: Հանդիսավոր նիստում մեկն առաջարկեց վեր-
անվանել նավը: Ծովագնացներն ուրախությամբ ըն-
դունեցին այդ միտքը և տեղն ու տեղը նոր, սեգ-
անուն հասրեցին — «Խորհուրդների աստղ»:

Հետեւյալ որը նավաստիներն ուղում եյին նավա-
քթի վրա ջնջել նավի հին անվան մաշված տառերը և
նոր անունը գրել, բայց նավապետ Կլանգն արգելեց
այդ, վկայակոչելով որենքը: Նա զեմ չեր նավի վեր-
անվանմանը, սակայն դրա համար պետք եր Զրժողկո-
մատի թույլավությունը ստանալ: Խորառնավատորմի
ներկայացուցիչն ուրախությամբ խոստացավ համա-
պատասխան կազմակերպությունների թույլավությունն
ստանալ, և այդ որվանից նավակազմն այլ կերպ չեր
անվանում իր նավը, քան յեթե «Խորհուրդների աստղ»:

Այժմ, ընթերցողին նավի ու նավակազմի հետ
ծանոթացնելուց հետո, մենք կարող ենք շարունակել
մեր պատմվածքը:

Այդ առավոտ, սովորական ժամին, նավի վրա
սկսվեցին նավային աշխատանքները:

Բակուտան ամրացրեց խողովակը, և նավաստի-
ները, փրփրոտ շիթից խույս տալով, սկսեցին արագ
ու յեռանգագին մաքրել տախտակամածը:

Դիշերգա անձրեկից լվացված տախտակամածը,
վորն առանց այդ ել մաքուր եր, հանդիսավոր, վար-
դագույն դարձավ: Բոցմանն Անդրեյ Մուրաշին հրա-

մայեց վուշածեթով մաքրել կտմըջակը,— այդ թեթեվ
աշխատանք եր. բացի այդ, կամրջակի կողքին նա-
վաստիները դիմհարներն ելին ներկում, իսկ յերբ
նավաստիները ներկում են, ժամերը շատ արագ են
անցնում՝ խոսակցություններով ու կատակներով. Նա-
վաստի Դրուժկան, վրձինը շարժելով, հաճախ մի քիչ
հեռանում եր, սպիտակ շապարի դույլը ձեռքին, և զըռ-
խըն ուսին թեքելով՝ սքանչանում եր իր վարպետու-
թյամբ:

Փայտե սանդալներ հագած հնոցապան Գրունինը
տախտակամած դուրս վազեց հովանալու համար: Վըզ-
կապի ծայրերով մաքրելով բորբոքված, ածխի փոշով
կեղտոտված ղեմքը, նա նախանձով նայեց դիմհար-
ները ներկող Դրուժկոյին և, ոդ կուլ տալով, ասաց.

— Լսէք, մահստրո, դուք վժրտեղ եք ակադե-
միան ավարտել:

Դրուժկոն ավելի մեծ բավականությամբ վրձի-
նը քսեց դիմհարին, ու նույնիսկ գլուխը հետ չդարձ-
նելով գեղի հնոցապանը, անբռնադատ սիրալիրու-
թյամբ պատասխանեց.

— Իհարկե, իտալիայում:

Ցեվ, վրձինը նազանքով մատների ծայրով բըռ-
նելով, նա կոկետությամբ շրթունքները փքելով ավե-
լացրեց.

— Հմուտ մարդն անշուշտ անմիջապես կվորոշի
այդ, վոճից! Սակայն չի կարելի պահանջկոտ լինել
հնոցապանի նկատմամբ...

Ի բավականություն ինավաստիների, շփոթված
հնոցապանը, տեղում պատվելուց հետո, ավելի բար-
վոք համարեց անհետանալ:

Այդ ժամանակ ընդհանուր նավասենյակում ա-
մառային կիտել հագած կեռնարդ կարլովիչ Կլանգը
շրջում եր սեղանի մոտ, թրլկթրիկացներով բարձր հո-
լանդական կոշիկներով: Վաղուց ի վեր կեռնարդ կար-
լովիչը սիրում եր ազատ, հանգարտ ժամերին հագնել
այդ թեթև փայտե վոտնամանները, վորոնք փոխարի-
նում եյին տնային տուֆլիներին և, ինչպես կասկածում
եյին շատերը, զուրեկան եյին նրան այն պատճառով,
վոր նկատելի կերպով բարձրացնում եյին նրա հասակը:

— Թույլ տվեք ինձ ել իմ հերթին, — ասաց Գո-
լովինը նավապետին, — շնորհավորել ձեզ հիանալի յե-
ղանակի համար:

Այս պարզեւ ե վերջին ոեյսի համար, — բարեսիրտ
ժպտաց կլանգը: Հույս ունեմ, վոր քառասուն տարվա
ընթացքում լիս արժանացել եմ սրան... ԶԵ վոր այս
իմ վերջին նավագնացությունն եւ:

— Ո՛, վնչ բնչպես կարելի լի, — քաղաքավա-
րությունից բողոքեց ղեկապետը, — յես դեռ Վլադի-
վոստոկում լոել եմ, վոր ձեզ փոխարեկու յեն հարավ .

— Կուրորտայինների հետ Սոչիից Գագրի զբու-
նելու համար, — քմծիծազով ընդհատեց նրան կլանգը:
— ԶԵ, թանկապին ղեկապետ, ինձ ուղղակի ուղում
են թոշակի գրքույկ ընծայել Բայց, թույլ տվեք խոս-
տովանվել, յես չեմ պատկերացնում, թե կեռնարդ
կլանգն ինչպես պետք ե կտրոններ խուզի...

Ցերկուսի համար ել անդուրեկան խոսակցու-
թյունը ժամանակին ընդհատեց հավաքարարուհին,
վոր յեկավ սեղանը պատրաստելու:

Կեսորին, հերթափոխության ժամանակ, Գոլովինը
փոխարինեց յերկրորդ ղեկապետ Կրեմնյովին: Ցերեկ-
վա ժամի 2-ին ուժեղ քամի փշեց, մի ժամ անց յեր-


կինքն ամպերով ծածկվեց, և սկսվեց անձրևը: Վրա
հասած մթնշաղի մեջ, ծովի վրա սկսեցին ահավոր
ալիքներ շարժվել, իսկ գիշերվա դեմ նավը, վազքը
դանդաղեցնելով, դրեյֆի կանդնեց: Ամայացած տախ-
տակամածի վրա անշմար լույս եր տալիս աղոտ
լապտերը: Փրփրուն ալիքները զարնվում եյին նա-
վեղըին:

Նավաստիների սենյակում այդ գիշեր յերկար
ժամանակ չեյին քնում՝ հիշելով անցած արեւոտ որը:

Մոայլված Բակուտամն բացասարար տրամադրված
ունկնդրում եր միջնորմի այն կողմից լսվող նավաս-
տիների ծիծաղին և խրատում եր Անդրեյ Մուրաշեին:

— Այսոր տղաները շատ ծիծաղեցին, հայտնի
չե, թե ինչի համար եյին ուրախացել: Իսկ այժմ ծովն
իրեն ցույց կտա... Տես թե ծովային դեկապետի մոտ
չգնանք հանկարծ... Գնա քանի ժամանակ կա, պառ-
կիր, քնի՞ր... Զգում եմ, վոր այսոր առանց ավրալի
գործը յուա չի գնա...»

Ծանը նախազգացումով հեռացավ Անդրեյը բոց-
մանի նեղ խցիկից: Սակայն նավաստիների սենյակը
վերադառնալով, նա իսկույն մոռացավ մոայլ նախա-
գուշակումները և ուրախացավ: Վայրկենապես նա
մոռացավ և՝ փոթորիկը, և՝ որորումը, այնքան տաք
ու հաճելի յեր նավաստիների աղմկալի սենյակում:
Դրուժկոն պատմում եր, թու ինչպես անգլիական նա-
վահանգիստներից մեկում ժամացույցները կիրոյով
եյին ծախում, և, քանի վոր վոչ վոք չեր հավատում
նրան, նա յերդվում եր, թե ինքն անձամբ գնել և
500 գրամ ժամացույց ու բաժանել և Ոգեսսայում ծա-



Նավը գգալիուեն թեթվեց

նոթ աղջիկներին։ Սեղանի մոտ նստած հնոցապան
Զոլոտովը լրջրեն, մահճակի վրա պառկած նավաս-
տի Գրիգորենկոյի թելադրությամբ, մի հաստ տեսրի
մեջ եր գրում լերզի բառերը, Գրիգորենկոն թելա-
դրում եր վանկերով։

— «Դու գլուխդ իմ կրծքին թեքեցիր, — արտա-
սանում եր Գրիգորենկոն, — ... և կամաց շնչացիր...»

— Կրկնիր, — փնթփնթաց հնոցապանը։

— Լսեք, սեր, — մահճակից ցատկելով, անսպա-
սելի կերպով հայտարարեց Գրիգորենկոն, — դուք ինչ-
վոր բան եք խոստացել ինձ, յեթե լես թույլ տամ,
վոր դուք դրի առնեք։

— Դու վերջացնենք, — անհամբերությամբ ա-
սաց հնոցապանը, — հետո կստանաս, Դեհ, շարունա-
կությունն ինչպես ե: Ի՞նչ շնչաց նա կամաց։

— Նա ըսեց հավիտյան, — հետո քաշվելով մահճա-
կի վրա՝ կտրեց նավաստին, — մինչև սեղանին չդը-
նեք, նա լոելու յե ձկան պես։

— Կտամ, — աղաչեց հնոցապանը: — Ի՞նչու ժա-
մանակ կորցնենք: Շարունակությունն ինչպես ե:

Սակայն Գրիգորենկոն անդրդվելի յեր: Զոլոտո-
վը ծանր հառաչեց, գնաց իր խցիկը և բերեց ծովա-
ցուլի վոսկրից պատրաստած ծխամորճ: Գրիգորենկոն
ծխամորճը դրեց գրպանն ու նորից պառկեց մահճա-
կի վրա:

— Գրիր, — ծանրակշուռաթյամբ ասաց նա, — «Յեկ
կամաց շնչացիր՝ տրտմությունը մոռացիր»:

Գրիգորենկոն չկարողացավ նախադասությունը
վերջացնել: Նավը կտրուկ կերպով թեքվեց, թանա-
քամանը գլորվեց սեղանի վրայով, թանաքոտելով

հնոցապանի տեսրը: Բոլորը մի ակնթարթում վեր
թոան և ականջ դրին: Կամրջակից լսվեց սուր, տագ-
նապալից, վողորմագին սուլոց:

— Բոլորը վերեւ:

Հետագա անցքերն այնպիսի շեշտակի արագու-
թյամբ զարդացան, վոր, կատաղի փոթորիկն ու ավ-
րալը նկարագրելու փոխարեն, ավելի լավ ե ըստ հեր-
թափոխության մատյանի պատմենք, թե նավի վրա
ինչ անցուղարձ տեղի ունեցավ բացմանի սուլոցը
լովելուց հետո:

Ժամի 22-ին մոտ քամին վչում եր 12 բալ ու-
ժով: Տայֆուն եր այդ:

Կեսդիշերին նավամբարում պոկվեց ու թուալ ցե-
մենուը և ճակատի միջով ներս խուժեց ջուրը:

Յերբ լույսը բացվեց, յերկինքն ավելի ցածրացավ
ծովի վրա, և փոքր շողենավը, վերև թռչելով, կար-
ծես լսրդում եր փիլուն, պատառուած ամպերի մեջ։

Տախտակամածից ջուրն արգեն վաղուց տարել
եր ամբողջ բեռը: Բոլոր անցքերում խթխլթում եր
ջուրը, իսկ վերև, ջարդված կամրջակի վրա, բարձր
ոճիքով ծանր մուշտակը հաղած, փքված՝ կանգնել
եր կեռնարդ կարլովիչը:

Նավաստիները, մինչև ծունկը ջրի մեջ սուզված,
տենդագին փակում եյին նավամբարի ծակատները:
Մյուսները դույլերով կրում եյին ջուրը:

Հնոցատանը, ուր նավապետի հրամանով իջել
եր Գոլովինը, հնոցներն արդեն հանգըրած եյին: Պեղ-
տոր, կեղասու ջուրը Փշոցով փրփրում եր զես ու գեն
վագող մարդկանց գոտների տակ:

Բակուտան և Անդրեյը չարչարվում եյին

Ջրհանի մոտ: Անդրեյը գուշատ եր և ուժասպառ եր յերեռմ: Այդ նրա առաջին սելոն եր և առաջին փոթորիկը:

Գարնանը նա յեկավ «Աստղագետի» վրա աշխատելու իբրև յերկրորդ կարգի նավաստի: Վճրքան յերջանիկ եր նա, յերբ նավազնացության գրասենյակում ստացավ ծովագնացի գրքույկը: Մանկությունից, ապա նավաշինարարական գործարանի ֆարբործուսում նա յերազում եր ծովագնաց դառնալ: Աշխատանքից հետո նա նավահանգիստ եր՝ գնում և չեր հեռանում այնտեղից մինչև ուշ գիշեր: Նա գիտեր բոլոր նավերը, նրանց մեքենաների հզորությունն ու ջրածավալը: Նույնիսկ գիշերները, խողովակների ու կայմերի ուրվանկարներով նա կարողանում եր ճանաչել յուրաքանչյուր նավ:

Յեկ ահա նրա յերազն իրականացավ: Նա ծովագնաց եւ, չին, ջարդված, կապկապած մնդուկը ձեռքին, հնամաշ հագուստը թեի տակ գրած, նա յեկավ նավը, վախինալով, նավասանդուղքի վրայով նրան հետեռմ եր լացող մորաքույրը—եր միակ մոտիկ մարդը:

Տախտակամած բարձրանալով, շփոթվելուց իրան կորցնելով, նա վայր դրեց սնդուկը և չգիտեր, թե ուր գնա:

Անդրեյն իր գեմքի քնքույշ, դեռևս մանկական կարմրությամբ, փափուկ շեկ մազերով, յերկշոտ գորշ տչքերով և ամբողջ գյուրաբեկ կաղմվածքով նմանվում եր աղջկա: Այդպես եր նա, յերբ նավ յեկավ և նավագնացության սկզբի որերին նավաստիները միշտ կատակ եյին անում, չելին թողնում, վոր նա անցնի:

Սակայն շուտով նրանք իմացան, վոր Անդրեյը ճապոնացիների ձեռքով չարչարված, սպանված պարտիզանի վորդի յե, վոր նրա հոր հետ միասին կորել եւ մայրը, և կատակները դադարեցին:

Անդրեյի մեղմությունը և աշխատունակությունը գրավեցին ծովագնացների համակրանքը: Ինչ վերաբերում եւ Բակուտային, նա հայտարարեց, վոր «Այս տղայից աղի ծովագնաց կստացվի»:

Կամչատկալի ույսը բարենպաստ լեղանակի պայմաններում անցավ, և Անդրեյն այժմ առաջին անգամն եր ապրում վատ յեղանակը: Նրա գեմքը զեղնել եր, նիհարել, շրմունքները գունատվել եյին, ճակատի վրա մաղերն իրար եյին կպել, նա զսպում եր իրեն, բայց բոլորը տեսնում եյին, թե ինչ դժվարությամբ եր շարժվում նա տախտակամածով, թե ինչպես եր տանջում ու ճնշում նրան ծովային հիվանդությունը: Բակուտան չեր թույլ տալիս, վոր նա իրենից հեռանա: Բոցմանը գտնում եր, վոր նորեկին անհրաժեշտ եւ վորքան կտրելի յե շատ լինել ողում և աշխատել անդադար, վորպեսզի հիվանդությունը մռանա: Նա ձևացնում եր, թե չի նկատում իր սիրելու դրությունը, իսկ վերջինս իր հերթին լարում եր ամբողջ ուլցը, վորպեսզի իր տանջանքները չարտահայտի վոչ մի բանով:

Գոլովինը կսացած, տախտակամածին կպչելով, անցավ կամբջակի վրա: Լեռնարդ կարլովիչը կանգնել եր՝ ձեռները հետեւ դրած, ու նրա թաց կրծքի վրա փայլում եր հեռադիտակը: Նրա ճախ այտի տակ շարժվում եր կոնֆետի գնդիկը:

— Գնացեք ուղիստի մոտ,—ասաց Կանգը, լեզ-

վով փոխադրելով կոնֆետն աջ այտի տակ,—այդ
տղայի մոտ կարծեք թե լրիվ ավարիա յե:

Ռազմիոխիկում քառս եր տիրում: Կոտրած կտոր-
կտոր յեղած դուռն ընկած եր շեմքին, իսկ նրա հե-
տեսիվ թափված ելին լամպերի փշրվածքներն ու լարերի
կտորտանըները: Վշտից տանջված ռադիսալ ծնկների
վրա սողում եր ջրափոսերի մեջ և հավաքում իր իրե-
րը: Զամարձակվելով աչք բարձրացնել ղեկապետի
վրա՝ հաղիվ լսելի ճայնով մըրմնջաց.

— Կուզենայի յիս մի ուրիշին տեսնել իմ տե-
ղում...

— Վերականգնելն անհնարին ե,—հարցը գո-
լովինը: — Դուք թնչեք եք կարողացել հաղորդել:

— Յես հինգ անգամ վերականգնել եմ... Անտե-
նան թելի պես ե կտրվում: Յերեք անգամ սկսել եմ
աշխատել, բայց... դուք ինքներդ տեսնում եք... Ղե-
կապետին չհաջողվեց նավի վրա տիրող դրության
մասին ղեկուցել նավապետին: Հենց վոր Գոլովինը
կանգնեց Լեռնարդ Կարլովիչի կողքին, նա թափով
դարձավ դեպի Գոլովինն ու մըրթմըրթաց. — Պատահեց
այնպիսի վատ բան, վոր չեյինք սպասի: Կողմացույց-
ները ապամազնիսացան: Բայց միևնույն ե, նրանք
շատ քիչ կոդնեյին մեզ,—կարծես ղեկապետին հույս
տալով ավելացրեց նա:

Շոգենավը յերեք որ ապրուբերվում եր սոսկալի
փոթորկի մեջ: Հազորդումը կանոնավորելու համար
ռադիստի բոլոր փորձերն անհաջողության ելին մատ-
նելվում: Յերբ նա հաղիվ կարողանում եր հրաշքով
կարգի բերել ապարատը և վերցնում եր բանալին,

քամին գցում եր անտենան: Զորբորդ որվա վերջում
կեռնարդ կարլովիչը վերջին կարգադրությունն արեց
Գոլովինին.

— Պատրաստեցք մակույկները: Յերբ կավար-
տեք, յեկեք իմ սենյակը: Կես ժամից վոչ ուշ շոգե-
նավը կխորտակվի:

Մակույկների հեծանների մոտ ղեկապետը հան-
դիպեց Բակուտային:

— Պատրաստ ե: Ամեն ինչ կարգին ե,—գոռաց
բոցմանը,—կարող եք ղեկուցել:

Գոլովինը գնաց նավապետի սենյակը: Նեղ, մութ
խցիկում, բազկաթոռի տակ սպիտակին ելին տալիս
հոլանդական փայտե սանդալները: Հատակի վրա գլոր-
վում եր կոկոսի ընկույզը, վոր վաղուց բերել եր նա-
վապետն արևադարձին յերկրներից: Կլանզը նստել
եր սեղանի մոտ և կանոնավոր գրանցումներ եր ա-
նում հերթափխության գրքույկում:

Գոլովինի հետ միաժամանակ նավասենյակ յեկավ
ուղիստը:

— Ռացիան վերջնականապես շարքից գուրս յե-
կավ, — ղեկուցեց նա:

— Գիտեմ, — զլուխը շարժեց նավապետը: — Ի
դեպ, յես հույս ունեմ, վոր ազդանշան տալիս դուք
տալիս ելիք նավի հին անունը — «Աստղագետ»:

— Վհչ, — վախեցած խոստվանեց ուղիստը, —
«Խորհուրդների աստղ»...

— Բայց չե վոր մեզ «Աստղագետ» անունով են
ձանաչում, — դեմքը կնճուտելով, բայց առանց ձախը
փոխելու ասաց նավապետը. — Յերեկի վոչ վոք չգիտե
վերանվանման մասին...

— Ներեցք... Յես կարծում եյի...

— Գնացեք... Մարշ դեպի տախտակամած, — հոգնած ձայնով ասաց Կլանդը: — Յես վոչ մի պահանջ չունեմ ձեզնից:

— Այդպես ուրեմն, — սիղանից վեր կենալով ասաց նավապետը, — մենք հենց հիմա պետք ե հեռանք նավից: Մարդիկ ցուցակագրված են. Գիտեն իրենց տեղերը: Շատ լսվէ: Դուք կնատեք առաջին մակույկը և հրամանատար կլինեք: Զառարկել: Յես այդպես եմ հրամայում: Գնացեք:

Գոլովինը դարձավ գնալու, բայց նովապետը բոնեց նրա ձեռքը:

— Սպասեցեք... Մնաս բարով անենք... — Մատների ծայրին բարձրանալով կեռնարդ Կարլովիչը մոտեցրեց զեկապետի գլուխն ու շտապելով համբուրեց նրա քունքը, — վերցրեք, խնդրեմ: — Նավապետը վկից իջեցրեց հեռադիտակն ու փաթաթեց նրա փոկը դեկապետի ձեռքին:

Առաջին մակույկում Գոլովինի ու Բակուտավի հետ միասին տեղավորվեցին ևս ինն հոգի: Մակույկը բարձրացավ ալիքի վրա, և Գոլովինը տեսավ, թե ինչպես աջ նավերից հեռացավ յերկրորդ մակույկը: Նրան թվաց, թե նավապետն այնուեղ չեր: Սակայն միթե կարելի յեր գիշերվա մշուշում նշմարել Կլանդի փոքր մարմինը:

Մակույկները նավը թողին ձիւտ ժամանակին, նավը խիստ թեքվեց, և հանկարծ Գոլովինին թվաց, թե մեկը վաղեց նավեղըով: Հետեւալ վայրկյանին դեկապետը, սադիոլսցիկի մոտ Կլանդին տեսնելով, դողաց ամբողջ մարմնով:

— Թիավարեցք դեպի նավը, — իրեն կորցրած գոյնաց նա Բակուտավի վրա — նավապետը մնացել ե:

— Զհամարձակվեք, — լավեց հեռվից Կլանդի ձայնը: — Յես հրամակում եմ չմոտենալ:

Մակույկն ամեն ըպես կարող եր շրջվել բայց Բակուտան դարձրեց զեկը, և բոլորն իրար բռնելով վոտքի կանգնեցին: Բոլորը տեսան, թե ինչպես նավապետը բարձրացավ ոսդիոլսցիկի տանիքը և բռնեց կայմից: Նրա ձեռքին պարան յերեաց: Նա փաթաթեց պարանը կայմին, թերերի տակից կապեց իրեն, թափահարեց գլխարկը և ձայն տվեց.

— Ծնաք բարնվ, բարեկամներս...

— Առաջ, — գոչեց Գոլովինը և, առանց յերկար մտածելու, թռավ տեղից, վոր իրեն ջուրը գցի:

Բայց այդ բովելին «Խորհուրդների աստղը» ծանր որորվելով, անհայտացավ ջրի տակ: Բակուտան պինդ բռնել եր ցնցված Գոլովինին:



ՅԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ԿՈՐԾԱՆՎԱԾԱԾ ՇՈԳԵՆԱՎԻ ՄԱԿՈՒՑԿՐ

Շոգենավը կործանվեց նոյեմբերի 27-ին ժամի 7-ից 40 րոպե անց, Աշնան աղջամուղջում, վորը տարվա վատ յեղանակներին գիշերվանից վոչնչով չեր տարբերվում, անսշմարելի դարձավ յերկրորդ մակուցկը: Նա կորավ մշուշում, տարվելով կատաղի փոթորկից, և քամու վոռնոցների մեջ վոչ փոք չլսեց հրաժեշտի ճիշերը:

Շովագնացները, գլուխները կախ զցած, նստել ելին Գոլովինի մակույկում: Ալիքները դես ու դեն ելին զցում մակույկը, և միայն ողարկղների շնորհիվ ելին մնում նրանք կատաղած ծովի մակերեսին: Շեշտակի փոթորիկը քշում եր տասնմեկ մարդուն, հայտնի չե, թե ուրի: Մի քանի անգամ մակույկը քիչ եր մնում շուռ գար, բայց ջրի տակն անցնելով խեղդ-

վելով, շունչները կարվելով, սառած մարդիկ շարունակ կում ելին նստել՝ մակույկի յեղբերից կպած:

Բացի Գոլովինից և Բակուտայից, մակույկում նստած ելին Անդրեյ Մուրաշը, Նինա Սամարինան, հնոցապաններ Գրունինը, Զոլոտովը, Մորոզովը և Իվանովը, նավաստի Դրուժկոն, լենինգրադցի նավաստի Վիշնյակովը և մեքենավար Դանիլինը:

Փոքը շոգենավի կործանումը և ծովագնացների թափառումները մեր պատմության սկիզբն են միայն, և մենք միայն կարծ կպատմենք, թե ինչ տեղի ունեցավ շոգենավի ավարիային հաջորդող որերին:

Լուսաբացին, յերբ գիշերվա մեգը մի քիչ ցըվեց, ծովագնացները բոլորովին մոտիկ, մի կիլոմետր հեռավորության վրա, ինչ-վոր մութ, տարածված բիծ տեսան: Քամուց ցրվող մառախուղի ծխացող կույտերի մեջ, ծանր ճոճվելով, շարժվում եր նավի սելուետը: Մի վայրկյան, հազիվ նշմարելի կերպով կարմըրին տվեց ազգանշանը, և նույն րոպեյին նավն աչքից չքացավ: Մի րոպե հետո լսվեց կամաց, յերկար սուլոց և այլմա չկրկնվեց:

Յերրորդ որը քամին գաղարեց, չարագուշակ գորշ արել հազիվ եր լուսավորում հանդարտվող ծովը, և ալդ ժամանակ ուժասպառ յեղած, փայտացած մարդիկ առանձնապես ուժեղ զգացին քաղցը: Նինան բացեց ավարիայի պաշարի պահածոները և ուտելիքը մասնաւ բաժանեց: Բայց մակույկում խմելու ջուր չկար, և յերկու որվա ընթացքում, մինչև անձրեվի գալը, նավաստիները տանջվում ելին այրող ծարավից: Անձրեւ փրկություն յեղավ նրանց համար: Ա-

դահությամբ ձեռները մեկնելով՝ նրանք հավաքում
եյին սառը կաթիւները։ Այդ միջոցին Նինան մակույշ-
կի հատակին բրեզենտ փոեց և մի ամբողջ դույլ ջուր
հալվաքեց։

Թեթև քամին մակույկը քշում եր գեպի արևելք։
Յերբ փրկարար անձրես դադարեց, Նինան ծալեց բրե-
զենտը և մկրատը հանելով, ի դարմանու բոլորի,
սկսեց մասսմաս անել այն։

— Թհղ,— մռնչաց բոցմանը, բռնելով նրա առ-
մունկից։ Զհամարձակվես գույքը փչացնել։

Սակայն աղջիկն ամենեին չվախեցավ Բակուտա-
յի գոռոցից։ Նա թեթև շարժումով մի կողմ քաշեց
նրա ձեռքը և ասաց։

— Առագմստ։ Միթե դուք գեմ եք։

Բոցմանը, աչքերը չուելով և ուսերը բարձրաց-
նելով, մնաց նստած՝ բերանը բաց։

— Այդ վմրտեղից լույս ընկար այդպես, — վեր-
ջապես վրա բերեց նա, կարծես Նինան ծովի խորքից
եր յեկել կանգնել իր դեմ։ — Այդ ինչպես իմացար,
թե իմ գիլում. Ի՞նչ մտքեր կան։ Զե՞ վր այդ իմ
միտքն ե — առաջաստ դնել։

Բըեզենտի կտորներով ու յերկու թիակով սար-
քավորված առաջաստի տակ մակույկն արագ սողում
եր արևելքի պարզկա յերկնքի ուղղությամբ։

Վորքան ել այդ զարմանալի յե, Նինան, թվում
եր, բոլորից լավ եր դիմանում քաղցին ու զրկանքներին։
Ծովագնացները յերբեմն մոռանում եյին, թե նրանց
հետ աղջիկ կա։ Հանգիստ, աննկատելի, նա առանց
աչքի ընկնելով՝ ոգնում եր բոլորին, և յերբ ուժասպառ
յեղած ընկերների ձեռքերը կախ եյին ընկնում։

Նա վերցնում եր թիակները, կամ դույլով ջուրը թա-
փում մակույկից։ Նրա ուժերն անսպառ եյին, թեև ա-
մենքից քիչ նա յեր ուտում և նույնիսկի իր խղճուկ որա-
պահիկից պահում եր հիվանդների համար։ Դեռ Վլա-
գիվոստոկից դուրս գալու ժամանակվանից բոլորն ըն-
տելացել եյին այն բանին, վոր Ամուրի ձկնորսի այդ
փոքրիկ պիհնդ աղջիկը չխոսկան եր և խուսափում եր
խոսակցություններից։ Նա անփոփխ կերպով հան-
գիստ եր, յերբեք պարապ չեր մնում և նույնիսկ զի-
շերը, իր փոքր խցիկում պահվելով, նա կարկատում
եր նավաստիական զգեստը։ Շալով փաթաթված,
զլուխը կախ զցած, աչքերը թագցնելով, նա անաղ-
մուկ շրջում եր նամակի վրա և միայն մի անգամ «Աստ-
ղագետի» նավաստիներն ու հնոցապանները տեսան
ու ընդմիշտ հիշեցին նրա աչքերը։ Դա կամչատկայի
ափերի մոտ եր, ուրախ արեսում մի որ, յերբ հերթա-
փոխությունից ազատ բոլոր նավաստիներն ու հնոց-
ապանները, տախտակամածի վրա հավաքված, յեր-
գում ու կատակներ եյին անում։ Նինան շտապ անց-
նում եր աջ նավերով դույլերը ձեռքին բոնած։

Ուժեղ հնոցապան Վասիլիի կովառունը, հանաք-
չի ու հնարագետ մի մարդ, կանգնեց նրա ճամբի
վրա ու ձեռները մեկնելով՝ առաջարկեց։

— Յերգիր մեղ հետ, մւը ես շտապում։

— Չեմ կարող, — կամաց պատասխանից Նի-
նան, — յես աշխատում եմ..

— Յոլա կգնա, — աղջկան փաթաթվելով՝ ծիծա-
ղեց հնոցապանը, — այ, հիմա յես ու դու կպարենք։

— Վհչ, — հանգիստ պատասխանեց Նինան, — յես
ասացի, վոր պետք ե աշխատեմ։ Թհղ։

— Վոչ մի գեղքում, — բացականչեց հնոցապանը,
— Պարենք, այ պարենք:

Նինան վոչինչ չպատասխանեց, զգությամբ
ցած դրեց դույլն ու նույնպես կամաց ձայնով խընդրեց:

— Ճանապարհ տուր:

— Չեմ թողնի, Զմանձես այդ մասին:

— Կթողնես, — առանց ձայնը փոխելու կրկնեց
Նինան:

Հնոցապանն ավելի ամուր բռնեց աղջկան: Յեվ
հանկարծ, — վոչ վոք չնկատեց, թե այդ ինչպես կա-
տարվեց, — Նինան դուրս պրծավ հնոցապանի ձեռքից:
Նրա գլխակապն իջել եր գլխից, յերկար շաղանակա-
գույն մազերը փուփել ելին ուսերին, նա խորունկ եր
չնչում, նրա կլոր դեմքը մնում եր անվրդով, բայց
ահագին աչքերն այնպիսի մի վճռականությամբ ելին
վառվում, վոր այդ տեսարանին ներկա յեղողները
բոլորը հետ քաշվեցին:

Անշարժ, փայլուն աչքերն ուղիղ հանաքչուն
ելին նայում և հնոցապանը, շփոթված, հետ քաշվեց:

Այդ որվանից վոչ վոք չեր համարձակվում Նի-
նայից կպչել, ձեռ չքաշել — սիրալիքությամբ, թե կա-
տակով:

Հետագայում նրա մասին իմացան, վոր մանկու-
թյան տարիներից անմայր և մնացել և միակ դավա-
կը լինելով՝ իննը տարեկան հասակից ձկնորսություն
և արել հոր հետր Նա տասնվեց տարեկան եր, յերբ
մահացավ հայրը: Այն ժամանակ նա աշխատանքի ըն-
դունվեց շոգենավի վրա վորպես հավաքարարուհի:

Յեղ ահա արդին չորս տարի յե, նա աշխատում ե հե-
ռավոր նավարկություն կատարող նավերի վրա:

Բոլորն այնքան տոկուն չելին, ինչպես Նինան:
Նավի կործանման ժամանակ նյարդավին ցնցումը և
սառնամանիքը կորստի մատնեցին վեց հոգու:
«Աստղագետի» կործանումից ութ որ անց մահացան մե-
քենագետ Դանիլինը, Զոլոտովը, Գրունինը, Իվանովը,
Մորոզովը և Դրուժկոն: Վոչ մի հոգասարություն չեր
կարող փրկել նրանց, և Նինան, Գոլովինի հրամանով,
իզուր եր կրկնակի չափով որապահիկ տալիս հիվանդ-
ներին:

Ուտելիքից հրաժարվելով նրանք տեսդից այս
ու այն կողմ ելին նետվում մակույլի հատակին: Զորս
որ հետո ել մահացավ նավաստի Վիշնյակովը:

Նախորեյին փոքր անձրե յեկավ, և մակույլի
քթի մոտ պառկած Վիշնյակովն անսպասելիորեն սո-
ղալով յեկավ Մուրաշի մոտ, կարծեք վոչինչ չի պա-
տահել, կարծեք տանջագին տենդը վրայից թոթափե-
լով՝ նավաստին նստեց Անդրեյի կողքին և հանկարծ
խնդրեց:

— Վերաբկուդ վրաս զցիր: Յես մի քիչ մրաեցի:
Այդ բնչ պատահեց ինձ:

Նա մտազրադ նստեց ամբողջ գիշեր, զլուխը
ձեռքի մեջ առած, և բոլորը հավատացած ելին, վոր
նա առողջացել ե: Առավոտյան Նինան, բաժանելով
պահածոները և ծովաչըրից աղիացած սուխարիները, ի
զարմանո բարեկամների, բաց արեց մի տուփ ևս, վոր-
տեղից խնձորներ դուրս յեկան:

— Կերեք, — հուզումնալի ժողովով ասաց նա
ընկերներին: — Այսոր տոն ե:

— Յիտնդամայն ձիշտ ե, — ասաց Բակուտան, — նոյեմբերի յոթն ե: Դեռևս յերեկ, յերը լես նշանակում եյի որը, ուզում եյի շնորհավորել ձեղ:

Բոցմանն ամեն գիշեր մակույկի ձախ յեղբին դանակով նշում եր անցած որը: Այդ նրա որացույցըն եր:

Ծովագնացները վոտքի կանգնեցին ու հանդիպավոր կերպով «ուսու» գոչեցին: Իրար ձեռներից ամուր բոնած՝ նրանք յերգեցին հիմնը: Նրանք յերգում եյին նվազ ձայներով, և հանկարծ Բակուտայի ցածր բասը կտրվեց: Բոցմանը յերեսը շուռ տվեց ընկերներից:

— Կորավ ձայնս, — կամաց ասաց նա:

Տոն որը բարձրացրեց բարեկամների տրամադրությունը, և բոցմանը մինչև մայրամուտ պատմում եր, թե ինչպես առաջ իր անզուղական բասով զար, մացնում եր բոլորին: Իր այդ հշողություններում շատ շուտ յերեսց յերիտասարդ, հեքիաթային հարստության տեր անզունին: Մեկ անզում, ինչպես հավատացնում եր բոցմանը, լիվերպուլի կացուրդի ժամանակ յերիտասարդ միլիարդատիրուէին լսեց նրա յերգը և, հիացմունքից գլուխը կորցրած, հետեւում եր նրան մինչև Ռեել: Յերգչի վոտների տակ զցած միլիոնները չոգնեցին, — քար Բակուտան հպարտաբար մերժեց գեղեցկուհու հարստությունն ու արցունքները:

Հանդարտ, անքամի գիշերվա վերջին քնած Գոլովինը զարթնեց ընդհատ շշուկից: Աչքերը բանալով նա մթության մեջ հաղիվ նշանաբեց գրգռված Վիշնյակովին:

յին: Ինչ-վոր կատաղի մոլուցքում հրում եր նրան: — Նինա, Նինա, Նինա, տես, Նեան: — գողղուցուն ձայնով կրկնում եր նա՝ ցույց տալով հեռուն: — Նինա, ինչնու յենք մենք Նեայով լողում: Տես, ինչքան կրակներ կան... Հրավառություն ե... Դե նայիր, Պետրոպավլովսկի ամբոցն ե: Կարմիր, կապույտ, կանաչ կրակներ...

Ուրախությունից ցնցվելով, ձեռքերը մեկնած, նա լական շշուկով կրկնում եր.

— Նեան, Նեան, կամուրջները... Խոկ ժողովները, ժողովները: Ինչքան ժողովուրդ և զրոնում գետափին... գրոշակներ... Նինա, ասա ինձ, ասա, զի ասա, այս ինչպես հասանք մենք Նեա: Յեվ տոնին, ուղիղ տոնին հասանք:

Յեվ հանկարծ, կտրուկ շարժումով մի կողմ հրելով Նինյային՝ Վիշնյակովը վոտքի կանգնեց.


— Կամուրջը, — իրեն կորցրած՝ գոչեց նա: — Բոցման, զեկը զեպի ձախ կողմը: Տղերք, կամուրջը: Կամուրջը: Կամրջասյունը: Մենք կջախջախվենք: Ա՞ւր եք գնում, տղերք, — սարսափած գոչեց Վիշնյակովը: — Կամրջասյունը, կամրջասյունը...

Յեվ նա նետվեց զեպի նավերը: Գոլովինը գեռուշելով չեկած՝ Նինան բռնեց Վիշնյակովի շապկի ոճիքից: Մի բռպեյում նրան հետ քաշեցին նավի մեջ: Նա հեծկլտում եր և ինքն իրեն կամաց մրմթյում:

Լուսաբացին նա մահացավ: Մակույկում մնացին չորս հոգի:

Յեվ դարձյալ ինն որ, առանց շոգենավերի հանդիպելու, մակույկը լողում եր ովկիանոսում: Քանամեկերորդ որը չորս ծովագնացները լողում եյին արդեն

արեադարձային կիզիչ արևի տակ, Գոլովինի և Բակուտայի միահամուռ յեղրակացությամբ մակույկը գտնը-վում եր Խաղաղ ովկիանոսի կենտրոնում և այժմ բո-պե առ բոպե կարելի յեր փրկություն սպասել: Դեկա-պեսը և բոցմանը հաստատապես հուրա ունելին հան-դիպելու Ամերիկայից Ճապոնիա և Չինաստան ոեյս կատարող բազմաթիվ շոգենավերից մեկն ու մեկն: Այդ ժամանակ արդեն սպառվելու մոտ եյին պարենի բոլոր պաշարները, իսկ վոչ շատ առաջ յեղած տեղա-տարափ անձը ից ծովագնացների մոտ մնացել եր սի-այն կես դույլ խմելու ջուր: Նիսան տիրությամբ բաշխեց սուխարիների մնացորդը: Վերջին որապահիկը գրպանը դնելով՝ Բակուտան ընկերներին դիմեց զար-մանալի մի ճառով: Գոլովինը, Անդրեյը և Նիսան ապշած լսում եյին նըտան:



ԶՈՐՅՈՒԴ ԳԼՈՒԽ

ԶԵՌԻ ՆԱՎԵԶՐԻ ՎՐԱ

Բակուտան իր ահազին ձեռքերը զբեց ծնկնե-րին և, Գոլովինին հառելով թախծոտ հայացքը, հարց-րեց.

— Ալեքսանդր Պավլովիչ, տսացեք, յես ի՞նչպիսի տեսք ունեմ: Բարի յեղեք: Ինձ հարկավոր և անպայ-ման գիտենալ այդ:

— Հիանալի, — տարակուսանքով պատասխանեց զեկապետը: — Ես զտնում եմ, վոր մեր մեջ ամենքից լավ տեսքը ձերն ե:

— Այդպես ել յենթադրում եկի, — տիսուր կեր-պով զլիսով արեց բոցմանը: Մի վայրկյան նրա աչ-

քերում առկայծեց հազիվ նշմարելի ինքնադռնություն:

— Բայց այդ ինչն յեք հարցնում, — զգուշութեն հարց տվեց Գոլովինը:

— Հիմա ամեն ինչ կպատմեմ, — հազիվ լսելի ձայնով շշնջաց Բակուտան, — միայն ինձ ուշադրությամբ լսեցք, վորովհետեւ յես նույն ըոպէյին պետք են պատասխան ստանամ:

Բոցմանը ձեռքերով մտաղբաղ շփեց ծնկները ու դլուխը բարձրացնելով՝ հպարտությամբ հայտարարեց.

— Յես շատ կուզեյի գիտենալ, թե ձեղնից ով են պատկերացնում, թե խորհրդային՝ առեվտրական նաև վատորմի բոցման իվան Բակուտան ինչ կարող են ուտել միանգամից:

— Ո՞-ո՞-ո՞, — պատասխանեց Մուրաշելը, — ով չի հիշում, թե ինչպես դուք «Աստղի» վրա...

— Բոցման իվան Բակուտան, — վեճաբար կանգնեցրեց Անդրեյի խոսքը բոցմանը, — դա մի մարդ ե, վոր խաղալով ուտում ե մի աժեռող բուխանկա հաց, մի պղինձ բորշչ, կամ այնպիսի մի աման քալամապուր, վորտեղ ազատ կերպով կարելի յե մեկ տարեկան յերեխայի լողացնել.

Այդ անսպասելի նախաբանից հետո բոցմանը մի քիչ աշխուժանալով՝ շարունակեց.

— Մեկ անգամ, կուզեք հավատացեք, կուզեք՝ վոչ, 1908 թվին Համբուրգում յես սարսափեցրի ամբողջ Սան-Պաուլին: յերբ գրազով խմեցի մի տակառ գարեջուր և կերա բոլորն՝ ինչ վոր կար բուֆետում: Վորպես վրագիր, յես կարող եյի լափել նաև գարեջրատան տիրուհուն: Այդ թե ինչպիսին եր իվան Բա-

կուտան: Պետք ե ասել ձեզ, վոր գերմանացին մի զավաթ գարեջուր ե վերցնում, սոսիսկի, սիդարետ ու ամբողջ յերեկոն նստում ե թագավորի պես: Բայց միթե ուռս ծովագնացի բան և այդ: Յեվ միանգամայն հասկանալի յե, վոր յերբ ինձ մոտեցավ աղջիկը և սեղանիս մի գավաթ գարեջուր, յերեք հատ սոսիսկի և մի կտոր հաց գրեց, յես, ինարկե այդպիսի ծաղրանքի չգիմացա: Յես սեղանին զարկեցի թղթապանակս ու գոռացի: «Հարգելի պարունայք, յեթե ձեզ մոտ ազնիվ ոռու ծովագնաց ե յեկել ապա նա չի տանի ձեր ծաղրանքը և թուլլ չի տա, վոր դուք ի՞րեն սովամահ անեք: Գարեջրատանը նստած մարդիկ բոլորը վեր կացան: Գերմանացիներից մեկը համակրանքով մոտեցավ ինձ ու ձեռքը մեկնեց: Ուզո՞ւմ եք զրագ գալ, — առաջարկեց նա...»

— Բոցման, դուք ինչ-վոր հարց պետք ե տայիք ինձ, — մեջ բերեց զեկապետը՝ ոգտվելով այն վայրկյանից, յերբ բոցմանն իր խոսքերի ազդեցությունն ստուգելու համար գարձել եր գեպի Անդրեյը:

— Միանգամայն ճիշտ ե, — ուշադիր յեկավ բոցմանը, — դուք յերեխ արդեն լսել եք, թե յես ինչպես տարա զրազը և ինչ կերա այդ կեղանա գարեջրատան բուֆետում: Հավատացնում եմ ձեզ, վոր այդ պաշարով մենք դեռ տասը որ ել կարող եյինք նավել:

Պարզամիտ Անդրեյն զմայլված մոտ քաշվեց բոցմանին, բայց Գոլովինը նշան արեց նրան, վոր Բակուտայի ուշադրությունը չգրավի:

— Յեվ ահա, — յեղբափակեց բոցմանը, — այնպիսի մարդու համար, ինչպես յես եմ, այս կյանք չե: Յես խուճապ չեմ բարձրացնում: Յես հույս ունեմ,

վոր ձեզնից պակաս չեմ դիմանա, սակայն Ալեքսանդր Պավլովիչ, յես ուղում եմ ձեզնից աղնիվ խոսք խընդ-ընդ, վոր այն դեպքում, յեթե յես բոլորից շուտ հեռանամ...

— Այդ ի՞նչ և պատահել ձեզ,—բացականչեց Գո-լովինը, — Յես ձեզ չեմ ճանաչում, Բակուտա:

— Յեթե յես հեռանամ այս կյանքից,—գլուխը շարժելով կրկնեց բոցմանը: — Բայց... բայց, Ալեքսան-դր Պավլովիչ: Թեև գուք յերիտասարդ եք, բայց յես ձեզ խսկական ծովագնաց եմ համարում: Ալեքսանդր Պավլովիչ: յես ձեզ հավատում եմ, այնպես ինչպես ինձ... Յեվ գուք աղնիվ խոսք պետք ե տաք ինձ:

— Վոր ի՞նչ, — վճռականորեն պահանջեց ղեկապե-տը: — Ասացեք վերջապես:

Բակուտան անսպասելիորեն սկսեց աչքերը թար-թել և հանկարծ աղաչեց:

— Աղնիվ խոսք տվեք: Ընկերներ, ասացեք, վոր դուք ինձ չեք ուտի, յերբ յես...

— Բոցման, գուք խենթացել եք, զայրացած գո-չեց Գոլովինը: — Ի՞նչպես եք համարձակվում գուք... .

— Վճռ, վճռ... — գես ու դես ընկալ, շփոթվեց Բակուտան: — Մի վերավորվեք, թույլ տվեք վերջաց-նեմ: Յես ձեր մեջ ամենից մեծն եմ, ինչեր ասես, վոր ծովում չեն պատահում: Յես ինձ համար չեմ վախենում: Յեթե յես չդիմանամ ու ծովն ընկնեմ, ահավոր չե ինձ համար: Յես վախենում եմ ձեզ համար: Յերբ գուք փրկվեք... Դուք, յերիտասարդ խորհըր-դային ծովագնացներդ...

— Լոիր, — վերջնականապես զայրացավ վրդով-ված Գոլովինը: — Ստորություն ե այդպես մտածելը:

— Ստորություն ե: Ստորագույն ստորություն ե, — ուրախանալով պնդեց Բակուտան: — Յես ձեր մա-սին այդպես չեյի մտածում: Բայց ծովը...

— Մի վերավորվեք, ներողություն եմ խընդ-ըում... Յես ուղղակի կորցրել եյի կշռադատությունս: Գոլովինն ամբողջ որվա ընթացքում չխոսեց բոցմանի հետ:

Անհողմ շացուցիչ կապույտ ովկիանոսում, տաք յերկնքի տակ թուլացած իջել եր առագաստը և ծարա-վից տանջված նավագնացները պառկել եյին մակույկի հատակին՝ վլուխներն արկից պաշտպանելով:

Անշարժ ջրի վրայով արծաթագույն, թոչող ձեկ-ների վտաներ եյին անցնում: Նրանք թոչում եյին բարձր, արկի տակ պսպղալով աղեղներ եյին գծում և անաղմուկ անհետանում, կարծեք պարզ ողում հալ-վելով:

Վտանգավոր արևադարձային ճառագայթներից առագաստով պաշտպանված՝ Գոլովինն անընդհատ դիմում եր հեռագիտակով: Յեվ հանկարծ նրան թվում եր, վոր հենց հիմա, մի ըովե, մի վայրկյան հետո հորիզոնում յերեալու յե հողի բաց յերկնացույն մի շերտ կամ շողենավի ծուխ: Բակուտան, ղեկապետին հետեւվելով, համոզում եր նրան:

— Իոկ ինձ հեռագիտակ հարկավոր չե: Յես հի-սուն մզոն հեռագործթյան վրա ել կզգամ, յեթե նավ անցնի: Հեռագիտակը ըոլորովին չի ոգնի, իսկ յես, առանց նայելու, կասեմ «յերկիրը», և դուք բո-լորդ ծովափ կամ կզգի կտեսնեք:

— Այդ ի՞նչպես, — անկեղծորեն զարմանում եր Անդրեյը: — Այդ ի՞նչպես եք իմանալ դուքք:

Բոցմանը, այդպիսի հարցերից մեծ բավականություն ստանալով, պարզաբանում եր իր հրաշալի հատկությունները շատ համեստ ու կարճառոտ ձևով.

— Պետք ե Բակուտա լինել...

Դիշերը ծովագնացներն արթնացան զարմանալի պատահարից: Յերկու անգամ մակույկին ինչ-վոր կարծր բան դիպավ: Ցնցումներից արթնանալով՝ բարեկամներն սկզբում յենթաղրեցին, վոր քարի յեն դիպել: Թիակներն իջեցնելով՝ նրանք խսկույն համոզվեցին, վոր մակույկի տակ նոռյն խորությունն ե: Լուսաբացին զարկը նորից կրկնվեց:

Կեսորին նորից զարկ լսվեց ձախ կողմից, ու Բակուտան, յեղրից կախվելով, հետեյալ վայրկանին ուրախ աղաղակով ջուրն ընկալ:

Մակույկը թողնելով՝ բոցմանն արագությամբ լողում եր ովկիանոսում, կարծեք ուզում եր մեկին հասնել: Յեկ վորտեղից այդքան ուժ հավաքեց այդ ուժասպառ ծերուկը: Յերկար ձեռքերը դես ու դեն դցելով՝ նա լողում եր, և հանկարծ սուզվեց ջրի տակ:

Մի ըռպեյից վոչ պակաս նա ջրի տակն եր: Ընկերներն արգեն անհանգստանում եյին: Անդրեյը, զեկապետի թույլտվությունն ստանալով, կանգնած եր, պատրաստ Բակուտային փրկելու համար ջուրը դցելու իրեն, բայց հենց այդ ըռպեյին Բակուտան վեր բարձրացավ ովկիանոսի խորքից ու հաղթականորեն աղաղակեց.

— Ուստի, թիավարեցեք իմ կողմը: Պարանի ծայրը ցցեք:

Այն տեղում, վորտեղ յերկրորդ անգամ սուզվեց բոցմանը, աղաղացած ծփանքն ու ձղիյունն ալն եյին

ասում, վոր ջրի տակ ինչ-վոր պայքար և տեղի ունենում: Պարանը ձեռքին Անդրեյը թուավ մակույկի յեղբից, և ահա վերջապես բոցմանը յերեվաց ուղիղ մակույկի մոտ՝ մուգ կանաչ կրիան ձեռքին:

Անսովոր ճարպկությամբ Բակուտան կապեց պարանով կրիայի անհնաղանդ, սլկուն թաթերը: Սակայն բոցմանի ույժն արդեն սպառվել եր, և նա շնչառառ վիճով, անսասելի ճիգ թափելով՝ բարձրացավ նավասինելով, անսասելի ճիգ թափելով՝ բարձրացավ նավասինելը: Ուժասպառ ծովագնացները մեծ դժվարությամբ կարողացան մակույկ բարձրացնել կրիային, վորի կշիռը յերեսուն կելոդրամից պակաս չեր:

Մեջքի վրա ջուռ տվեք, մեջքի վրա, — հրամայում եր բոցմանը: — Այժմ մենք մոտի ապահովված ենք մի ամբողջ դար:

Շունչ քաշելով՝ յերջանիկ Բակուտան անմիջաւ պես բացեց կրիայի զրահը:

Բոլորին ուրախացնելով՝ բոցմանը համոզված հայտարարեց: — Ափը մոտ ե, այլ կերպ չի կարող լինել: Սրանք ափից հեռու չեն զնում: Կամ գուցե նրան հողմն ե բերել հեռու, Սակայն... ինչելից, մենք կը կշտանանք վարազների նման:

Մտածելու տեղը չեր: Քաղցն ստիպում եր հում միս ուտելու: Բոցմանը չորս կտոր միս կտրեց և արշդեն ուզում եր սկսել ուտելը, յերբ Գոլովինը, ինչ-վոր բան հիշելով՝ կանգնեցրեց նրան:

— Բոցման, — ուրախացած հրամայեց նա, յերեկվա խոսակցությունից հետո առաջին անգամ դիմելով Բակուտային, — նստարանից տաշեղներ հանեք: Վորքան կարելի յե շատ տաշեղ:

— Պատրաստ ե, տաշեղ կլինի, — ձայն տվեց Բա-

կուտան՝ չհամարձակվելով հարց տալ թե այդ տաշեւը Գոլովինի ինչին և պետք:

Դեկապետը նավապետի հեռաղիտակից մեծ ապահովին հանեց, և այդպիսով նրա մտադրությունը պարզվեց:

Նինան դույլի մեջ դարսեց չոր, յուղաներկով տողորված տաշեղները, և տաս բողե հետո մակույկի մեջ վառվում եր ապակով կացրած խարույկը, իսկ դարձյալ կես ժամ անց ծովագնացներն ուտում եյին հիանալի խորոված միս:

— Փրկված ենք,—անընդհատ կրկնում եր հակուտան, փորձնականում ցույց տալով ընկերներին եր ախորժակի չափը:—Խորհրդային ծովագնացներն այնքան ել շուտ չեն կորչում:

Հարմար գեպքից ոգտվելով՝ բոցմանը չկարողացավ իրեն զսպել և կրիաների վերաբերյալ բազմաթիվ պատմություններ արեց Անդրեյին:—Թե կուզեք իմանալ, — ճյութալի մսի կտորը կրծելով առում եր նա, — յես յերեմն այնպիսի հրեշների յեմ հանդիպել, վորայս կրիան մուրաբայի պնակից մեծ չի յերևում նրանց համեմատությամբ:

Գործը չետաձգելով՝ բոցմանը տեղն ու տեղը պատմեց, թե ինչպես ինքը Մեքսիկայի ափերի մոտ բռնել և վեց թիականոց մակույկի մեծության մի կրիա և ինչպես այդ կրիային շոգենավը մինչև Ողեստայե տարել բուքսիրով, և թե ինչպես ինքը քաշ և տվել այդ կրիային ամբողջ քաղաքի միջով: Քաղաքային թատրոնը դատարկվել եր, բոլոր հանդիսատեսները փողոց եյին թափել: Տրամվայները կանգ եյին առեւ խեկ շփոթված վոստիկանները, չհամարձակվելով չտեսաւ

նված երեշին մոտենալ էր հզեղ խռոմք կանչեցին, Բայց մինչ այդ բոցմանն անվտանգ հասցրեց իր կրիտիկին Պրիմորսկայա վողոցը, վորտեղ ինքն ապրում եր շոգենավի կացուրդների ժամանակ: Բարեխախտաբար շնորհում մի հարմար ցախատուն գտնվեց, և կրիային հաջողվեց թաղցնել հետաքրքրվողների աշքերից: Բայց զարմանալի կրիայի համբավը տարածվեց ամբողջ Ողեստայում:

— Թերթերում զրում եյին, — անվրդով կերպով պատմում եր Բակուտան: — Մի խոսքով՝ իմ զյուտը մեծ աղմուկ բարձրացրեց: Սանկտ-Պետերբուրգից յեկավ մի հայանի պրոֆեսոր և ուղում եր գնել այդ կրիան: Բայց յես առացի, վոր նա ինձ հարկավոր ե... ծիծաղի համար: Պրոֆեսորը մի շաբաթ ապրեց Ողեստայում, առավոտից գալիս եր մեր բակը և ուղղակի իրեն ողանում եր: Նա ինձ առաջարկում եր... տառը հազար ոռորլի, բայց յես պատասխանեցի, վոր յես կապիտալով չեմ հետաքրքրվում, և նա, անմխիթար կերպով, հեռացավ:

— Իսկ ինչ արիք դուք կրիայի հետ, — կտակելով հարցրեց Անդրեյը: Նա ընդհանրապես հավատում եր բոցմանին, առանց մտածելու, բայց ալժմ զգաց, վոր ինչ վոր վատ բան կա այս պատմության մեջ:

— Տանտիրունուն նվիրեցի, — համեստորեն ավարտեց Բակուտան: — Մտածեցի, վոր կենդանին, մի՛ ինույն ե, պետք ե սատկի, ինչու չարչարեմ նրան Յես սպանեցի նրան, զրահը սղոցեցի, և տանտիրունիս հիս հիանալի տաշտ ստացավ: Այդ որվանից քանի ինչ տարի յե անցել բայց յեթե տանտիրունիս կենդանի յի, նա մինչեւ այժմ ել լվացք ե անում այդ


տաշտում։ Այդպիսի տաշտը հաղար տարի կծառայի։
Գիշերն ընկերներն այնքան պիստ քննցին, ինչ-
պիս յերբեք չելին քնել։ Չեր քնել միայն Գոլովին։
Նա հերթապահ եր և, աստղերին նայելով, սպառում
եր լուսաբացի առաջին նշաններին։

Զեռքերն ու վոտքերը լայն տարածած՝ խորմ-
փացնում եր Բակուտան։ Յերբեմն նա շուռ եր գալիս
մի կողքից մյուսը, բաց եր անում աչքերը, մի քիչ
բարձրանում, շուրջը զիտում, ապա նորից մըթմըր-
թալով պառկում եր ու մի վայրկյանում նորից քնում։

Նինան, կծկված, նման եր յերեխայի, իսկ նրա
կողքին, բռունցքը այտի տակ դրած, քնած եր Անդ-
րեյը։ Նալաստին յերազում հաճախ հառաչում եր,
և նրա աղիողորմ բացականչությունները լսելով՝ զե-
կապեաը հիշում եր կորած ընկերներին ու Լեռնարդ
Կարլովիչ կլանգին։

Արեալարձալին գիշերվա աստղերի տակ դան-
դաղորեն շարժվում եր մակույկը։ Նավախելի հետեւ
ֆոսֆորային լույսեր եյին յերեվում, նորից հառաչեց
Անդրեյը, ծանր շուռ յեկավ բոցմանը և խոր ձայնով
մըթմաց՝ «թողեք»։ Գոլովինը պառկած եր նավախե-
լի վրա, դիառում եր Հարավային Խաչի համաստեղու-
թյունը, ու հորիզոնին իջած Բեեռաստղը, վորը Կամ-
չատկայի գիշերային լերկնքում այնքան բարձր եր
չողողողում։ Նրա մաքերն ընդհատեց կամացուկ ծփյու-
նը։ Մի բոպեյից ծփյունը լավեց բոլորովին մոտիկ,
մակույկի յեղը մոտ։ Գոլովինը վորոշեց բարձրանալ
ու բռնեց մակույկի յեղը երից, և հանկարծ նրա ձեռքը
դիպավ մարդու ջլոտ ձեռքի։ Նա սպոեց, դադարեց

շնչել։ Ինքն իրեն չհավատալով՝ նա ուզում եր արթ-
նացնել ընկերներին, բայց այդ վայրկյանին մարդ-
կային մի ափ թեթև սեղմեց նրա ձեռքը։



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«Ա.Ս.ՅԵՐԱԿԱՆ ՄԵԽԻ Ո՞Վ, Ե՞ՆՔ»

Առաջին վայրկյանին ղեկապետը մտածեց, վորայդ ամբողջը զառանցանք ե, հետևանք քաղցի ու ծառավի:

Բայց ահա թաց մատները լացվեցին ու ազատեցին նրա ձեռքը: Ղեկապետն արագ շուռ յեկավ: Մակույկի հետեւ սելին եր տալիս հանդարտ ջուրը: Նավախելի տակ կայծկլառում եյին պայծառ, լուսառու ֆոսֆորական կրակներ: Պայծառ զմրուխտի մի բիծ, մերթ բռնկվելով ու մերթ հանգչելով, դանդաղորեն իջնում եր դեպի սել խորությունը:

Ցեվ հանկարծ արղեն առաջից լսվեց մի ճողփյուն, և խորը խավարի մեջ, առագաստից այն կողմ, յերեւկաց մարդկային ուրվանկարը: Հետ դառնալով՝ Գո-

լովինը պարզ լսեց, թե ինչպես մեկը մակույկ բարձրացավ և, հազիվ լսելի կերպով փնչացնելով, նստեց քնած Մուրաշեկի կողքին:

Անլուսին արեվադարձային գիշերվա մեջ հնարավոր չեր վոչինչ տեսնել, բայց մարդկային ուրվանկարն աղոտ կերպով գծագրվում եր յերկնքի վրա՝ ծածկելով աստղերի մի մասը:

— Այդ սկզբ նավերը ուրաքանչայն հարցը բեց Գոլովինը, և նույն բոպեյին զարթնեց Անդրեյը:

— Այս բնչ մարդ ե, — ձեռքերը բարձրացնելով հարցը նա: — Բոցման, ղեկապետ, այս մվ ե:

Մուրաշեկի ձայնից զարթնեց Նինան: Նա նույն պես զարմանքից սառեց, կանգ առավ, իսկ զեկապետն այդ պահին արթնացնում եր բոցմանին: Բայց բակուտային սթափեցնելն այնքան ել հեշտ բան չեր:

Ովկիանոսի խորքից գուրս յեկած առեղծվածային մարդը շարունակում եր անշարժ մնալ նավաքթին:

— Ո՞վ ե նավերը ուրաքանչայն Գոլովինը: — Մուրաշեկ, արթնացրեք բոցմանին, — հրամայեց նա ու նորից դարձավ դեպի սիլուետը, — պատասխանեցնք, յես սպասում եմ:

Սակայն մարդը լուռ եր:

Ամբողջ ուժով ցնցելով բոցմանին՝ Մուրաշեկը, վերջապես, զարթնեցրեց նրան:

— Հերթափոխության, — ուսերն ուղղելով հորանչեց բոցմանը և իսկույն լսեց: — Այս մվ ե, — ուշքի գալով հարցրեց նա՝ նայելով անծանոթ մարդուն:

Պատասխան չստանալով՝ Բակուտան վեր թռավ ու բռնեց անծանոթի ձեռքից: Հստ յերեվաւթին, բոցմա-

ՆԵՐ այդ բավականին թափով արեց, վորովհետև անծանոթն աղիողորմ ճշաց և շտապ-շտապ թոթվեց.

— ՈՒՅԱՅՈ . . . ՈՒՅԱՅՈ . . .

Ճապոնացի յե, — վրա բերեց Բակուտան:

— Յես նրանց աչքերս փակ կճանաչեմ: «ՈՒՅԱՅՈ» — այդ նրանց լեզվով նշանակում եւ «վողջույն»:

Արագ լուսանում եր: Ովկիանոսի հետեւ դեռ թագնված արեից արդեն կարմբող մանուշակագույն ոդում ծովագնացները պարզ տեսնում եյին իրենց տարորինակ հյուրին: Դա մի ցածրահասակ վոսկրուա ճապոնացի յեր, բարակ, ծուռ վոտներով: Նրա ազդուերը կապույտ կտորով եյին շրջապատված: Վտիս ձեռքերի փոքրիկ ափերով նա անընդհատ շփում եր իր թաց կուրծքը: Նա նստած եր, կարծես յերազում, աչքերը փակած, և միայն ձեռքերի շարժումներն եյին ցույց տալիս, վոր նա արթուն ե: Մի քանի ըստի հետո, յերբ արել բարձրացավ, ճապոնացին դադարեց կուրծքը շփելուց ու բացեց աչքերը: Յե նրա գեմքը վայրկենապես փոխվեց: Պսղուն, սե, կկոցված աչքերը սահեցին մակույկում նստածների վրայով: Փոքրիկ դեմքը կնճոռովեց, և հանկարծ ճապոնացին ժպատց:

— Իմ կարծիքով, — ասաց բոցմանը, — այս մարդը, ինչպես և մենք, փրկվում եւ ավարիսայի յենթարկված նավից: Կեր, — գիշերային հյուրին նա ցույց տվեց կրիան, — Քիչ-քիչ կեր — ձերը սիրում եւ կրիա . . .

Ճապոնացին հրաժարվեց, և յերբ վերավորված Բակուտան միսը պահեց, նա վեր կացավ և Գոլովինին զարմացնելով սկսեց առագաստը հավաքել:

— Այս ի՞նչ եւ անում, — հարցեց Բակուտան, ըստ յերկութին, զեկապետի հրամանին սպասելով:

— Մի խանդարեք, — ճապոնացու շարժումներին ուշադրությամբ հետեւլով՝ ասաց Գոլովինը: — Տեսնենք, թե ի՞նչ եւ լինելու:


Առագաստը ճապոնկորեն ու կանոնավոր փաթաթելով և նստարանի տակ դնելով՝ ճապոնացին վերցրեց թիակները և նշան արեց բարեկամներին՝ հետեւլու իր որինակին: Յերբ ծովագնացները թիակները բարձրացըրին, ճապոնացին վազեց նավախելի վրա, նայեց զեկի մոտ ու մակուէկը դարձրեց:

Նրան չառարկելով՝ ընկերները թիավարում եյին, յենթագրելով, վոր վերջինիրջո նա իր արարքը կրացարի: Բայց արևածագից մի ժամ ել չանցած՝ հարավում յերեաց հողի կապույտ շերտը: Շուտով մակույկը հասավ ժայռոտ սարին:

— Հելլո, — լսվեց Գոլովինի թիկունքի կողմից:

Մայկուկը ափը հանելիս ծովագնացները չնկատեցին, վոր իրենց յերկու մարդ մոտեցան: Յեկողներից մեկը, վորը դիմել եր ծովագնացներին, բարձրահասակ, նիհար, շեկ յեպրոպայի յեր, յերկար, գունատ դեմքով: Բոլորից մեկուսի կանգնել եր մի ճապոնացի՝ արևածագին հագուստով, տարիքավոր ու գեր: Մինչդեռ յեվրոպացին սեղմում եր յեկողների ձեռքերը, ճապոնացին բարեկում եր առանց տեղից շարժվելու, և նրա անտարբեր դեմքը վաչինչ չեր արտահայտում:

— Շնորհավորում եմ ձեզ, — անգլիերեն ասաց յեվրոպացին: — Բայտ յերեւթին դուք քիչ զրկանք չեք կրել: Ներեցեք, յես իրազեկ չդարձա, դուք անգլիերեն խոսնեմ եք, թե վոչ, — դիմեց նա Բակուտահյեն:



Գա կարեանասակ, վասկրոս մի նապանացի յեր
— Լիտէ — պատրաստակամությամբ պատաս-
խանեց բոցմանը, սակայն նու այլես բառապաշտը

չգտավ ու շփոթված թագնվեց դեկապետէ մեջքի
հետև:

— Յես խոսում եմ անզլիերեն, — շտապեց հայ-
տարարելու Գոլովինը: — Ծնորհակալ ենք: Մենք՝
խորհրդային կողծանված «Խորհուրդների աստղ» նավի
ծովագնացներն ենք:

— Համենայն դեպս, ասաց յեվրոպացին, — դուք
նախ և առաջ պետք ե հանգստանաք և ուշքի դաք:

Շարժվելուց խամացած ծովագնացները ճոճվելով,
դժվարությամբ եյին հասնում արագ քայլող մար-
դուն:

Իրենց ճանապարհին նրանք տեսնում եյին միայն
խոշոր, կարծես հղկած քարերի կույտեր — և ուրիշ
վոչինչ: Գորշ բլուրը և միայնակ ժայռը թագնում
եյին կղզու տեսարանը: Շուտով բլրի առաջ յերկաց
քարերից սարքված մի խրճիթ: Եեվրոպացին, կու-
նալով, ներս մտավ և ընկերները նրան հետեւելով
հասան կիսախավար մի շենքի, վորտեղից աստիճան-
ները տանում եյին դեպի քարայրը:

Գետնի վրա մի քանի խսկերներ եյին փռած, ու
կղզու բնակիչը, ճրագը վասելով, շտապ ասաց.

— Դժբախտաբար սրանից ավելի հարմարու-
թյուն տալու հնարավորություն չունենք: Տեղավոր-
վեցեք: Հետագայում դուք ավելի հարմարություն
կստանաք: Այժմ ձեզ մոտ բժիշկ կգա:

Շուտով իսկապես բժիշկ յեկավ, վորը մի ճա-
պոնացի յեր:

Նա զննեց ծովագնացներին ու լիակատար հան-
գիստ առաջարկեց նրանց: Բժշկից հետո քարայր յե-

կավ մի զինվոր, հաղուստի կապոցով: Նինային տվին
տղամարդու լայն ծաղկավոր խալաթ:

Հանգստություն և անդրբություն ցանկանալով
բարեկամներին՝ յելագացին հրաժեշտ տվեց ու գնաց:
Նա, Գոլովինի թելագրությամբ, մեծ պատրաստակա-
մությամբ մի ռադիոգիր գրեց իր մոտ, վոր հայտնի
Մուկվա՛նըանց փրկության մասին:

... Գիշերը, յերբ ընկերները քնած եյին, Գոլո-
վինն ինչ-վոր տարորինակ անհանգստություն զգաց:
Վերաշելով անցած որը՝ նա յենթագրություններից
գլուխը կորցնում էր: Կղզին ընակելի յեց Բայց ինչու-
թիւնց քարայրում տեղավորեցին: Ինչու խոսակցու-
թյան ընթացքում յելովացին իրեն անունը չհայտ-
նեց, իսկ նրան հետևող ճապոնացին շարունակ լուսմ
էր: Ղեկապետի անհանգիստ մտքերն ընդհատեց Բա-
կուտան: Բոցմանը անքտնքալով վեր կացավ խսիրի
վրայից ու դիմեց դեպի յելը:

— Գնամ, տեսնեմ՝ այս հեր հնք ընկել — ասաց
նա Գոլովինին: — Մի վայրկյանում կիմանամ, թե այս
ինչ կղզի յեւ:

Բակուտան գնաց: Բայց կես րոպե չանցած վերա-
դարձավ:

— Չեն թողնում, — շփոթված ու զայրացած
հայտնեց նա: — Վերել ճապոնացի կտ... հրացանով:

— Ըստ յերեսութին, — փորձեց նրան հանգստաց-
նել Գոլովինը, — բժշկի պատվիրագրի համաձայն մենք
պետք ե պառկենք:

— Պառկենք, — բողոքեց Բոցմանը: — Յես ամ-
բողջ կյանքում չեմ տեսել, թե ինչ բան ե հիմանդա-
նալը: Յես առողջ եմ սատանայի պես:

Բակուտային հանգստացնելով՝ ղեկապետն ել
ավելի ուժեղ տագնապով սկսեց կշռադատել դեպքերը:
Մուտքը զինվորներ են պաշտպանում: Այս ինչ կարող
ե նշանակել...»

Բժշկության բոլորովին կարիք չզգացող, ծովա-
գնացները յերկու որ մնացին քարայրում: Միայն
գիշերները, առանձին-առանձին, նրանց գուրու եյին
բերում մաքուր ողի, բայց հսկողությամբ, և թույլ
եյին տալիս վերեռում մնալ հինգ բռպեյից վոչ ավելի:

Նրանց աչքերի առաջ սկսն եյին տալիս ամայի
գլածայսերը, ժայռի հետեւում հանգարտ ծփում եր ով-
կիանոսը: Պահակը ծովագնացներից աչք չեր հեռաց-
նում, հրացանը պատրաստ եր պահում: Գոլովինն
իրեն կորցրել եր, այդ առեղծվածային հանգամանք-
ներին բացատրություն չեր գտնում: Առավոտները
քարայր եր գալիս գունատ յելովացին: Նա յերկրորդ
որն եեթ հայտարարեց, վոր հեռազերն ուղարկված ե
վլադիվոստոկի, բայց դեռ պատասխան չի ստացվել:
Գոլովինի ծանր տարակուսանքն աճում եր ժամ առ
ժամ, նա հասկանում եր, վոր կղզու ընակիչներն
իրենց առողջությունն ու հանգիստը պահպանելու հա-
մար չե, վոր պահակներ են կանգնեցնում քարայրի
առաջ: Բայց ղեկապետն առաջվա պես արտաքուստ
մնում եր անտարբեր, միաժամանակ տանջագին
փնտում եր գերության նմանվող տարօրինակ հյուրըն-
կալության պատճառները:

Յերբորդ որը, յելովացցու հերթական այցելու-
թյան ժամանակ, Գոլովինը մի քանի ուղղակի հարց
տվեց նրան, սակայն, ինչպես և առաջ, խուսափողա-
կան պատասխաններ ստացավ:

— Յեղբ կարող ենք դուրս գալ մաքուր որ, —
զսպված հարցը ից Գոլովինը: — Մենք հիանալի յենք
զգում մեզ,

— Հենց վոր բժիշկը թույլ տա:

— Մինչև այժմ դուք չեք հայտնել մեզ, թե մենք
վիրտեղ ենք գտնվում: Այդ առնվազն զարմանալի յե:

— Բժիշկը հույս ունի:

— Յես պնդում եմ, — իստությամբ ասաց Գո-
լովինը, — յես բացարություն եմ պահանջում: Վիր-
տեղ ենք մենք:

— Զեղ անհրաժեշտ ե կազդուրվել...+

— Այդ գեղքում ասացեք, — վճռականորեն բարձ-
րացավ Գոլովինը, — ով ենք մենք: Զեր հյուրերն
ենք, թե... գերիները:

Լուռ հրաժեշտ տալով՝ յելլուպացին հեռացավ:

Դիշերը կատարվեց այն, ինչ վոր վաղուց սպա-
սում եր դեկապետը:

Բակուտան, Գոլովինի կողմը չնայելով, բարձ-
րացավ խսիրից ու դուրս յեկավ քարայրից: Նախա-
զգալով, վոր կարող ե անախորժություն տեղի ունե-
նալ, Գոլովինը հետևեց նրան: Բայց արդեն ուշ եր:
Բակուտան զայրույթով մոտեցավ զինված ճապոնա-
ցուն, և յերբ նա հրացանը բարձրացրեց, բռունցքի
զարկով տապալեց նրան: Ուշաթափված պահակը
գլորվեց քարայրի աստիճաներով: Գոլովինի կոչին
ուշագրություն չդարձնելով՝ Բակուտան անհայտացավ
մթության մեջ: Դեկապետն ուզում եր նրան կանգ-
նեցնել, բայց պահակի մասին հիշելով՝ իջավ ցած:
Նինայի ոգնությամբ նա ուշքի բերեց զինվորին:
Զուրը խմելով, շամած դիտելով քարայրի բոլոր ան-

կյունները՝ ճապոնացին նկատեց չորրորդի բացա-
կայությունը: Վայրի ճիշով նա վեր թռավ խսիրից,
վերև վաղեց ու վախեցած նահանջեց: Նա քիչ եր
մուռմ բաղիւիեր Բակուտայի հետ: Բոցմանը դան-
դաղորեն իջնում եր: Խենթացած ճապոնացուն մի
կողմ շպրտելով՝ նա ծանր քայլերով իջավ աստիճան-
ներով ու, բոլորովին շամած, նստեց Գոլովինի մոտ:

— Այդ ինչ կարող ե լինել, — ասում եր նա
շրթունքները հազիվ շարժելով: — Ավելանդը Պավլո-
վիչ, — շնչաց նա, բռնելով զեկապետի ձեռքերը, —
բացարացեք ինձ, յես խենթացել եմ, թե վոչ: Այս,
ինչ վոր յես տեսա, ամենազարմանալի առասպելներից
ել ապշեցուցիչ ե: Թե... թե... այդ բոլորն ինձ
թվացել ե...



ՎԵՑԵՐՐՈՌԴ ԳԼՈՒԽ

Ի՞՞ՆՉ ԵՐ ՏԵՍԵԼ, ԲԱԿՈՒՏԱՆ

Բակուտանդլուխը թափահարեց, կարծես ուզում եր հեռացնել ձանձրացնող մտքերը: Մի բոսք հետո, ույժ հավաքելով, նա արդեն ուզում եր պատճել Գոլովինին, թէ ինչ և տեսել բայց քայլեր լսելով, լոեց: Պահակ ձապոնացին, գլուխը բռնած, վերադառնում եր իր հրացանը վերցնելու: Զիթալամպի աղոտ դեղին լույսի տակ ծովագնացները նկատեցին, վոր պահակը գեռ վերջնականապես ուշքի չեր յեկել բոցմանի կործանիչ զարկից: Ճոճվելով, վոտքերը հազիվ շարժելով, ցավից ու բարկությունից գունատված, սակայն իր պարտքի մասին հիշող ձապոնացին կոացավ զենքը վերցնելու: Մի թոփչքով Անդրեյը մոտե-

ցավ նըրան, խլեց հրացանն ու անկյունը վազեց: Կատաղած պահակը վրա հասավ Անդրեյին ու գանակ բարձրացրեց: Բայց նրա ու նավաստու մեջտեղը կանգնեց նիսան: Մի ուժեղ շարժում — և ձապոնացին ընկավ քարերի վրա:

Զարմացած ղեկապետը մոտեցավ աղջկան:
Զգույշ, դուք կսպանեք նրան...

— Զմոտենա՞ք, — սպառնալից կերպով գոչեց նիսան, ու Գոլովինն ակամա ստիպված եր հետ քաշվել: Իր աչքերին չհավատալով, առաջին անգամ նիսային այդպիսի գրությամբ տեսնելով՝ նա նայում եր նրան: Նիսան գողում եր զայրութից: Պահակը, դանակը ձեռքից գցած, պառկած եր մեջքի վրա, և ահով նայում եր աղջկա ղեմքին:

Բակուտան բոպեյապես աշխուժացավ:

— Ղեկապետ, — բուռնցքները թափահարելով վորոտաց նա, — յեթե դուք չխանգարեք, մենք սրանց խանութը քար ու քանդ կանենք:

— Մեղ հետ վարվում են ինչպես գերիների հետ, — մտախոհ առաց Գոլովինը: — Մենք իրավունք ունենք բողոքելու:

— Ինչ վերաբերում ե իրավունքներին, — ասաց Բակուտան, — բավական ե, վոր դուք միայն հրամայեք, և յես նրա հոգին կիանեմ: Յես կարծում եմ, Ալեքսանդր Պալլովիչ, — սպառնալից կերպով նայելով պահակին՝ ավելացրեց նա, — վոր խորհրդային ծովագնացների կամքի վրա բռնացողներին հարկավոր և վոչչացնել ե...

— Ի՞նչ եք կարծում, — հարցրեց Գոլովինը, — նա արքեն հայտնել եր

— Յերբ եր կարող նա այդ անել, — համոզված

ասաց բոցմանը՝ — Բակուտայի հարվածից հետո մարդիկ դատելու ընդունակությունը կորցնում են առնվազն յերկու ժամով:

— Հանգստացե՛ք, — ասաց ղեկապետը, — Անդը բեյը և Նինան այստեղ կմնան, — հրամայեց նա, — ու պահակին կպահեն մինչև մեր վերադառնալը: Ժամանակ չկորցնե՞ք, գնանք:

Գիշերվա դով ողն սկսեց փչել նրանց գեմքին: Եեկապետը տեսավ աստղերը, լուսնի նուրբ մանդաղը և մերկ քարերը:

Մթության ու լուսության մեջ միայն Բակուտայի քայլերն եյին լսվում: Բոցմանն շատապում եր և բոռե առ բոռե հետ եր նայում: Բնազրաբար նրա որինակին հետևելով Գոլովինը գիտում եր չորս կողմը: Շուրջը միայն քարեր ելին: Կղզու վրա մարդկանց ներկայություն չեր զգացվում:

— Ի՞նչ եք ուզում ինձ ցույց տա՞ւ — հարցրեց Գուլիինը:

Բակուտան կանգ առավ:

— Գուցե ինձ . . . իսկապես թվացել ե . . .

— Պատմեցե՞ք . . . Յես սալասում ե՞մ . . .

Բոցմանը շվոթված քրթմնջաց:

— Յերեսունութ տարի յել լողում եմ . . . ինչ գարմանալի բաների մասին չեմ լսել . . . ինչ ասես, վոր չեմ տեսել . . . Բայց . . .

— Պահակի անհետանալն անմիջապես կհայտաբերվի, — խստիվ հիշեցրեց ղեկապետը, — մենք ժամանակ ենք կորցնում . . .

— Այդ դեպքում, — առաջ նետվեց բոցմանը, —

արտգ գնանք, և յեթե յես դեռ չեմ խննիլացել, դուք ինքներդ կհամոզվեք:

Նրանց առջե փայլեցին ովկիանոսի ջրերը, և յերկու րոսի անց ծովագնացները բարձրացան ուղիղ ջրի վրա կանգնած ժայռի կատարը:


— Ցած նայեցեք:

Բակուտան նախազգուշուն բռնեց ղեկապետի ձեռքը, և յերկուսն ել սառեցին այն տեսարանից, վոր բացվեց նրանց առաջ: Իրար ձեռք բռնած, նրանք լուս ծունկի յեկան ու գետնին կպչելով, գլուխները կախ զցելով, սկսեցին ներքև նայել:

Ովկիանոսի խորքում վառվուռմ եյին մանուշակագոյն գողդողջուն կրակներ: Թափանցիկ, կարծես ապակուց պատրաստված զմբեթը ծածկել եր անդունդը, վորը լուսավորված եր տարրինակ լուս սարձակներով: Հատակին, քամանած մետաղի կառուցումների միջով, դես ու զեն եյին զնում բազմաթիվ մարդիկ:

Մարդիկ ովկիանոսի հատակում: Բարձրությունից չեր յերկում, թե ինչնի են զբաղված նրանք: Սակայն մարդիկ, կենդանի մարդիկ, լուսարձակների ցնորական լույսի տակ, շարժվում եյին ստորջրյաբյուրեղապակյա շենքի մի ծայրից մյուսը:

Զարմանքից պապանձված ղեկապետը զիտութեր ապշեցուցիչ, Փանտաստիկ տեսարանը: Զրի տակ, զմբեթը պահող փայլուն սյուների միջև մարդիկ թվում եյին հեքաթային ստորերկրյա վորիներ: Սյուների միջով թեթև, հյուսված կամուրջներ եյին կախված: Ցեղ տվելի խորը, արդին մթության մեջ, հաղիկ նշմարվող կիսով չափ լուսավորված մարդիկ



Մօլի հատակում, մետաղյա հիասեանց կառուցվածքների ընուշը
խոնվում եյին բազմաթիվ մարդիկ:

ուսերի վրա՝ տեղափոխում եյին ինչ ։ վոր ծանր,
ձկնանման իրեր:

Գոլովինն ու Բակուտան այնքան լացել եյին
այդ տեսարանով, վոր չլսեցին իրենց հետեւ կա-
տարվող քայլերի ձայնը:

Պարոններ, գուք իզուր շտապեցիք:

Այդ բասերն արտասանեց մի ծանոթ ձայն՝
մաքուր ոռուսերեն լեզվով, նրանց գլխի վերև: Բարձ-
րանալով՝ Գոլովինն իր մոտ տեսավ յեկրոպացուն:

Հետագա դեպքերը կայծակի արագությամբ զար-
գացան: Դեկապետին ու Բակուտային շրջապատեցին
տասը զինված ճապոնացիներից կազմված մի ջոկատ:
Գոլովինին յենթարկվելով՝ բոցմանն իրեն զսպեց ու
հետեւ պահակախմբի պետի հրամանին: Գերիներին
հետ տարան զեպի քարայրը, վորի շեմքին, պողպատե
ձեռնակապանքներով կանգնած ելին Անդրեյն ու Նի-
նան: Պահակախումը կազմված եր միանման սպիտակ
լայն զգեստ հազած մարդկանցից: Ճապոնացիների
մարզազգեստների թեմերի վրա սեխն եյին տալիս
վրակարերը, արևի կլոր նշաններով: Յեվ յերբ փայ-
լեցին գրապանի ելեկտրական լապտերները, Գոլովինը
կապուեց, վոր պահակների վրակարերի շրջանակները
կապույտ գույնի եյին:

Պահակախմբի պետ ճապոնացու հետ խորհրդակ-
ցելով՝ յեկրոպացինն նրան տվեց պահակներին, ու
ջոկատը ճանապարհ ընկավ: Քարայրից վոչ հեռու,
շրջաղարձից այն կողմը, գերիներին ներս տարան
գետնուղու քարե կամարների տակ, վորտեղ սկսվում
եր գետնի տակ տանող անցքը: Հինգ րոպե անց ծովա-

դնացներին՝ կանգնեցրին ու նըանց գլխներին թթվածնային զործիքներով դիմակներ հաղցրին: Կամարապատ գեանուղով իջնելիս զեկապետն զգաց, վոր իր գեմքին ոդի հոսանք և փչում: Վայրեջքը մոտ տառ բուկե տեղ և, վերջապես, մեկը հանեց նրա դիմակը:

Նեղ քարե անցքը: Ճապոնացիները ճանապարհ տվին, ու մի քայլ անելով՝ Գոլովինն ու ընկերները կանգ առան ու մեապայլա պատի առաջ:

Պատի այն կողմը յերկար դղրգոց եր լսվում: Ինչ-վոր տեղում թնդում ու վնգում եր յերկաթը:

— Մենք ստիպված ենք մի քիչ սպասել — առաց Գոլովինին յեվրոպացին: — Վորեկ հարց ունեք,

— Դուք ոռւսերեն գիտեք, — դեռևս գտնվելով տեսած բաների ազդեցության տակ՝ հարցրեց Գոլովինը: — Հապա ինչու եյիք թաղցնում այդ մինչև հիմա:

— Ի՞արկե գիտեմ, — սառը հանգնությամբ պատասխանեց այն մարդը, վորին Գոլովինը կղդի յեկած որից համարում եր անդիացի:

— Բացի ոռւսերենից, յես տիրապետում եմ նաև քրանսերենին, շվեդական ու ոռոմինական լեզուներին:

— Մեղ ամենեվին չեն հետաքրքրում ձեր գիտելիքները, — կտրուկ կերպով ընդհատեց նրանց զեկապետը: — Յես պահանջում եմ հատկապես . . .

— Դուք պահանջելու իրավունք չունեք: Դուք կարող եք միայն խնդրել . . .

— Դուք հաշվի յեք առնում այն հանգամանքը, վոր մենք Խորհրդացին Սոցիալիստական Հանրապետությունների Միության քաղաքացիներ ենք: Զեղ չի

կարող հայոնի չկինել այն պատասխանատվությունը . . .

— Պարոն զեկապետ, — ժպտալով ուսերը թոթվեց կղզու բնակիչը, — դուք, ակներև և, բավականաչափ պարզ չեք պատկերացնում ձեզ, թէ վհրտեղ եք գտնվում և ինչ վիճակ է սպասում ձեզ:

— Յես ել հենց այդ եմ ուզում իմանալ:

— Կրկնում եմ, դուք ուղելու իրավունք չունեք: Դուք պետք և յենթարկվեք ու լուեք:

Դղրգոցը կտրվեց, ու պատն անմիջապես առանց աղմուկի բացվեց: Պահակների ուղեկցությամբ ծովագնացները մտան անցքով, և յերբ պատը նորից փակվեց, նրանք մնացին բացված խորը խավարի մեջ: Զանցավ մի բոպե բացվեց յերկրորդ պատը, և դեկապետի աչքերը շացրեց լասամանու գույնի ուժեղ թափանցող լույսը:

— Յերբեք, — առաջ շարժվելով ասաց յեվրոպացին, — գիտցեք, վոր յերբեք դուք այստեղից չեք դուրս գա:

Բայց զեկապետն արդեն վոչինչ չեր լսում:

Պայծառ լուսարձակներից շլացած՝ նա տեսալ դիրիժարվ անդարի նմանվող մի հազին շենքի ուրվագծերը, Բայց ահա աչքերն ընտելացան լույսին և, շրջապատը պարզորոց տեսնելով, նա նկատեց գաղորոք ովկիանոսի հատակին իր տեսած թափանցիկ սյուները:

Կողքին լովեցին դանդաղ, հավասարաչափ քայլեր, ու շուտով մարդիկ յերեացին: Ճապոնացիների գիտողության ներքո քայլող այդ մարդիկ սարսափենելի տեսք ունեյին: Ճապոնացիների հազին նույնալիսի սպիտակ տարագ եր՝ կապույտ արևի նշանով, ինչպես և ծովագնացներին ուղեկցող պահակների վրա:


Ալևր, մեռելների նման դեղնած, չորացած,
ուժասպառ կախված ձեռքերով կորեացիները, աչքերը
փակած, կռացած, դանդաղ քայլում եյին յերկար շար-
քով, ուսերի վրա տանելով յերկնագույն, մինիատյուր
ստորջրյա նավեր: Թվում եր, թե նրանց մարմինների
միջև թափանցում են լուսարձակների ճառաղայթները:
Նրանց նիհար, ծոված, ջլոտ վառքերը ցնցվում եյին
ամեն մի շարժումից:

Բարակ սյուները բարձրանում եյին դեպի վերև:
Լուսարձակների լույսից պսպղացող դմբեթի տակ,
պատշամբների նման, յերկում եյին մետաղի հրա-
պարակներ՝ կլոր, ապակեպատ խցիկներով: Գմբեթից
կախված պողպատե տրոսի և ճախարակների վրա
կախված եյին տորսիկային կատերներ: Այդ արտա-
սովոր անգարը մի հայացքով ընդզրկելով՝ Գոլովինը
տեսավ վոսկեգույն, քմահաճ կերպով իրար հյուսված,
դոնչացնող խողովակները: Դժվար չեր հասկանալ, վոր
նրանք ողափոխության են ծառայում: Յեկ կրկին,
մերկ վոտքերն անաղմուկ շարժելով, մոտից անցան
վերադարձող կորեացիները:

— Բավական ե, հետեւցեք ինձ, — հրամայեց
յերպապացին: Վերջին կորեացիների գնալուց հետո
լսվեց շշակի թախծոտ ձայնը, հանգան լուսարձակ-
ները, և ընկերները շարունակեցին իրենց ճանապարհը
մթության միջով:

Բայց այս ի՞նչ կողի յեւ ֆանտաստիկ յերազ չե՞
արդյոք — ստորջրյա յերկիր, հատակի ճրագներ և
կապույտ արեի նշանով մարդիկ: Ո՞վ գերի դարձրեց
զեկապետ Գոլովինին ու նրա յերեք ընկերներին:
Բայց յեթե խոսքը հասավ Փանտաստիկային, մենք

վորոշ փաստաթղթերի կղիմենք: Ինչպես և առաջ,
մենք ստիպված ենք հիշելու թերթերում լույս տես-
սած հեռաղերը, վարոնք հիանալի կերպով կողնեն
մեղ պարզելու, թե Խաղաղ ովկիանոսում յերկար թա-
փառելուց հետո ուր և ում մոտ եյին ընկել կործան-
ված նավի ծովագնացները:



ՅՈԹԵՐՈՌԴ ԳԼՈՒԽ

ՍԵՎ ԺԱՅՅՈՒ ՄՈՏ

Մեր պատմվածքի հետ ամենամոռ առնչություն ունեն բազմաթիվ յեվրոպական ու ամերիկական թերթերում հրապարակված յերկու կարճ հաղորդագրությունները — մեկը՝ Շանհայից, մյուսը՝ Վիկառիայից (Բրիտանական Կոլումբիա): Շանհայի հեռագիրը թերթերում հանդիս եր յեկել հետեւյալ վերնագրով. «Յերկու հարյուր կորեացու անհետացումը»: Ահա այդ հեռագրի տեքստը.

«Կորեայի գյուղացիների ցնցող աղքատությունը հայտնի յեւ ամբողջ աշխարհին: «Շունկյուռ» — այդ բառը դուք Կորեայում կլսեք ամեն քայլափոխին: «Շունկյուռ» — նշանակում եւ «գարնանալին տառապանք»: Ամբողջ գարնանը ընթացքում, մարտից մինչև հունիս, վեց միլիոնից ավելի գյուղացիներ սարսափելի քաղց են ապրում: Յերբ գալիս եւ «Շունկյուռ»

ժամանակը, դժբախտները սնվում են խոտով, արմատիքներով, ծառերի կեղևով:

Վերջերս հեռավոր կորեական գյուղերում ոտարերկրացի հավաքագրողներ են յերկացել: Մեծ մասմբ դրանք ձապոնացիներ եյին, վորոնք հանկարծակի յերեռում եյին յերկրի խորքերում, սովոհարըյուղերում, տանում եյին տասնյակներով գյուղացի ու ձկնորս կորեացիներ: Ուշագրավ եւ այն փաստը, վոր յերիտասարդ տղամարդկանց հավաքագրելով՝ խորհրդավոր գործակալներն ընտրում եյին բացառապես այնպիսիներին, վորոնք վոչ մի բարեկամ չունեյին: Այդպիսով վոչ վոք չգիտե, թե ուր են կորել յերկու հարյուր կորեացիները: Մինչեւ այժմ նրանցից վոչ մեկը հայրենիք չի վերադարձել: Նրանց անհետանալը հուզում ու տագնապ եւ առաջացրել բազմաթիվ գյուղերում»:

Յերկրորդ թղթակցության վերնագիրն եր՝ «Գիշերային տեսիլ» և բովանդակում եր Կանագայի ջրագրական «Նայադա» նավի այն նավապետի ինտերվյուն, վորը վերադարձել եր Խաղաղ Ովկիանոսում յերեք ամիս նավելուց հետո:

«Մեկ որ ուժեղ փոթորկի ժամանակ, — հայտնեց նավապետը, — յես ստիպված եյի փոխել ուղղությունը և կանգ առնել ծովում՝ սպասելով յեղանակի պարզվելուն, վորպեսզի ավելի ճիշա վորոշեմ, թե նավը վնասեղ եւ գտնվում: Գիշերվա կողմը փոթորկիլ դադարեց, յեղանակը պարզվեց, և հանկարծ, յերեք մզոն հեռավորության վրա, մենք մթության մեջ նկատեցինք ինչ վոր անսովոր փայլ: Աստղերի միջոցով մենք կարողացանք վորոշել վոր գտնվում ենք Միգույյ ամերիկական կղզուց հյուսիսարևելյան ուղղության վրա: Առեղծվածային լույսը մերթ փայլում

եր, մերթ հանգչում, և նրա լույսի տակ յերեռում եր մի փոքր, թեքված, ու ժայռ: Յես իսկույն ճանաչեցի այդ անկյանք, ամայի, անանուն կղզին, վոր հրաւ բխային ծագում ունի: Նա շրջապատված և ստորշը յայուերով, վտանգավոր «խրուտներով», և վոչ մի նավ չի մոտենում նրան: Այդ անհասկանալի յերեռյթն ել ավելի հետաքրքրեց ինձ: Սպասելով լուսաբացին՝ յես անձամբ, յերկու նավաստիների հետ նավով գնացի կղզի, սակայն վորքան մեծ յեղավ մեր զարմանքը, յերբ մոռայլ, ճաքճքված քարերի միջև մենք վոչքի չգտանք: Հինգ րոպեյում մենք շրջեցինք ամբողջ կղզին: Քարայրում, վորն, ակներև ե, փորել ելին առաջին ուսումնասիրողները, մենք մարդկային հետքեր չգտանք: Յես կհրաժարվեյի իմ տեսածից, — լրացրեց նավապետը, — յեթէ ինձ հետ միասին գիշերային տեսիլը չդիտեյին արշավախմբի նաև մյուս անդամները»:

Թերթերի թղթակցությունները թողնելով՝ վերադառնանք մեր ընկերներին:

Նըսնք այդ գիշեր չքնեցին կամի ճրագաթասը աղոտ լույս եր տալիս յերկաթե պատերին ու բրեգենտե չորս մահականերին:

Շշակի տիուր վոռնոցից նրանք յենթադրեցին, վոր արգեն առավոտ ե, և չեյին սխալվել Դուռը բացվեց, և ելեկտրական լապտերը ձեռքին ներս յեկավ մեղ արդեն հայտնի կղզու բնակիչը:

Սիգարետ ծխելով՝ յելքոպացին նստեց մահակին և, կարծես վոչինչ չեր պատահել, հարցրեց:

— Հարցեր ունե՞ք:

— Նըսնք հայտնի յեն ձեզ, — մոռայլ հիշեցրեց դեկապետը: — Մենք սպասում ենք:

— Այդ գեղքում, — առաց յելքոպացին, — ուշադիր յեղեք: Յես հույս ունեմ, վոր գուք չեք տիսրի: Ուրեմն սկսենք սքանչելի արևադարձային առավոտի նկարագրությունից: Թեպետ և այդ կարող ե պատահել ցերեկը, յերեկոյան, գիշերը, հողմի ու փոթորկի ժամանակ: Բայց առավոտը շատ ավելի եֆեկտավոր եւ

Ովկիանոսի վրա բարձրանում ե արեւ: Յերկնագույն ող ե ու հայելանման կապտություն: Լողում ե ուղղմական նավերի փառահեղ եսկաղը: Հրեշտակոր ավիակիբներ, արագընթաց կրեյսերներ ու ականակիբներ... Վերցնենք որինակի համար... յենթագրենք... վոր այդ ամերիկական եսկաղը: Աշխարհիս ամենամեծ նավատորմիղը գուրս ե յեկել Սան-Դիեգոյից, անցել ե Կալիֆորնիայի ծաղկավետ յեղբերով ու այժմ՝ ովկիանոս ե գուրս գալիս: Շլացուցիչ լույս ե, հանգարտություն, նավատորմիները հանգստանում են նավավրանների ստվերում, և հանկարծ... ավիակիբը ցնցվում ե: Պայթյուն ե լավում, նավը ուժեղ թեքվում ե, ջրից գուրս ե ցայտում ծխի ամպ, ու նավը բռնվում ե կրակով: Նա ծանը թեքվում ե, շրջվում ե և իջնում ծովի հատակը: Մի պայթյուններ հետեւում ե մյուսը, և բոլոր նավերը, ծխով ու բոցով պատահ, հողս են ցնդում:

Գլանակը գեն շարտելով՝ յելքոպացին լիրը ծիծաղով բացականեց:

— Համաձայնեցեք, վոր յես գուրեկ չեմ գրական տաղանդից: Ի՞նչ հիասքանչ տեսարան ե: Յերկնագույն ովկիանոս, հեռավոր ափեր, վորտեղ տաքարեկի տակ արմավենիներն են բարձրանում, և հանկարծ՝ կրակ, ջրի հրեշտակոր շատրվաններ, ծովային

ականներ են պայթում, լսվում են խելահեղ մարդկանց տղաղակներ, նավերը սուզվում են, ովկիանոսը փըրփւրել ե, ահոելի շրջաններ են ոլանում — և նորից ովկիանոսը հանդարտ ե: Միայն արեստ մակերեռոյթի վրա լողում են խիտ, չարագուշակ նավթի բծերը: Հեռվում յերեսում են այժմ արդեն անպաշտպան յերկրի կանաչ յեղքերը: Չե, յես հաստատաբար բեկետրիստ եմ դառնում:

Գոլովինի աչքերին գննող հայացք զցելով՝ յեկը րոպացին լուց: Նա դիտում եր, թե ինչ տակավորություն թողեցին Գոլովինի վրա իր խսոքերը: Բայց զեկապետը պահպանում եր իր սովորական անտարբերությունը: Մի բոպեյի չափ սպասելով՝ պատմողն ավելի մոտ նստեց զեկապետին և արդեն ուրիշ, չոր, կոշտ տոննով շարունակեց.

— Այդպիսով յես ձեզ բացատրեցի ամեն ինչ: Մտածեց միայն, թե ամերեկական եսկաղըայի մոտ վճրեղից պետք է հակառակորդի ստորջրյա նավեր յերեային: Իսկ վոր հակառակորդն ապագայում անշուշտ պատերազմ կակսի առանց նախազգուշացման, հանկարծակի հարձակումով, այդ պարզ ե: Հասկաննեմ եք: Յեթե վոչ, յես ավելի մանրամասն կպատմեմ: Յենթադրենք, վոր Խաղաղ ովկիանոսի ուղիղ կենտրոնում գաղտնի սարատեղիական բազա գոյություն ունի: Անբնակ, անպետք մի ժայռոտ կզզի, իսկ նըատակը, ովկիանոսի հաստակին, հսկա ստորջրյա կրեյսեր: Դուք ծովային եք, և յեթե ստորջրյա հսկաներ չեք տեսել, համենալին դեպս լսել եք նրանց մասին: Ստորջրյա կրեյսեր, վորի վրա մի քանի հարյուր մարդ կա: Նա կարող է տարիներով մնալ հատակին: Ժամանակ

առ ժամանակ, մութ, անլուսին գիշերները նա բարձրանում ե ծովի մակերեռույթը, լրացնում ե թթվածնի պաշտպանութիւնը և լիցք տալիս ակումուլատորներին:

Հեռավոր հայրենիքից այդ ժամանակամիջոցում տրանսպորտային նավեր են գալիս: Նրանք սարքավորում ու սննդամթերք են բերում և գիշերվա մթության քողի տակ այդ բոլորը փոխադրվում ե կղզու ստորերկյա քարայրների մեջ: Նավը հետ ե դառնում՝ կրակները մարած, իսկ հետեւյալ որը նա լողում ե այն սովորական ուղիներով, վարոնցով շարժվում են ձապոնիայից, Զինաստանից Ամերիկա ու գեղի կղզիները մեկնող տասնյակ նավեր: Ուրեմն, անբնակ կղզու մոտ, ու ժայռի տակ գտնվում ե «Կապույտ արևի ամրոց» հսկայական ստորջրյա կրեյսերը: Չեղ դժւը ե գալիս այդ անունը: «Կապույտ արևի ամրոցը» համարյա վոչնչով չի տարբերվում ժամանակակից ստորջրյա կրեյսերներից, միայն թե նրանցից մի քիչ մեծ ե և հիանալի տեղ ե գտել իրեն համար: Սակայն տեխնիկայի ինչպիսի հրաշքներ են թագնված ովկիանոսի հատակում գտնվող այդ ստորջրյա ամրոցում: Կրեյսերը պառկած է քարքարոտ գետնի վրա, ժայռին հաղիվ կազենով: Կղզուց խորը ստորերկրյա անցք ե փորած, և ալդ անցքի միջոցով կրեյսերը կապված է ստորերկրյա կրեյսերը կրյա շենքի հետ, վարով գուք պատիվ ունեցաք հատակին հասնել: Յերբ կրեյսերը պատրաստվում է վերև բարձրանալ, ստորերկրյա անցքը փակվում ե զրահապատ սալաքարով: Նույն ձևով ծածկվում ե և կրեյսերի շրթին յեղած անցքը: Բայց գեռ մենք հսկայական կառուցումներ պետք ե շինենք: Ստորերկրյա զլխավոր անցքը մի քանի ճյուղավորում պետք ե ունե-

նա ոռւմբերի հսկայական պահեստարանների համար։
Կրեյսերը կոչվում է «Կապույտ արևի ամրոց»։
Բայց յեթե այդ իմ կամքից կախված լիներ, յես նրան
կանվանելի «Ամերիկայի կործանում»։ Նշանակված
որը, յերբ Պահամայի ջրանցքը կալայթեցվի, և Աս-
լանտյան ովկիանոսի նավատորմիով շրջանաձև ուղիղով
կդնա Հարավային Ամերիկայի բուրքը, Կալիֆորնիայի
լեզրերի մոտ խաղաղ-ովկիանոսյան եսկաղըան հոգս
կցնդի։ Կրեյսերի կողքերից, ծովալին ականների նման,
սորոջրյա նավեր են ոլանում։ Նրանք լցված են պայ-
թուցիկ նյութերով, դեկավարվում են ուսդիոյով, ոլա-
նում են վոչ մի կասկած չունեցող հակառակորդի
կողմը, և հիանալի արեսու մի առավոտ Միացյալ
Նահանգների ծովային հղորության վախճանն և վրա
հասնում։

Նավերի ուղին այստեղից մի կողմ և դանվում։
Միայն հաղվագյուտ գեղքերում մենք հորիզոնում
ծուխ կամ աղղանշանի կրակներ ենք տեսնում։ Ովկիա-
նոսում գասավորված են ձայնորսիչներ և տելեվիզոր-
ներ և նրանց միջոցով մենք տասը մղոն հեռավորու-
թյան վրա լսում ու տեսնում ենք անցնող նավերին։
Հուսով եմ, վոր բավական ե։ Սակայն լսեցեք տեխ-
նիկայի հրաշքներից մեկի մասին ևս, «Կապույտ արե-
վի ամրոցի» տախտակամածը բաղկացած և ապակու
նման թափանցիկ և մետաղի նման ամուր մի ձուլ-
վածքից։ Բայց մենք մի դժբախտություն ունենք այդ՝
մարդկանց պակասությունն ե։ Այստեղի համար գաղտնի
կերպով մարդիկ հավաքագրելն ու բերելը չափազանց
մեծ աջասատանք ու գրուշություն և պահանջում։ Պետք
ե խոստովանեմ, դուք շատ ժամանակին յեկաք . . .

— Յեվ դուք ուղղում եք մեզ ստրուկ դարձնել, —
ասաց Գոլովինը։

— Ո՛, վհչ Բարեխիղմ աշխատանք, լիակատար
յենթարկում և հաջող պատերազմից հետո դուք
կպարզեալովեք . . .

— Մի՞թե հարկավոր ե հիշեցնել, վոր մենք
խորհրդային ծովայիններ ենք . . .

— Հետո ի՞նչ։ Ցես ել ասիացի չեմ։ Ոգտվում եմ
հանգամանքից ձեզ ներկայանալու Միխարդ Ալենդորֆ,
գերմանական նավատորմի ստորջրյա ֆլոտիլիայի
ղեկավար, այժմ կոնսուլտանտ։

— Զեր համեմատությունն առնվազն անի-
մասս ե։

— Կոպիտ մի լինեք։ Գնահատեցենք իմ արամա-
դրությունն ու հակումը դեպի ձեղ, վոր գեռես վոչնչով
չեք արդարացրել։ Մենք այստեղ միակ լիվրովացիներն
ենք, և ձեր մեջ սիրելի որիորդը։ Յտեսությունն, ձեր
ընկերների հետ խորհեցե՛ք, թե վհր աշխատանքն
ավելի հարմար ե ձեղ համար։

Ապա, շինծու ձեականությամբ, յեվրոպացին
հրաժեշտ ավեց ու, դուն մոտ կանգ առնելով, ավե-
լացրեց։

— Իմ անկեղծությունն իհարկե վորոշ հիմք
ունի։ Ցես արգեն պատեղ եմ ունեցել ձեղ հայտնելու,
վոր դուք այստեղից յերբեք չեք հեռանալու։

Նրան հետեւեցին Բակուտայի հազարավոր անեծք-
ները, Ղեկապեալ հաղիկ հանգստացրեց զայրացած
բոցմանին։

— Մենք պետք ե յենթարկվենք, — միքիչ խոր-
հելով ասաց դեկապետը։ — Մենք բոլոր միջոցները

պետք եւ գործադրենք՝ այստեղի բոլոր ծակուծուկն իմանալու համար։ Մեր փրկությունը դրանից եւ կախված։

* * *

Անցավ ելի մեկ որ և մեկ գիշեր։ Առավոտյան դուան հետեից լսվից շշակի մեղմացրած վոռնոցը, քայլերի ձայներ լսվեցին, և շեմքին յերեվացին մռայլ դինվորներ՝ կանաչ, մեռելային դեմքերով։ Կիսախավար անցքերով ծովայիններին տարան մի խոնավ գետնուղի, վորտեղ անխոս կորեացիներն ածխալամզի աղոտ լույսի տակ փորում եյին հողը և քլունդներով մանրում քարերը։ Գետնուղու յերկու կողմը ներքնատներ ելին կառուցվում — պայթուցիկ նյութեր պահելու համար։ Խոնավության, տոթի ու կիսախավարի մեջ մարդիկ լարված ավտոմատների նման ելին շարժվում, իսկ պատերի տակ, վորոնց վրայով պղտորավակներ եյին հոսում, կանգնած եյին պահակները։

Բակուտային ու Անդրեյին ներքնասրահում թողին, Գոլովինին տարան այն անգարը, վորտեղից յերեկ կորեացիները մինհատյուր ստորջրյա նավերն եյին տանում։ Ալենդրովը ցանկանում եր դեկապետին իր կողմը գրավել, այդ պատճառով թեթև աշխատանք տվեց նրան։ Յեվ Գոլովինը, ճապոնացի դինվորների հետ միասին, մինչև ուշ գիշեր ակումուլյատորի վագոնիկով փոխադրում եր թթվածնի բալոնները։ Նենային Ալենդրովը տարավ հրամանատարական խցիկները, վորոնք կիսաթափանցիկ զմբեթի տակ եյին գտնվում ու սառը քաղաքավարությամբ հայտարարեց։

— Վորքան ել այդ ցավալի լե՞ մեզ մոտ չկամ մարդ, վորը վորեե պարտականություն չկատարի։ Այդ պատճառով, սիրելի որիորդ, դուք ստիպված պետք եւ լինեք խցիկներն ու սրահները մաքրելու։

Աղջիկը, վորին նախազգուշացրել եր Գոլովինը, առանց մի խոսք ասելու յենթարկվեց և խկույն սկսեց մաքրել սենյակները։ Նրան անընդհատ հետեւում եր պահակը . . .

Գիշերը նորից լսվեց շշակի ձայնը, և չորս ընկերները նորից հանդիպեցին յերկաթե սենյակում։

. . . Հինգ որ ծովայիններն անխոս աշխատում եյին պահակների անընդհատ հսկողության տակ։

Հինգերորդ որը Բակուտան աշխատանքից չափանց շփոթված վիճակում վերադարձավ և սովորականից շուտ, շտապելով, պառկեց քնելու։ Շուտով կատաղած սենյակ ներս վազեց Ալենդրովը։

— Պարոն զեկապետ, — մոնչաց գերմանացին, — զգուշացրեք ձեր ընկերոջը . . . կը կնվերտ դեպքում — կգնդակահարեմ տեղնուտեղը։

Դուռը կատաղորեն խփելով՝ Ալենդրովը հեռացավ։

— Ի՞նչ եւ պատահել, բոցման, — հարցրեց Գոլովինը։ Յես չեմ կարծում, վոր դուք կուզենաք ընկերներին անհարմար զրության մեջ դնել

Բակուտան քնած չեր։ Մահճակալի վրա բարձրանալով՝ նա շփոթված ցած նայեց ու քրթմնջաց։

— Ներեցեք, Ալեքսանդր Պալովիչ յես, իրոք վոր, կարծեք սխալ բան եմ արել . . .

— Սացեք . . .

— Ի՞նչ ասեմ, ձապոնացին . . . ինչ վոր սպա . . .

կորեացուն վոտքով հրեց: Յես չղիմացա ու, . . . ու . . . ,
յես ծհծեցի . . .

— Դուք մասել եք նրան, բոցման:

— Վ-վ՞չ, — անվճռականորեն պատասխանեց
բոցմանը, — կարծեմ, չեմ սպանել . . .

Դեկապետն այլես վոչ մի հարց չտվեց Բակու-
տային:

Միառժամանակ խորհելուց հետո նա կտրակա-
նապես հայտարարեց,

— Վերջ! Մենք դադարեցնում ենք աշխատանքը:

ՈՎԿԻԱՆՈՍԻ ՀԱՏԱԿԱՐԱՄ

(Հատված դեկտապես Գոլավիթի գրանցումներից ¹⁾):

« . . . Յեզ մենք սովագուլ հայտարարեցինք: Ռւրիշ
ինչ յելք ունելինք: Ակրում յես առանց վերապահու-
թյան համաձայնում եյի աշխատել և մեծ գժվարու-
թյամբ կարողացա համոզել ընկերներիս, վոր նրանք
զսպված լինեն ու լենթարկվեն: Սրտիս խորքում յես
— Նավապետ, չե՞ վոր մենք այստեղ հավաքվեցինք վոչ լոկ ծանոթանալու ու հեռանալու համար: Յես յենթադրում եմ, վոր մարդիկ հանդիպում են գործի համար, իսկ յուրաքանչյուր գործ ժամանակ է պահանջում:

Իրվինգը թախանձագին շարժումով առաջարկեց Գոլովինին, վոր նստի: Գոլդինգի աչքերը փակվեցին, գլուխն ավելի ցած կախվեց: Սակայն հանկարծ ծերուկը ցնցվեց, ու նրա հայացքը աշխուժացավ:

— Միստեր Գոլովին, — անսպասելի ժրածան արագությամբ արտասանեց նա, — յես գեմ չեմ, վոր նավապետ Իրվինգը դեպի Պանամա կատարելիք իր հերթական նավազնացության ժամանակ մի քանի որով շեղվի իր ճանապարհից և զննի ձեր մատնանշած կղզին: Հայտնի՞ յե ձեզ, արգյուք, թե այդ շեղումը և նավի ուղացումը քանի հազար դոլար կնստեն:

— Նավապետ Իրվինգն ինձ տեղյակ չի պահել իր ծրագրերին, — պատասխանեց Գոլովինը: — Միթե ինձ հարկավոր ե զիտենալ ծախսերի գումարը:

— Անհրաժեշտ ե, — խրատող ձեռվ ասաց Գոլդինգը: — Զեմ թագցնի, վոր ամրոցը հայտնաբերելու դեպքում մեր ընկերությունը մեծ պարզե կստանա իր գյուտի համար: Յես ել չեմ խսում ուեկլամի մասին: Միստեր Գոլովին, ինձ հետաքրքիր ե իմանալ թե գուք վորքան վարձատրություն եք ուզում ստանալ այդ նախարկության համար:

— Ակներեն, վոր մենք իրազ չենք հասկանում, — եր զայրութը չզսպելով ասաց դեկապետը: — Նավապետ

Իրվինգին, վորը զիտե ալն վայրի կորդինատները, վորտեղ ինձ գտել եւ «Պրեզիդենտը», ավելի լավ եւ ծանոթ կղզու մոտավոր տեղը։ Բացի այդ, դուք ինքններդ հիշեցիք խաղաղությանն սպառնացող վտանգի մասին։ Այլևս ինչ խոսակցություն կարող եւ լինել դրամի մասին։

Գոլդինգն, ըստ յերկութին, զոհ մնաց Գոլովինի պատասխանից: Սակայն, մի քիչ լոելուց հետո, ավելացրեց.

— Մենք վորոշ ծախս ենք վերցնում մեզ վրա
այդ նավարկությունը կատարելով։ Մակայն յեթե
պարզվի, վոր ստորջրյա վոչ մի ամրոց գոյություն
չունի, իսկ ձեր պատմածը, թույլ ավելք ասելու...»

— Թանկագին միստեր Գոլդինգ. — յերկշուռ-թյամբ մեջ բերեց մինչ այդ լոսող իրվինգը, — յես յերաշավորում եմ, վոր զեկապեան իսկական ճշմարտություն ե պատմում:

— Մեղնից յուրաքանչյուրը թող մնա իր կարծիքին, — նավապետին ընդհատեց Գոլդինզը: — Ես տրամադրում եմ նավը: Կարծում եմ, բավական ե: Ինչ վերաբերում ե միստեր Դոլովինին և վարձատրությունից հրաժարվելուն, միթե յս կարող եմ առարկել: Յերբ եք մտադիր շարժվել, կապիտան:

— Բեռնումն սկսվում է վաղը առավոտյան։ Վաղը
չե մյուս որը, ձեր թուլավությամբ, յես կմեկնեմ
Սան-Ֆրանցիսկոյից։

— Հաջող նավարկություն եմ ցանկանում, — ծանր հառաջելով արտասանեց Գոլդինգը, Նա բարձրացավ բազկաթուից:


Դանդաղ մոտենալով դռներին՝ նա դարձավ դեպի

իրեն ուղեկցող իրվինզը. — Մտածեցէք, նավապետ, դուք
դեռևս ամբողջ մի որ ունեք: Յես համաձայն եմ...
բայց հիշեցէք, իրվինդ, մինչ այս լուսեն յես հավա-
տում եյի ձեզ: Հրամայեցէք, վոր սենյակում մի զույգ
հովհարներ ել դնեն, ձեզ մոտ չափազանց շոգեց, իր-
վինդ:

Մայիսի 14-ի լուսաբացին «Յուպիտերը» մեկնեց
Սան-Ֆրանցիսկոյից։ Տախտակամածում, խողովակ-
ների միջև, էերկու սյունից ամրացրած պատվանդառ-
ների վրա, գրված եր պղնձապատ փայլուն ջրասու-
զական նավակը։

Մեկնելու վերջին բոպեյին, յերբ նավաստիները
բարձրանում եյին նավասանդուխքը, նավահանգիստ
յեկալ մի փակ ավտոմեքենա: Նրա լուսամուտում մեկ
վայրկյանով յերկաց մի ճապոնացու դեմք, և ավտո-
մեքենան անհայտացագ:

Մենք բաց ենք թողնում «Յուլիտերի» ոկյսի
կարագրությունը: Բավական ե ասել, վոր բարեհա-
ղող յեղանակի պայմաններում նավը չորրորդ որը
ասավ այն վայրին, վորտեղ սրանից կես տարի ա-
ռաջ «Պրեգիդենտը» փրկել եր Գոլովինին: Մայիսի
8-ին, ցերեկվա ժամի 2-ին ովկիանոսում յերկաց հա-
իվ նշմարվող միայնակ քարե կզկին ու սև ժայռը:
ուղված ղեկապեաը վոչ մի րոպէ չեր տարակուսում:
յն, այդ հենց այն ժայռն եր, վորի գագաթից նա,
ոցման Բակուտայի հետ միասին, մեկ անգամ տեսել
ո ովկիանոսի հատակում յեղած կրակներն ու մարդ-
անց:



ՏԱՏՈՎՈՐՄԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«ՅԵՐԴՎՈՒՄ ԵՄ, ՍՍ. ԱԹՆ ԿՊ.ԶԻ՞Ն Ե»

Ժայռի կապուլտ ուրվագիծ, Ղեկապետ Գոլովինը,
կպչերով նավապետի կամքջակի յեզրից, այլևս վոչինչ
չեր նկատում և չեր լուրմ Իրվինգի ձայնը, վորն իրեն
հեռադիտակ եր առաջարկում:

«Ցուպիտերը» դանդաղեցրեց ընթացքը:

— Ստոր, — հրամայեց Իրվինգը մեքենասենյակի
խոսափողով, — Դատելով ձեր տեսքից, — քաշեց նա Գո-
լովինի թեր, — սա հենց այն կղզին ե...

Ղեկապետը զսպեց հուզմունքն ու վճռականորեն
հաստատեց.

— Կասկած չկա: Սա հենց այն կղզին ե:

— Հրաշլի յե, — զլուխը թափ տվեց Իրվինգը և

ձայն տվեց նավի անձնակազմին, — Իջեցրե՛ք ջրասու-
դական նավակը: Ինձ հետ կզան ջրասուզակը, մոտո-
րիստը, յերեք նավաստի և ազգարարը: Ռադիոստը թող
անընդհատ կապ պահպանի Սան-Ֆրանցիսկոյի հետ:
Մեր ազդանշաններն անմիջապես կհայտնեք:

Օուրը փրփրացնելով՝ թեթև նավակը սլացավ
դեպի կղզին, և շուտով ղեկապետի աչքերի առաջով
անցավ ջրի վրա թերված ժայռը: Նավակը մոտեցավ
ափին կանգնեցրած մոտորով, և Գոլովինը առաջինը
ցատկեց շիկացած, հարթ գորշ քարերի վրա:

«Ի՞նչ և կատարվելու հիմա, — տենդագին աշխա-
տում եր պատկերացնել ղեկապետը. — Բակուտան, Նի-
նան, Անդրեյը: Կենդանի՞ յեն արդյոք նրանք: Ի՞նչ
են ձեռնարկելու «Կապույտ արևի ամրոցի» իշխանա-
վորները:

Ղեկապետը վազեց դեպի ժայռը: Իրվինգը, պոկե-
լով գլխից իր գլխարկը, հետեւց նրան...

Լոռւթյուն ե: Իրվինգի ձեռքը բռնելով՝ Գոլովինը
բարձրացավ ժայռի գագաթն ու ընկավ ծնկների վրա:
Գետնից կպչելով՝ նա սկսեց ցած նայել, դեպի ովկիա-
նոսի կանաչ խորքերը:

Սկայն վճիռ խորքերում յերեռում եցին միայն
արծաթագույն ձկնիկները:

Ծովագնացները յերկար պառկած մնացին, հույս
ունենալով, վոր ստորչըսա նավի ուրվագիծը կտեսնեն
կանաչ անդունդում:

— Նավակը դեպի ժայռը, — վոտքի կանգնելով ու
ձեռները ձայնափողին ման ծալելով կանչեց Իրվինգը: —
Այդպես նայել չարժե, — հասկանալով, թե Գոլովինը
ինչ ապրումներ ունի, ասաց նա: — Մենք այդպես վո-

չինչ չենք տեսնի: Այժմ, բարեկամու, ամեն ինչ կպարզ-
վի:

Ներքեռում աղմկեց մոտորը, և նավակը մոտեցավ
ժայռին:

— Իջեցնել ջրասուզակին, — հրամայեց իրվին-
գը, — նախորոք չափելով խորությունը: Զիմ կասկա-
ծում, — հաղիկ լսելի ձայնով ասաց նա, — ճապոնացի-
ները տիրապետում են քողարկման գաղտնիքներին:
Սակայն ջրասուզակը վայրկանապես կպարզի ամեն
ինչ...

Նավակի քթի մոտ յերկու նավաստի հագցնում
եյին ջրասուզակին: Տասը ըոսկե լուռ անցավ, վերջա-
պես փայլեց պղնձյա սաղավարտը: Իրվինգը մտադրադ
կրկնեց.

— Այժմ մենք կիմանանք ամեն ինչ:

Պտտվեց ջրհանի անաղմուկ անիվը: Ջրասուզակը
դժվարությամբ գցեց վոտքերը նավեղի այն կողմը,
իջավ նավասանդուխքով ու սուզվեց ջրի մեջ: Յեվ
ահա ջրի մակերեսին մնաց միայն մեծաչքանի սաղա-
վարտը: Ապա փայլուն մետաղյա գլուխն անհետացավ,
ու յերկնագույն ջրի վրա յերեացին ու չքացան բըշ-
տիկները:

— Խորությունը չափած ե, — հարցրեց իրվինդը,
թեք ընկնելով ժայռի վրա: — Վորքան ե:

— Ժայռի տակ քառասունվեց մետր ե:

— Հեռախոսի վրա՞ յեք:

— Յեղավ, հեռախոսի վրա, — ձայն տվեց նավաս-
տին, վոր յերկու ձեռքով փողը սեղմել եր ականջներին:

— Լսելիությունը:

— Հիանալի լե:

— Ջրասուզակը գետնի վրա յե:

— Ջրասուզակը գետնի վրա լե, — հայտնեց հե-
ռախոսավարը: — Ի՞նչ կարգադրություններ կան, նա-
վապես:

— Հարցրեք, ի՞նչ ե տեսնում ջրասուզակը:

Կռանալով, հեռախոսավարը փողի մեջ գոռաց
նավապետի հարցը և խկույն պատասխանեց.

— Նա ասում ե... ջրասուզակն ասում ե, վոր ծո-
վի հատակը քարքարուտ ե: Վոչ մի բույս չկա և ջրասու...

— Նա տեսնում ե, թե լենթադրում, — ջղայնա-
ցած գաղարեցը հեռախոսավարին իրվինգը: — Ավելի
քիչ յերկայություն: Տեսանելիությունն ինչպես ե,

— Հիանալի յե, — անմիջապես պատասխանեցին
նավակից: — Ջրասուզակն ասում ե, վոր տեսանելիու-
թյունը հիանալի յե:

— Հայտնեցեք, թող անցնի գետնի վրայով, դուք
ել շարժվեցեք նրա հետ:

— Յեղավ, նավապես:

Գլուխը դարձնելով, առանց Գոլովինի վրա նա-
յելու, ձեռները մեջքի վրա դրած ու վոտի ծայրերի
վրա լերերալով, իրվինգն անսպասելիորեն խորթ, ան-
ձանաչելի կոշտ ձայնով հարցրեց:

— Դեկապետ, դուք ճիշտ համոզված եք, վոր մենք
գտել ենք ձեր կղզին, յեթե միայն այս գետաքարերի
կուտը կարելի յե կղզի անվանել:

— Վոչ մի վայրկան չեմ կասկածում:

— Միստեր Գոլովին, — սառնությամբ նախադ-
գուշացրեց նավապետը, — ուշագիր յեղեք: Լավ դիտե-
ցեք շուրջը, յես պատրաստ եմ ընդունելու սխալը,

վորովհետև այս քարերը կարող են նման լինել... Ո՞վ
ե կարող նրանց տարբերել...

— Վաչ, — զարմանալով իրվինդի տոնի վրա՝ ա-
սաց Գոլովինը, — սա հենց այն կղզին եւ

— Հարգելի միստեր Գոլովին, յես կրկին խոր-
հուրդ եմ տալիս ավելի ճիշտ վորոշել այդ: Միթե արժե
հիշեցնել ձեզ, թե վնրքան անդուրեկան կլինի ինձ
համար խարել իմ բարեկամ Գոլդինդին:

— Հարգելի միստեր Իրվինդ, չգիտեմ, թե ինչն է
եմ արժանացել ձեր անվասահությանը: Սակայն յերդ-
վում եմ ձեզ, վոր կղզին...


— Ձեր յերդումները չեն վերադարձնի Գոլդինդի
բարյացակամությունը, — կտրուկ կերպով ընդհատեց
Նավապետը: — Ի՞նչով եք կարող ապացուցել դուք այդ:

— Դնանք, — վճռարար ու զայլացած ասաց Գո-
լովինը: — Յես ձեզ ցույց կտամ այն քարայրը, վորի
մոտ անցք կա: Յես համոզված եմ, վոր մեզ լսում են,
և այս կղզու իշխանավորներն իսկուն կգան:

— Գնանք, — մոռայլորեն համաձայնեց Իրվինդը: —
Ցույց տվե՞ք: Յես հավատում եմ ձեզ:

Ծովագնացները տաս ըսպեյից վոչ ավելի ժամա-
նակամիջոցում շրջեցին ամբողջ քարքարոտ կղզին:
Այն տեղում, վորտեղ Գոլովինը հույս ուներ գտնելու
քարայրի հետքերը, բարձրանում եր խճի ու քարի
մանր կտրտանքի մի կուլտու թարերը կոկ, կորշա-
գույն գլաֆալուրը կիտված եյին բլրի յերկայնքով ու
փայլում եյին արեի տակ:

Իրվինդը արագ, ծանը շնչելով, յերեսն արագ
շուռ տվեց զեկապետից, առանց մի խոռք ասելու
քայլեց գեպի մոտեցող Նավակը: Նավախելում շատա-



Իրվինդը ուր սից յերեսը ղեկապեսից

Խոս նավաստիները հանում եյին ջրասուզակի զգեստը:
— Տեսմք դուք արդյոք, — հարցը նրան իրվին-
դը, — վորոն նշան այն բանի, վոր այստեղ նավ ե՝ յեղել:
— Նավապետ, իս հետազոտեցի այն ամենը, ինչ
հնարավոր եր, — լսեց Գոլովինը ջրասուզակի պատաս-
խանը: — Փայոփ տակ, քառասունվեց մետր խորության
վրա, հարթ, քարքարոտ գետին ե: Շատ ձուկ կա:
Յերկուող եմ կրում, վոր այնտեղ ակուներ են խայ-
տում: Մի մեծ հրապարակ ե, մոտ յոթանասուն քա-
ռակուսի մետր տարածությամբ: Իսկ ավելի հեռուն —
սեպ ե և խորությունը մի անգամից մի քանի հարյուր
մետրի յե հասնում: Այս ծանծաղուտի մոտ ամբողջ
կղզու շուրջն ովկիանոսային խորություն ե,

— Ալո, դեկապետ, — խուլ, հրամայական ձայնով
կանչեց նավապետը Գոլովինին: — Բարեհաճեք նավ
վերադառնալ, Դուք հո նպատակ չունեք այստեղ մնա-
լու և ծովային վորիներին կանչելու:

Իրվինդի կոպտությունը, վոր յերբեք չեր կարող
սպասել Գոլովինը, վոչ մի տպավորություն չթողեց
նրա վրա:

Խորին հուսահատության մեջ, ստիպված լինելով
թողնել կղզին, նա նավ բարձրացավ:

Աղմուկով լափին տալով շուրը՝ նավակը հետ
սլացավ շոգենավի կողմը:

«Ուրիմն բժիշկներն իրավացի եյին, — ծանր խոր-
հում եր Գոլովինը: — Ցնորք եր... մղձավմնջ... Միթե
ստորջրյա ամրոց գոլություն չի ունեցել»:

Յեկ, նավերի կողմը սլանալով, վախճախով, վոր
ժայռը կորչի աչքից, Գոլովինը ակամա դոչեց.

— Վերադառնանք, նավապետ, յերդվում եմ, սա
հենց այն կղզին ե:

— Միստեր Գոլովին, — հարձակվեց Իրվինդը, —
յես այլևս չեմ ուզում ձեզ լսել: Դադարեցը եք զառան-
ցանքը:

Հինգ որ Գոլովինը դուրս չեր գալիս նավախցից:
Յեվ իրվինդը վոչ մի անգամ չայցելեց նրան: Եեկա-
պետն անտանելի տանջանքներ եր ապրում: Նա իրե-
նից հեռու յեր մղում ուտելիքը, չեր հեռանում մահ-
ճակից և, կարծես, մոռացել եր ժամանակի մասին:
Սակայն արդեն ժամանակն եր Սան-Ֆրանցիսկո ժա-
մանելու: Վորքան ել այդ ծանր եր իրեն համար,
Գոլովինը վորոշեց դիմել նավապետին բացատրություն
տալու համար: Կարծեք նրա ցանկությունը նախա-
գուշակելով՝ հանկարծ նավախցիկ մտավ իրվինդը:

— Միստեր Գոլովին, — չարությամբ ասաց նա, —
ձեզ հետաքրքրում ե, թե վնրտեղ ենք զանգում մենք:

— Այս: Յես պետք ե Սան-Ֆրանցիսկո վերա-
դառնամ...

— Անձամբ ինձ այդ չի հետաքրքրում, — ընդ-
միջեց նրան իրվինդը: — Մենք անցնում ենք Մեքսի-
կացի ափերով: Միստեր Գոլովին, յես չեմ հոգալու
ձեր հարմարությունների մասին: Յեթե դուք դեռևս
չեք կորցրել ըմբռնելու ընդունակությունը, ապա պետք
ե հասկանաք, վոր այս բոլոր որերը, ձեր անմիտ խա-
րեբայության պատճառով, քիչ եր մնում, վոր իսո
պայմենի կատաղությունից, լուցեք: Յեթե յես ձեր
տեղ լինենի, վաղուց ինձ զցած կլինենի ծովը: Յես
պատժված եմ: Դապանորեն պատժված եմ իմ դյուրա-
հավատության ու միամտության համար: Յեվ իմ կա-

Նոններին կհակասեր, յեթե յես ներեյի այդպիսի
արարքը՝ Թող իմ կողմից հարգված միստեր Դոլդինդն
իմանա, թե յես ինչպես եմ խրատել անազնիվ, ան-
խոհեմ այն մարդուն, վորը համարձակվել և խաբել
Ֆրեդ Իրվինդին։ Անմիջապես թողեք նավը, թե չե յես
կհրամայեմ, վոր ձեզ ծովը նետեն։

Խոհեմությունը թույլ չտվեց դեկապետին առար-
կել, և նա անխոս բարձրացավ տախտակամած։

Աստղառատ գիշեր եր։

Կանգնեցրին մեքենաները, վորոտացին ճախա-
բակները, և Գոլովինը նավասանդուխքով իջավ մոտո-
րային նավակը։ Լուսավորված կամրջակի վրա յերեաց
իրվինդի կերպարանքը։

Նավը սլացավ խավարի մեջ։

Գոլովինն ափ իջավ՝ միանդամայն անտարեր։
Նրա վոտների մոտ ընկալ պարեր, և նավը վայրկե-
նապես շուռ յեկավ հակառակ կողմը։ Գոլովինը, կար-
ծես ծանր, ճնշող յերազում, իջավ ստոր, խոնավ քա-
րի վրա։

(ՊԵԿԱՊԵՏ ԳՈԼՈՎԻՆԻ ԳՐԱՆՑՈՒՄՆԵՐԻՑ)

«Մութ, մեքսիկյան գիշեր եւ Յես գլուխս դար-
ձըրի, վորպեսդի չտեսնեմ «Յուպիտերի» կրակները։
Յերիտասարդ հասակումս յես շատ ցնցումներ եմ ապ-
րել բազմաթիվ անգամ ապրել եմ մահվան վտանգը,
սակայն այն տանջանքը, վոր յես ապրում եյի մեք-
սիկյան ափում, չի կարելի համեմատել վոչ մի այլ տան-
ջանքի հետ։ Յերբ են վոչնչացել ուրախ բոցման Բա-
կուտան, մեղմ Անդրեյը և Նինան.. Իմ թանկադինա
կեղծ բարեկամներ, նրանք մահացել են քաղցից ու


ծարավից, իսկ յես նույնիսկ չեմ կարողանում հիշել,
թե նրանց վերջին ըոպեներին ինչ ետեղի ունեցել։
Յեվ դարձյալ իմ առաջ պատկերանում են ովկիանոսի
տակ պարլացող մանուշագույն լուսարձակների
գողղողջուն լույսերը... Յես տեսնում եմ բոցմանի
կերպարանքը...»

Քայլեր են.. Մեկը գնում ե խավարում... Յես
լսում եմ խոտի շրջունը, նայում եմ խավարի մեջ,
բայց արգեն չեմ հավատում ինձ։ Միթե այս դարձյալ
լսելահեղություն ե»։

Մոտորի ազմուկը դադարեց, մոտերքում լսվեց
անտեսանելի ծառերի տերեների շրջունը։ Յեվ հան-
կարծ աղաղակ լսվեց ու քայլերի դոփյուն։ Ղեկապետը
չեր շարժվում։ Անագին մարդու մի կերպարանք վա-
զեց նրա մոտով, բայց նա արգեն վոչինչ չեր լսում և
չեր գիտակցում։

Անձանոթը սլացավ դեպի ջուրը, Շոգենավի
կրակներն անհայտացան։

Դանդաղ, ծանր քայլեր են լսվում։ Մարդը վե-
րադառնում եր ափից։ Քարացած Գոլովինին մի ըռ-
պեյով թվաց, թե այդ մարդը ծանոթ ե իրեն։ Սակայն
նա արգեն ինքն իրեն չեր հավատում։ «Զառանցանք
ե, զառանցանք ե», հնչում եր նրա ականջում իրվինդի
ձայնը, և ղեկապետը անշարժ, լուռ նայում եր մո-
տեցող մարդուն։ Յեվ հանկարծ այդ մարդը կանգ ա-
ռավ։ Ղեկապետի հայացքը թափանցեց խավարի մեջ,
և մնաց ստուծ։ Հավատա արզուք իր աչքերին, Նրան
թվաց. թե իր առաջ կանգնած ե բոցման Բակուտայի
կրկնորդը...»



ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՑԵՐԵՔ ԳԵՐԻՆԵՐԸ

ՄԵՆՔ շշմած դեկապետին վորոշ ժամանակով կթողնենք մեքսիկյան ափում, գիշերային խավարի մեջ, և կպատճենք «Խորհուրդների աստղ» նավախմբի մնացած յերեք ծովագնացների մասին։ Դրա համար մենք պետք ենք դառնանք և հրշենք դեկտեմբերի հնգի առավոտը—այն առավոտը, յերբ «Պրեզիդենտի» նավապետի կամքջակից դեկապետ իրվինգն ովկիանոսում նկատեց մի անգամ մարդու մարմին։

Բակուտագի, Նինայի և Անդրեյի արկածները նկարագրելով՝ մենք հաստատում ենք «Կապույտ արևի ամրոց» ստորչըրյա կրեյսերի գոյությունը, վորի վրայից, Նակամուրայի ոգնությամբ, դեկտեմբերի հնդի

նաւաբացին վրկվեց Գոլովինը։ Ղեկապետի յերեք բարեկամները մնացին ովկիանոսի տակ, և մինչդեռ Գոլովինը, ովկիանոսի յերեսը նետվելով, ուշաթափվելով, լողում եր դեպի շոգենավի կրակները, նրանք խորը քնած եյին խեղդուկ յերկաթե խցիկում։

Այդ առավոտ բոցման Բակուտան արթնացավ ինչ-վոր տարորինակ նախաղդացումից։ Նա վեր ցատկեց մահճակից, և նույն վայրկյանին խցիկը լուսավորվեց ելեկտրական լապտերով։ Շեմքին կանգնած եր Նակամուրան, Բայց դեռ մինչ այդ դեկապետը նըկատեց, վոր Գոլովինի մահճակը դատարկ եւ։

— Ո՞ւր և Ալեքսանդր Պավլովիչը, — ցատկելով Նակամուրայի մոտ, տագնապով հարցըրեց նա։

Ճապոնացին տխուր ժաղիտով մատը մոտեցրեց շրթունքներին, և բոցմանը ցըված հայացքով շուրջը նայեց։ Միթե նա սխալվել եւ։

Ղեկապետը բացակայում եր։

— Ո՞ւր և Ալեքսանդր Պավլովիչը, — կրկնեց նա իր հարցը։ — Ո՞ւր են տարել նրան։ Ո՞ւ, յես մոռացա, վոր գուռ ոռւսերեն չես հասկանում։ Ղեկապետը, — նշան-ներով բացատրեց նա, — ահա նրա մահճակը։ Ո՞ւր և իմ դիկապետը։

Նակամուրան, ի նշան այն բանի, վոր հասկանում ե Բակուտային, գլուխը հաստատողաբար թափավեց։

— Ռուսը, — ասաց նա, ու ձեռքով ցույց տվեց առաստաղը։ — Ռուսը... — Յեվ Նակամուրան մի քանի արտահայտիչ շարժումներ արեց ձեռներով, պատկերացնելով լողացող մարդու։

— Լողմւմ ե—գոչեց բոցմանը՝ զլխի ընկնելով:—
Մեր ղեկապետը փախել ե:

Աղդանշան լսվեց: Ճապոնացին ցնցվեց: Հապտեց
ըս հանգնելով նա արագությամբ մի ժուղթ դրեց
Բակուտայի ձեռքը ու դուրս սահեց խցիկից: Բակու-
տան շարժվեց նրա հետեկից, բայց հանկարծ կրակոց
լսվեց և մեկը ծանրորեն ընկալ դռան մոտ: Նախա-
սենյակում վազվող սկսվեց: Թախծալի ազդանշանը
հանկարծ դադարեց, և Բակուտան, իր տեղում սառ-
չելով, բնազդաբար փաթաթեց թղթի կտորն ու պա-
հեց իր շապիկի կարի մեջ:

Աղդանշանից ու աղմուկից արթնացան Նինան
ու Անդրեյը:

— Ղեկապետը չկա, — զարմացավ յերիտասարդ
նավաստին: — Բոցման, մւր ե կորել նա:

Բակուտան դեռ չեր կարողացել պատասխանել,
յերբ դուռը բացվեց ու խցիկ ներս վազեց կատաղու-
թյունից խելագարված Ալենդորֆը:

— Նա փախել ե,— գոչեց գերմանացին: — Դուք
կլատասխանեք նրա փոխարեն: Դուք... դուք... նրա
մեղսակիցներն եք:

Բաց դռան մեջ յերեացին մոայլ զինվորները:
Զգուշությամբ, հետհետ քայլելով, նրանք տանում
եին Նակամուրայի դիսկը:

Վայրենի, կատաղի աղաղակով Ալենդորֆը դուրս
վազեց նախասենյակ: Աղմկեց սողնակը, և ամեն ինչ
լուց: Բակուտան լուս մտածում եր այն ամենի մասին,
ինչ տեղի յեր ունեցել: Նա արդեն ուզում եր ընկեր-
ներին պատմել Նակամուրայի զարմանալի այցելու-

թյան մասին և խորհրդավոր նամակի մասին, յերբ
հանկարծ խոսեց Անդրեյը:

— Նա թողեց սեզ, — վշտացած ու սառնությամբ
ասաց յերիտասարդ նավաստին: — Նա... փախավ, իր
կաշին փրկելով:

Նինան վախեցած նետվեց զեպի Անդրեյը, սա-
կայն նա ուժին հեռացրեց նրան ու մոտեցավ բոց-
մանին:

— Ինչու լեք լոել դուք: Ղեկապետը փախել ե:

Սարսափեցնելով Նինային, վորը սովոր եր տես-
նել նավաստու ու բոցմանի բարեկամական հարար-
բությունները, Անդրեյը նորից կրկնեց պարզ ու հուզ-
ված ձայնով:

— Յեվ դուք թագյնում եք նրան: Նա վախկոտ
ե, մի չնչին վախկոտ:

Բոցմանն անվրդով լոել եր, Բայց ահա վերջա-
պես նա կամաց, կարծես իր փոխարեն մի ուրիշն եր
խոսում, անձանաչելի, անտարբեր ձայնով, կարծես
չհասկանալով Անդրեյին, հարցրեց:

— Ո՞ւմ մասին ե խոսքը: Չեմ հասկանում, այդ
ով ե նա:

— Ո՞վ ե նա: Ղեկապետը: Ձեր ղեկապետ Գոլո-
վինը:

— Ինչու իմ, — ափելի կամաց հարցրեց Բակու-
տան: — Ալեքսանդր Պավլովիչը — մեր ղեկապետն ե:

— Ով ել վոր լինի նա, յես չեմ ուզում նրան
իմն անվանել: Նա մեզ ընկեր չե: Նա փախել ե...

— Պոլունդրա, տեղդ գնա, — աղաղակեց բոցմանը՝
բռունցքը պատին զարկելով: — Նինա, քանի դեռ ուզ
չե, այս խարակածկանը պահիր մահակի տակ: Մեր

Ալեքսանդր Պավլովիչի մասին մի խոսք ասողի վոտ-
ները յես կպոկեմ ու ծովը կնետեմ:

Վհատված Նինան գրկեց բոցմանին ու նստեց-
րեց մահճակի վրա: Աղջկա վախն աղդեց խիստ բոց-
մանի վրա ու նա հանգստանալով՝ արհամարհանքով
ասաց:

— Վախկոտները նրանք են, վորոնք նվում են
ու վախենում իրենց կաշվի համար: Յեթե Ալեքսանդր
Պավլովիչը գնացել ե, ուրեմն յես, իվան Բակուտաս,
հավատում եմ և ասում: այդպես ել հարկավոր ե,

— Այն, այդպես ե հարկավոր,—բոցմանի հետե-
փեց վճռաբար կրկնեց Նինան, — Յես ել եմ հավատում:

— Ապրես,—հավանողական հայացք զցեց նրա
վրա Բակուտան: — Ինչպես տեսնում եմ, ծովագնաց-
ներից վոմանք իզուր են շալվար հագնում:

— Ներեցնք նրան, բոցման,—յերկուզով շշնջաց
Նինան և բարձրաձայն ասաց. — Պետք չե կովել, ըն-
կերներ: Մենք չորս հոգի եյինք: Դատեցնք ինքներդ:
յեթե մեզնից մեկի համար վախչելու հնարավորու-
թյուն ստեղծվեր, մենք իհարկե կուղարկեյինք դեկա-
պետին կամ բոցմանին:

— Յես ել այդպես եմ մտածում, — ասավ Բակու-
տան, — յեկ յես առաջին հերթին կուղարկեիր դեկապե-
տին:

— Մենք յերեքս, մտերիմ մարդիկ, ինչու պետք
ե կովել սկսենք, — շարունակեց Նինան: — Միասին ես
յինք փրկում ծովում, այստեղ ել ապրում ենք և ա-
զատվելու հույս ունենք միայն նրա համար, վոր մի-
ասին ենք: Ի՞նչպես կարելի յե, վոր մենք թշնամու-
թյուն անենք:

— Նինա, — հուզված ասաց բոցմանը, — մո իմ
ձեռքը: Քո խելքը վոսկի չե, Յերդվում եմ հոգովս, յես
կուզենայի այդպիսի աղջիկ ունենալ:

Խոսակցությունը դադարեց: Գերիներին տանելու
յեկան չորս զինվոր և մեկ սպա: Այն ընդարձակ, լավ
լուսավորված շրջանաձեւ սրահում, ուր բերին նախո-
րոք պղղպատյա ձեռնաշղթաներով կապած գերիներին,
ու լաքած սեղանի մոտ նստել եյին յերեք ճապոնացի—
լրիվ հանգիսական զղեստով, վոսկե կարլածքով ու
շքանշանները կրծքներին: Կենարունում, ձեռքերը սե-
ղանին դրած, նստած եր այն գեր մարդը, վոր առա-
ջին որը հանգիպեց մեր ընկերներին Ալենդրոֆի հետ
միասին: Զախ կողմում, ամբողջ հասակովը մեկ ձըգ-
ված, կանգնած եր Ալենդրոֆը:

— Զեր առաջ կրելսերի անձնակաղմն ե, — ասաց
ծովագնացներին ուղեկցողների պետը, ցույց տալով ա-
ռաստաղից կախ տված դրոշակները: — Առաջարկվում
ե մանրամասնորեն լուսաբանել զեկապետ Գոլովինի
փախուստի պայմանները:

Գերիները լուռ եյին:

— Խորհրդային ծովագնացներ, — կոշտ ձայնով
ասաց Ալենդրոֆը, — յես լիազորված եմ ձեզ նախազ-
գուշացնելու. ըստ ուղմական որենքների, վոր ձեզ
համար սուրբ պետք ե յինեն, յեթե դուք հրաժարկվեք
պատասխան տալուց—կենթարկվեք մահվան պատժի:
Պատասխանեցնք, բոցման Բակուտա: Պատասխա-
նեցնք, նավաստի Մուրաջե:

— Զգիտեմ, — ուսերը թոթվեց Անդրեյը: — Մեզ
վոչինչ հայտնի չե:

Ալենդրոֆը թարգմանեց նրա խոսքերը դատա-

վորներին, և գեր ճապոնացին, վորնը ըստ յերկութին
կրեյսերի հրամանատարն եր, աշքերով ցուց տվեց
Նինայի վրա:

— Ֆրեյլեն Նինա, ինչ և հայտնի ձեզ,—հարց-
րեց Ալենդրի Փը:

— Վոչինչ...

— Նակամուրան յերբ սկսեց ալցելել ձեր խցիկը:
— Բոցման Բակուտա, մտադիր եք արդյոք վորեն
բացատրություն տալու դատարանին:

— Խոսել կարելի յե,—համաձայնեց բոցմանը:—
Յեթե ցանկանում եք, յես կարող եմ արտահայտվել:

— Խոսեցեք: Աշխատեցեք հակիրճ բացատրվել:

— Լավ ե, վոր նախազգուշացրեք,—նկատեց բոց-
մանը,—թե չե յես կարող եմ յերեք որ խոսել, առանց
ուտելու: Ահա թե ինչ կասի ձեզ Բակուտան: Յես նա-
վում եմ տասնհինգ տարեկան հասակից: Հաշվեցեք.

Ուրեմն լողում եմ քառասունից յերկու տարի
պակաս: Իմ կյանքի ընթացքում յես տեսել եմ Ռո-
մանովներին, իշխաններին, բարոններին, նավատերե-
րին, աղմիրալներին և գեներալներին...»

— Մեղադրյալ Բակուտա, դուք շեղվում եք ուղ-
ղակի պատասխանից:

— Ամենեին վոչ: Յես միայն ուզում եմ ձեզնից
իմանալ. թե դուք ինչ եք մտածում: յեթե յես ինքնառ-
կալությունից չեյի վախենում, միթե յես կվախենամ
այս...

— Զգուշացեք, մեղադրյալ: Զեր առաջ կրեսերի
հրամանատարն ե ու հրամկազմի բարձր աստիճանա-
վորները...

— Յես ել այդ եմ ասում,— դարմացավ Բակու-

տան, — յես ել հիշում եմ այն զորեղ աղմիրալներին
ու գեներալներին, վորոնցից յերբեք չեյի վախենում:

— Վորպես հին ծովագնաց, — ընդհատեց նրան
Ալենդրի Փը, — դուք պետք ե վոր հիշեք, թե ինչպես
ճապոնացիները ջախջախեցին ձեր աղմիրալներին ու
գեներալներին:

— Վաչ, վոչ թե ճապոնացիներն են ջախջախել, —
հանգիստ պատասխանեց Բակուտան, — այլ մենք, ամ-
բողջ ժողովուրդը, ջախջախեցինք մեր աղմիրալներին,
գեներալներին ու սպաներին, ապա մենք ջախջախե-
ցինք Հեռավոր Արևելքում ճապոնացիներին, Արև-
մուտքում...

— Վերջին անգամն եմ նախազգուշացնում, խո-
սեք ըստ գործի եյության:

— Յես միայն ըստ եյության եմ խոսում: Ել ում
ասես, վոր մենք ջախջախեցինք: Իսկ այժմ, մենք,
խորհրդային ծովագնացներս, անխիղ կերպով բերված
ենք ու շղթայակապված: Բայց մենք մենակ չենք: Մեր
հայրենիքում կա հոգոր բանակ, ավիացիա, հրետանի,
տանկեր, զրահազնացքներ: Փորձեցեք այնտեղ խոթել
ձեր քիթը — ձեր վիզը կկոտրեն, և այդ դուք ավելի
լավ գիտեք, քան թե յես: Իսկ այստեղ մենք յերեքս
ենք, և մենք շղթայված ենք: Յեթե դուք վախկուներ
չեք, ապա հանեցեք իմ ձեռնաշղթաները, և յես առանց
ավիացիայի ցույց կտամ ձեզ...

— Լոեցեք: Դատարանն անմիջապես կդադրեցնի
գործի քննությունը, յեթե դուք յերեքդ չհայտնեք,
վոր համաձայն եք խոստովանելու:

— Ավարտեցեք, — անսպասելիորեն առաջ գալով,
բորբոքված գոչեց Անդրեյը: — Դուք վոչինչ չեք իմա-

նա: Գիտցեք, այդ մենք ենք ոգնել զեկապետին փախաչելու..


— Ապրես, Անդրեյ, — հիացմունքով ասաց բոց-մանը: — Զախջախիր, ինչքան կարող ես:

— Վերջին խոսքս ե, — ձեռքը բարձրացրեց Ալեն. դորֆը: — Ֆրեյլեն Նինա, ձեր նկատմամբ, իբրև կնոջ, հրամանատարությունն արդար բարեհաճություն կկիրառի: Խորհուրդ եմ տալիս...

— Կարիք չկա ինձ խորհուրդ տալու, — հանգիստ պատասխանեց Նինան: — Ընկերներս արտահայտվեցին: Յես չեմ կարող այնպես խոսել ինչպես բոցմանը, բայց յես... չեմ վախենա և կմեռնեմ ինչպես իմ ընկերները: Ժամանակ մի կորցնեք:

Մոայլած Ալենդրֆը մոտեցավ սեղանին և, մի բոպե անցնելուց հետո, առանց գերիներին նայելու, հայտարարեց.

— Բոլորին գնդակահարել:



ՏԱԽՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՄԱՀՎԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Այս անգամ պահակախումբը տաս զինվորից պակաս չեր: Սակայն այդ ավելորդ նախազգուշացում եր: Գերիները քայլում եյին, իրենց մտքերով տարված, իսկ Բակուտան, կարծես մոռանալով դատավճռի մասին, ուրախությամբ իր ճառն եր վերհշում: Նա շատ եր դուր յեկել իրեն, ու Բակուտան անհամբերությամբ յերազում եր այն ըոպելի մասին, թե ինչպես, վորքան կարելի յե շուտ վերադառնան խցիկը և ինչքն իմանա, թե իր ճառն ինչ տպավորություն ե թողել ընկերների վրա:

Մահվան դատապարտված ծովագնացները հանկարծ ընկան անթափանց խավարի մեջ: Յերբ հեռվում դադարեցին զինվորների դանդաղ քայլերը, բոցմանը հազիվ զսպելով իր անհամբերությունը, խօսեց.

— Դեհ ինչ կասեք: Լավ ճառ ասացի:

— Շատ լավն եր,—միաձայն պատասխանեցին
Նինան ու Անդրեյը:—Լավ ճառ եր:

— Քիչ կլինի ասել, վոր լավն եր,—հպարտությամբ ուղղեց Բակուտան, —ամենաառաջնակարգ ճառ
եր: Այդպես մեկը կարող է խսկապես հավատալ, վոր
յես կիսագրագետ եմ: Այնինչ, տեսեք, այդ ճառովս
յես նրանց դաս տվի և պատմությունից, և աշխարհա-
գրությունից, և Ռոմանովների տոհմից, և աղմիրալնե-
րի ու գեներալների մասին: Խնդրում եմ մատնանշել, —
խիստ ձայնով ընդգծեց բոցմանը, —այդ բոլորին Բա-
կուտան իր սեփական խելքովն ե հասել: Ճշմարտու-
թյունը ճշմարտություն ե, յես համալսարաններ չեմ
ավարտել: Ալիսու, —հառաչեց բոցմանը, —շատ ափսոս,
վոր ալդպիսի հիանալի ճառը չի կարելի թերթերում
տպել:

Բոցմանն ավելի հարմար նստեց և արդեն ուզում
եր իր յելույթն ավելի մանրամասն քննության յեն-
թարկել, յերբ դռան մոտ քայլեր լսվեցին: Բակուտան
լոեց, բայց վոչ վոք ներս չեկալ խցիկը: Միայն նա-
խասրան տանող պատի հետեն այնպիսի մի ձայն լսվեց,
ինչպես լինում ե, յերբ խանութներում իջեցնում են
յերկաթե փաթվարագույրները:

— Զարմանալի յե, —մի բոպեյից հետո հազիվ լսելի
ձայնով ասաց Անդրեյը, —ալսպես յերբեք չի յեղել:
Ոդ չկա... Շնչելը դժվար ե:

— Դուցե մեզ խեղդել են ուզում, —կշռադատեց
բոցմանը: — Ալիսոսում են թոկը...

Հանկարծ բոցմանը հիշեց Նակամուրայի առա-
վոտյան այցելությունը: Նա պատմեց այդ իր ընկեր-
ներին ու կայտառորեն վերջացրեց.

— Հավատացնում եմ ձեզ, զեկապետը իգուր չի
գնացել: Հավատացե՞ք, վոր չեն թողնի մենք վոչնչա-
նանք:

— Բոցման, —տիրությամբ ձայն տվեց Անդրե-
յը, —դուք պետք ե ներեք իմ առավոտվա խոսքերը...

— Դու յերիտոսարդ ես, —բարեհոգությամբ
հանգստացրեց նրան Բակուտան: — Դուցե քո հասակում
յես ել... Դե լինչ ասեմ: Ղեկապետ Գոլովինն խսկական
խորհրդացին ծովագնաց ե, նա չի ծախի ընկերներին:

Մոտ մի ժամ անցավ: Բոպե առ ըոպե շնչելը
դժվարանում եր: Ծովալիններն արդեն չեյին խոսում,
այլ կծկված պառկած եյին գետնի վրա:

Կես ժամից հետո Նինան ու Անդրեյն ուշաթափ-
վեցին:

— Խեղդում են, սրիկաները, —խրխռաց Բակու-
տան, — խեղդում են մկների պես... Անիծյալներ... Մը-
նաք բարձրվ, ընկերներ, — գոչեց նա, վրայի շապիկը
պատռելով:

Հանկարծ ուժեղ աղմկեց սողնակը: Դուռը բաց-
վեց, լոցիկ լցվեց ողի մի ալիք: Դուան շեմքին կանգ-
նած եր Ալենդրովիք, զլխի վերել ճոճելով լապտերը և
մոայլ նայելով մահակների մոտ ընկած մարմիննե-
րին: Շտապ խցիկ մտավ մի մարդ՝ ուղեպարկը ձեռ-
քին, կռացավ Նինայի ու Անդրեյի մոտ:

— Շնորհակալ յեղեք յերկնքից, —մոայլորեն ա-
սաց Ալենդրովիք, — յեթե... յեթե դուք հավատում եք
հրաշքների...

Հետեւյալ բոպեյին խցիկ բերին թթվածնի բա-
լոնը, և բժիշկն արհեստական շնչառություն տվեց

— Շմտ լավն եր,—միաձայն պատասխանեցին
Նինան ու Անդրեյը:—Լավ ճառ եր:

— Քիչ կլինի ասել, վոր լավն եր,—հպարտությամբ ուղղեց Բակուտան, —ամենաառաջնակարգ ճառ
եր: Այդպես մեկը կարող է խսկապես հավատալ, վոր
յես կիսագրագետ եմ: Այնինչ, տեսեք, այդ ճառովս
յես նրանց դաս տվի և՝ պատմությունից, և՝ աշխարհա-
գրությունից, և՝ Ռումանովների տոհմից, և՝ աղմիրալնե-
րի ու գեներալների մասին: Խնդրում եմ մատնանշել, —
խստ ճայնով ընդգծեց բոցմանը, —այդ բոլորին Բա-
կուտան իր սեփական խելքովն ե հասել ծշմարտու-
թյունը ճշմարտություն ե, յես համալսարաններ չեմ
ավարտել: Ափսոս, —հառաչեց բոցմանը, —շատ ափսոս,
վոր ալդպիսի հիանալի ճառը չի կարելի թերթերում
տպել:

Բոցմանն ավելի հարմար նստեց և արդեն ուզում
եր իր յելույթն ավելի մանրամասն քննության յեն-
թարկել, յերբ դռան մոտ քայլեր լսվեցին: Բակուտան
լուց, բայց վոչ վոք ներս չեկավ խցիկը: Միայն նա-
խասրան տաճող պատի հետեն այնպիսի մի ճայն լսվեց,
ինչպես լինում ե, յերբ խանութներում իջեցնում են
յերկաթե փաթվարագույրները:

— Զարմանալի յե, —մի բոպեյից հետո հազիվ լսելի
ճայնով ասաց Անդրեյը, —ալսպես յերբեք չի յեղել:
Ոդ չկա... Շնչելը դժվար ե:

— Դուցե մեզ խեղդել են ուզում, —կշռադատեց
բոցմանը: — Ափսոսում են թոկը...

Հանկարծ բոցմանը հիշեց Նակամուրայի առա-
վոտյան այցելությունը: Նա պատմեց այդ իր ընկեր-
ներին ու կայտառորեն վերջացրեց.

— Հավատացնում եմ ձեզ, զեկապետը իզուր չի
գնացել: Հավատացեք, վոր չեն թողնի մենք վոչնչա-
նանք:

— Բոցման, —տիրությամբ ճայն տվեց Անդրե-
յը, —դուք պետք եներեք իմ առավոտվա խոսքերը...

— Դու յերիտասարդ ես, —բարեհոգությամբ
հանգատացրեց նրան Բակուտան: — Դուցե քո հասակում
յես ել... Են ինչ ասեմ: Հեկապետ Գոլովինն խսկական
խորհրդային ծովագնաց ե, նա չի ծախի ընկերներին:

Մոտ մի ժամ անցավ: Ռոպե առ րոպե շնչելը
դժվարանում եր: Ծովագիններն արդեն չեյին խոսում,
այլ կծկված պառկած եյին գետնի վրա:

Կես ժամից հետո Նինան ու Անդրեյն ուշաթափ-
վեցին:


— Խեղդում են, սրիկանները, —իրխոսաց Բակու-
տան, — խեղդում են մկների պես... Անիծյալներ... Մը-
նաք բարով, ընկերներ, — գոչեց նա, վրայի շապիկը
պատուելով:

Հանկարծ ուժեղ աղմկեց սողնակը: Դուռը բաց-
վեց: Խցիկ լցվեց ողի մի ալիք: Դուան շեմքին կանգ-
նած եր Ալենդրովիը, զլխի վերկը ճոճելով լապտերը և
մոայլ նայելով մահակների մոտ ընկած մարմիննե-
րին: Շտապ խցիկ մտավ մի մարդ՝ ուղեպարկը ձեռ-
քին, կռացավ Նինայի ու Անդրեյի մոտ:

— Շնորհակալ յեղեք յերկնքից, —մոայլորեն ա-
սաց Ալենդրովիը, — յեթե... յեթե դուք հավատում եք
հրաշքների...

Հետեյալ ըռպեյին խցիկ բերին թթվածնի բա-
լոնը, և բժիշկն արհեստական շնչառություն տվեց

յերիտասարդ ծովագնացներին: Նինայի ու Անդրեյի
հառաջանքները լսելով, Ալենդրովը թեթևացած շունչ
քաշեց, նստեց մահճակի վրա ու սկսեց քահ-քահ ծի-
ծաղել:



ՏԱՄԱՅՅՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

«ՓՐԿԵՑԵ՞Ք ԻՆՉ... ՑԵՎ, ՑԵՍ ԶԵՐ ՍՏՐՈՒԿՆ ԵՄ»

— Վեր կացէք, վեր կացէք,— ծիծաղելով ասում
եր գերմանացին: — Կարող եք նորից տեղավորվել ձեր
խցիկում: Դեկապետը ձկան պես համր ե... նա վոչինչ
չի հիշում... Աշխարհումս վոչ վոք չի իմանա «Կա-
պուլս արկի ամրոցի» մասին: Դե, ուշքի յեկեք, սա-
տանան տանի, դուք նորից կարող եք ապրել: Շնոր-
հակալ յեղեք ինձնից: Յեթե յես մի բոպե ևս ուշա-
նայի...

Ալդ կատարվում եր դեկտեմբերի հնգի յերեկվա-
ժամի յերեքին: Ճապոնացիները բռնեցին «Պրելիդենտ»
շոգենավի ռադիոգիրը, վորով ֆրեդ իրվինզը հայտ-
նում եր Սան-Ֆրանցիսկոյի թերթերին մի անծանոթ
մարդու փրկության մասին, վորը զրկվել եր խոսելու

ընդունակությունից ու հիշողությունից։ Հիշեցնենք,
թե ստորջրյա ամրոցի իշխանավորները բանուժի վոր-
քան մեծ կարիք ունեցին, և միանգամայն պարզ կլի-
նի, թե ինչպես իմանալով Գոլովինի անհուսալի գրու-
թյան մասին՝ հրամանատարները հնարավոր գտան
պահպանել գերիների կյանքը։

— Միայն մի լսուք: Նա կենդանի՞ յի, — յեղավ բակուտայի առաջին հարցը:

— Ղեկապետ Գոլովինը կենդանի յե, — շունչ քառելով ասաց Սլենդրովը — բայց, բայց... Նա մեռելից ել վատ եւ Այլևս հարց չտաք:

— Յես այլիս վոչինչ չեմ ուզում իմանալ, —
հրճվանքով վռտքի կանգնեց բոցմանը և անսպասելիու-
որեն դռնից դուրս հրեց Ալենդորֆին:

— Յերդվում եմ, — հիացմունքով դիմեց ընկերներին բոցմանը, — նա կգա մեր հետեւից, և մենք դեռևս կնազարկենք:

Հին ծովագնացին վոչ մի ըռպես չեր թողնում
միամիտ, բայց անխախտ այն միտքը, վոր «զեկապե-
տը կզա»։ Այլ կերպ եյին զգում Անդրեյն ու Նինան։
Նրանք չեյին առարկում բոցմանին, սակայն միայն այն-
պես եյին ձևանում, վոր իբր թե իրենք ել հույս ունեն։
Բարեբախտաբար միշտ ուրախ, զրգոված ու աղմկող
բոցմանը թույլ չեր տալիս նրանց ապագայի մասին
մտածելու։ Ամեն գիշեր, քնելուց առաջ, ծերուկն ան-
փոփոխ կերպով հայտաբարում եր։

— Մեկ որ ել անցավ, ավելի քիչ ժամանակ մնաց
սպասելու; Դուցե վաղը զարթնենք, իսկ նա - արդեն
այստեղ ե:

Թե ինչպես պետք է վրկի իրենց ղեկապետը—
այդ մասին Բակուտան չեր մտածում։ Նա սրտանց
հավատում եր։ Գետնուզում, վորակող առավոտներն
աշխատանքի եյին ուղարկում ընկերներին, բոցմանն
ավելի լավ եր զգում իրեն։ Կորեացիների բաղմության
մեջ նա բառացիորեն կենդանանում եր և հիշեցնում
եր նախկին Բակուտային, «Խորհուրդների աստղ» նա-
վի վրա յեղած Բակուտային։ Նա ամենակին չեր վախե-
նում ճապոնացի պահակներից, և նրանք ել վախվե-
լով իրենց հետու եյին պահում ոռւս հոկայից։ Բոցմանի
համար դժվար չեր վոտքի մի դիպուկ հարված տալ
պահակին, իսկ սպաներն անդոր եյին վորեե միջոց
ձեռք առնելու, վորովհետեւ կրեյսերի հրամանատարու-
թյունը խստիվ կարգադրել եր խուսափել խորհրդացին
ծովագնացների հետ վորեե բնդիքարում ունենալուց։

Բակուտան տասը հոգու գործ եր անում: Այն
հրեշտակին ուժը, վորով ծովագնացը ջարդ ու փշուր եր
անում քարերը, ահ եր ներշնչում ճապոնացիներին:
Աշխատանքի ամբողջ լնթացքում նա ամբողջ ձայնով
յերգեր եր ասում, և յերբ մեկ անգամ սպան փորձ
արեց յերգն արգելելու, բոցմանը վոտների մոտ զրեց
քլունգը և խստիվ նախազգուշացրեց:

— Նկատի ունեցեք, վորտեղ թակուտան աշխատում ե—այնտեղ նա տեր ե: Իսկ յես ձեզ համար չեմ աշխատում—միենույն ե՝ այս բոլորն իգուր ե կորչեղու, —յես աշխատում եմ հոգուս համար, և այն յերգերը կերպեմ, վոր յես կուգենամ:

Կորեացիները պաշտում եյին հսկա-բոցմանին:
Երա ներկայությամբ վոչ վոք չեր համարձակվում

ձեռք տալ քարտաշներին—Բակուտան այնպես եր պահում իրեն գետնուղում, կարծես ամենակարող տերն եր: Մի քանի որվա ընթացքում նա ծանոթացավ բոլոր կորեացիների հետ ու լուրաքանչյուրին մի ոռուսական անուն տվեց: Տխուր Անդրեյը չեր կարողանում զսպել ժպիտը, յերբ լսում եր, թե բոցմանն ինչպես ե հրամաններ արձակում.

— Յաշկա՞ձի՞—բղավում եր նա,—ձախից արի՞: Գրիշկա՞տափակաձուկ, տես, վոտքերիդ կզարկես:

Անփորձներին նա սովորեցնում եր, թե ինչպես պետք ե տիրապետել քլունդին ու լինգին և մարդ չեր կարող ծիծաղը զսպել, յեթե տեսներ, թե բոցմանի լայնարձակ շարժումներին ինչպիսի յերջանիկ ժպիտով եր հետևում կորեացին:

Կարգ ու կանոն մտցնելով, բոցմանը վերցնում եր իր քլունդն ու հայտարարում.

— Հիմա յերգելու յիմ, միահամուռ ձայնակցեցք:

Յեկ ամբողջ ձայնովը մեկ սկսում եր յերգել տարբորինակ, անհեթեթ մի յերդ.

... էկոմոսոսով՝ նավում
Հինդ նավաստի եյինք:
Հյուսիս եյլնք լողում,
Վոր եսկիմոս տեսնեյլնք...

Հյուսիսում սահնամանիք ե,
Հինդ նավաստի յեն լողում,
Յեկ նրանցից վոչ մեկը
Կողձանվել չի ուզում:

Կորեացիները թույլ, աններդաշնակ ձայներով ինչպոք սեփական յերդ եյին յերգում, սակայն Բակու-

տան, ¹ զմայլան քով՝ Պախճախելով քարերը և կարծես մեկին սպառնալով, վորոտում եր.

Սառույցներում յերգում եյին

Անվեհեր նավաստիներ:

Յեկ բոլորին տաքացրին

Յարանգում եսկիմոսները...

Ճիշտ ե, այնպիսի որեր եյին լինում, իերբ Բակուտան դժկամում ու մոայլում եր: Առաջին անգամ այդ տեղի ունեցել Գոլովինի փախուստից մոտ տասներկու որ հետո:

Մի անգամ զիշերը մեր ծովագնացների խցիկը մտան ութ զինված զինվորներ ու շղթայեցին նրանց: Ճապոնացիները գնացին, դուռը բաց թողնելով, ու նրանց գնալուց անմիջապես հետո յերկաթյա պատերն սկսեցին դողալ: Լովեց այնպիսի մի զղողյուն, կարծես նավի վրա մի կատաղի ջրվեժ թափվեց: Խցիկը ճոճվեց: Գերիները բարձրացան, վորքան այդ թույլ տվին շըդթաները: Պատերը, առաստաղն ու հատակը այնպես յերերացին, ինչպես ընթացող նավի վրա յել լինում, և հանկարծ խցիկը ներս խռուժեց թարմ ողը: Մութ միջանցքի ծայրին աղոտ կերպով յերեաց լուսնի լուսի խավար, ճապաղ պուտը:

Մտորջրյա կրեյսերը բարձրացել եր ծովի յերեաը: Ինչվոր մարդիկ եյին մոտենում կրեյսերի յեղերին, լսվում եյին խուլ ձայներ, հեռավոր արձագանք եր տալիս վազվողը: Կերկում սկսվեց դիզելների կցկտուր բախյունը,¹ Բարեկամները աչք չեցին հեռացնում խա-

¹ Վորքան հաջողվեց մեղ պարզեց կրեյսերը ծովի յերեան եր բարձրացել բեռ ընդունելու և ակումուլյատորներին մեջ առ լու համար:

վար կանաչ պուտից։ Ծովի թալմ ողը փչում եր նը-
րանց դեմքերին։


Լուսնի շողքի տակ ամառային քամին պատեց-
նում եր թղթի մի կտոր, և մարդիկ այնպիսի մի
հրձվանքով եյին նալում նրան, ինչպես կարող եյին
նայել գիշերային յերկնքում փայլող աստղերին։ Բա-
կուտան, շղթաները զբնացնելով, աշխատում եր ներ-
քեվ ցատկել մահակից, նինան ու Անդրեյը նույնպիս
ձգտում եյին փախչել մահակներից, նրանց թվում
եր, վոր բավական ե՞ վայր գցեն շղթաներն ու վերև
վազեն՝ և իրենք արդեն ազատ կրինեն։ Բայց ահա
կողքին, կորեացի նավաստիների սենյակում անտա-
նելի աղմուկ, ազաղակ բարձրացավ և անմիջապես
աղիղորոմ հեծկլտանքները միախառնվելով փոխվեցին
մի թախծալի վոռնոցի։ Կորեացիները վոռնացին, մին-
չև վոր միջանցքում չքացավ լուսնի ճառագայթ-
ների ցնորական լույսը։ Թղթի արծաթյա կտորը դա-
դարեց պտտվել, դադարեց դիզելների բախյունը, և
խցիկը նորից որորվեց։ Նորից աղմկեց ջուրը՝ լցվում
եյին բալաստային ցիստերնները, — և մեղմ տատան-
վելով նավը դանդաղորեն իջավ ծովի հատակը։

Սուլիչն ազդարարեց, վոր առավոտ ե, Բակուտան
գնաց աշխատանքի, մռայլորեն խրխռացնելով։

Յերեկոյան նա ավելի մռայլ վերադարձավ։

— Իմ հերթափոխությունից բացակայում են յե-
րեք կորեացի, — հայտնեց նա Նինային և, մի կողմ
դառնալով, հազիվ լսելի ձայնով ասաց. — Լով տղաներ
եյին... Նրանք արդեն սովորել եյին իմ յերգերը...

Զրի յերեսը բարձրանալու հետեւյալ որը կորե-
ացիները թմրած եյին աշխատում։ Նրանք նորից
հազիվ եյին շարժվում, աչքերը փակած, և ամեն վայր-



Կաշող ուր կորեացիները թմրած եյին աշխատում

կյան սայթաքում եյին։ Թվում եր, թե նրանց այլևս
վոչինչէր կարող կենսուրախություն տալ և հետաքրքր-
քություն դեպի կյանքը։ Յերեկոյան, յերբ Նինան
հավաքելով կորեացիների սենյակը՝ ուզում եր արդեն
հեռանալ, յերկու ճապոնացի ներս բերին ջրով լի մի
մեծ պղինձ։ Սենյակում յերեաց մի սպա, վորն ինչ-
վոր բան ասաց կորեացիներին, ու նրանք լուս մոտե-
ցան պղնձին։ Այդ միջոցին ճապոնացիները քանդեցին
իրենց գոտկատեղից կապած փոքր պարկերը ու, կորե-
ացիներին շարքի կանգնեցնելով, մանր սև փող բա-
ժանեցին նրանց։ Դրամները գերցնելով՝ կորեացիները
շրջապատեցին պղինձը։ Նինան վոչինչ չեր հասկանում
և հետաքրքրվելով մոտեցավ պղնձին։ Զրում աշխու-
ժորեն լողում եյին յերկու խայտարդեա ձկնիկ։

Յերկար, կախ լնկած բեղերով ծեր կորեացին
պղպեց, վերցրեց մի ձկուն ձողիկ ու ձեռքն իջեցրեց
ջրի մեջ։ Գրգոված ձկները դադարեցին լողալուց և,
քիմուխտները փքվելով իրար դիմաց կանգ առան,
կովարար աքաղաղների նման։

Հետեյալ վայրկյանին նրանք ցասումով կովի
հետվեցին։

— Յախս, յախս, — կրակ կտրած ծափահարեցին
կորեացիները։

Յեկ նավաստիների սենյակը մի վայրկյանում
լցվեց աղմուկով, ու գժբախտ ստրուկները ծիծաղելով
ու աղմկելով շրջապատեցին պղինձը։

Խաղը դիտելով սպան ժպտում եր արհամարհան-
քով։

...Յոցմանը յերկար չտիրեց։ Հետեյալ որը նա
նորից յերգում եր, իսկ գիշերները յերկար ժամանակ

իր պատմածներով խանգարում եր Անդրեյի ու Նինակի
քունը։ Անհնարին եր իմանալ՝ ճշմարիտ բան և պատ-
մում ծերուկը, թե զոռ և տալիս յերեակայությանը,
բայց ընկերները միշտ այնպես եյին լսում նրան,
կարծես կախարդված լինեյին։

Մի անգամ Նինան հարցրեց Բակուտային, թե
արդյոք նա յերբեքե ամուսնացած յեղել ե, ընտանիք
ունեցել ե, տղա-աղջիկ ունեցել ե, թե վոչ։ Այդքանը
բավական եր, վորպեսզի բայցմանը խոսեր մինչև առա-
վոտ և մի ապշեցուցիչ պատմություն պատմեր։

— Յես յերբեք կին չեմ ունեցել բայց դուստր...
դուստր ունեցել եմ, — ծանր հոգոց քաշելով ասաց
նա։ — Ախ, Զանինա, Զանինա... Ո՞ւր ես դու այժմ,
իմ աղունիկս։

— Այդ ինչ անուն ե, — զարմացավ Նինան։ — Նրա
անունն ինչպես եր։

— Զանինա, — կրկնեց Բակուտան, վոր չափա-
կանց գոհ եր մացել այն եփեկտով, վոր թողել եյին
եր խոսքերը։ — Նա իտալուհի յեր։

— Իտալուհի։
— Այս, — անվըդով հաստատեց բոցմանը։ — Իսկ
զարմանալու ինչ կա այստեղ։

Անդրեյն ու Նինան, շունչները պահելով, հեքյալ
լսող յերեխաների պես մոտեցան բոցմանին։

Յեկ, մեփական խոսքերից զմայլվելով, Բակու-
տան պատմեց, թե ինչպես մի որ նեապոլի փողոցում
նրան զրավեց տասներկու տարեկան աղքատ մի աղջ-
կա շուրջը հավաքված ամբոխը։ Մանդոլինայի նվա-
զակցությամբ փոքր իտալուհին յերգում եր, ապա
պարում դափին դարկելով և բոլորին հիացմունք պատ-

ձառելով: Բայց ահա նա վերջացրեց ու ձեռքը մեկնեց, և անգութ լսողներն իսկույն ցրվեցին: Բակուտան, նրա ասելով, չկարողացավ այդպիսի անգությանը դիմանալ և անմիջապես նավ տարավ նրան: Ծովագնացները, — բոցմանի ընկերները, — հիացմունքով եյին լսում ցնցոտի հագած յերեխայի յերգերը, և ահա Բակուտան հանեց գլխարկն ու...»

— Յեզ յես գլխարկի մեջ զցեցի այս նավարկության ընթացքում վաստակած ամբողջ գրամս: Հարյուր կամ հարյուր հետուն ոռւբլի յեր, չեմ հիշում: Դրամն ի՞նչ նշանակություն ուներ ինձ համար: Հատպա, ծովագնացներ, — ասացի յես, — գրավաներդ մի դատարկեցք, ով ինչքան կարող ե: Մուս ծովագնացներին պետք ե ճանաչել: Մի բոպելում մենք մոտ... հազար ոռւբլի հավաքեցինք: Իսկ հետո յես մի շքեղ կառք վարձեցի, Զանինայի հետ շրջեցի խանութներն ու այնպես հագցրի նրան, ինչպես մի արքայագուստը: Դեռ ահազին դրամ եր մնում, և յես նրան տարագործոց, կանչեցի յերաժշտության անվանի պլոֆեսորին, ամբողջ դրամը տվի նրան ու պատվիրեցի: «Մրան դաստիարակեցէք իմ հարազատ աղջկա նման, իսկ յես կդամ յերեմն ու կիմանամ, թե կրթությունն ի՞նչպես ե ընթանում»: Ո՛, ինչպես եր լաց լինում ու շնորհակալություն հայտնում նա: «Յետ ձեզ յերեք, յերեք չեմ մոռանա, սինյոր Բակուտա, — հեկեկում եր նա»: Այդպիսով յես գուստը ձեռք բերի, — հուզված ասաց Բակուտան:

Շատ տարիներ անցան, Բակուտան արգեն մի այլ նավի վրա յեր աշխատում, ու վոչ մի անգամ նրան չհաջողվեց նեապոլ գնալ: Մեկ անգամ, տասը

տարի անցնելուց հետո, յերբ նրա նավը յեկավ Մարսել ըստ վերցնելու, Բակուտան լսեց, վոր քաղաք ե յեկել անվանի իտալացի յերգչուհի: Տոմուր սարսափելի թանգ արժեկը, բայց մթթե այդ կարող եր կանգնեցնել նրան: Յեզ յերեկոյան նա նստած եր առաջին շարքերում: Վարքան միծ յեղավ նրա ուրախությունն ու զարմանքը, յերբ տեսավ, վոր հանգիստեաների բուռն ծափահարություններով բեմ դուրս յեկած յերգչուհին Զանինան ե:

— Համերգը վերջացավ, յես մի թանգարժեք ծաղկեփունջ գնեցի, — հրապուրանքով պատմում եր Բակուտան, — գնացի բեմի հետեւն ու սպասուհու միջոցով հանձնեցի, հետը տալով մի նամակ. «Ենդրում եմ ընդունել: Զեր տաղանդի յերկրպագու, ծովերի անհայտ թափառական»: Ծաղիկները տարան, յես սպասում եյի, բայց ահա զուրը բացվեց, ու Զանինան դուրս յեկավ: Նա վոտից զլուխ դիտեց ինձ, իսկ նրա շուրջը պտառում եին Փրակավոր ու ցիլինդրավոր իշխանները, կոմսերը, բարոնները:

— Դուք մվ եր, — հարցրեց նա ու գլուխը բարձրացնելով ծոմսեց շրթունքները: — Դուք ի՞նչ եք ուղղում, թանկագինս:

Յետ կանգնել եյի, ձեռներս խաչած, կանգնել եյի քանդակի նման և լսել: Նա իմ վոտների տակ շպրտեց ծաղկեփունջը, իսկ յետ լուս նայում եյի նրան, մինչեւ վոր կոմսերն ու իշխանները բռնեցին նրա ձեռքերից ու տարան:

Նա գնաց, իսկ յետ դեռ կանգնած եյի: Հետո, նույն սպասուհու ձեռքով յետ յերկրորդ բացիկն ուղարկեցի նրան: Սպասուհին զնաց, իսկ յետ անհայտացա: Ահա թե ինչ եյի գրել յետ Զանինային: «Մի

ծովագնաց հիշում և ցնցոտիներ հագած մի հրեշտակ-
մանկիկի՝ նեապոլի փողոցներից, նա սիրում եր նրան՝
հարազատ աղջկա պես, ու, ծովերում թափառելիս,
ծովի մղձավանջային փոթորիկներում տեսնում եր
նրա կախարդիչ դեմքը: Նա սիրում եր նրան աղջկա
պես, բայց այժմ նա այլս աղջիկ չունի ու հեռավոր
ծովագնացության գնալիս ընդմիշտ կմոռանա Զանի-
նալին»: Վհնց ե, հը: Յեթե Բակուտան ցանկանա,
նա իր գրպանը կդնի բոլոր գրողներին:

— Հետո ի՞նչ լեզավ,—հետաքրքրությունից համա-
բերությունը հատած՝ շտապեցնում եյին Անդրեյն ու
Նինան:

— Հետո,—ալարելով, շինծու անտարբերությամբ
հարցրեց Բակուտան: — Իսկ ի՞նչ կարող եր լինել Նույն
գիշերը մենք մեկնում եյինք Մարսելից: Մեկնումի
գրոշակներ, վերջին սուլոց, բարձրանում ենք նավա-
սանդուխքը, և վերջին բոպեյին նավահանգիստ ե ներս
ընկնում մի կառք: Սև քողով մի կին մոտ ե վազում
ափին, բայց արդեն չափաղանց ուշ ե: Այն ժամանակ,
ծնկների վրա ընկնելով, ձեռները կոտրատելով, նա
գոռում ե. «Սինլոր Բակուտո, սինյոր Բակուտո, վե-
րադարձեք»: Նա պոկում ե իր վրայից մատանիները,
մարգարիտներն ու աղամանդերը և աղաչում ե, վոր
յես կանգնեցնեմ շոգենավը: Իսկ յես կանգնած եմ
նավելրում, ձեռներս խաչած ու քանդակի պես լուռ: —
Այն, — տխուր իջեցնելով գլուխը՝ վերջացրեց Բակու-
տան, — մի ժամանակ յես ել եմ դուստր ունեցել...

...Որեն անցնում եյին որերի հետերից, ամիս-
ները՝ ամիսների հետերից: Բակուտան չեր տրտմում,
բայց նա բավականին սպիտակել եր, ավելի քիչ եր

յերգում և վերջերս, յեթե Նինան ու Անդրեյը գիշեր-
ները քնած ելին լինում, բարձրածալն խոսում եր ինքն
իր հետ կամ յերեակայական զրուցակցի հետ: Ամենից
հաճախ նա խոսում եր զեկապետ Գոլովինի հետ:

— Թույլ տվեք զեկուցել, — հաստ բասով ասում
եր նա մթության մեջ, — ամեն ինչ կարգին ե, ընկեր
զեկապետ: Նավակաղմը հիանալի վիճակում ե:

Սկզբում Անդրեյն ու Նինան վախենում եյին
գիշերային այդ խոսակցություններից, իսկ հետո ար-
դեն ընտելացան ու, քնի մեջ լսելով ծերուկի միա-
պաղապ ձայնը, չեյին զարթնում: Յերբեմն նա պատ-
կերացնում եր, թե հայրենիք ե վերադարձել:

Այն ժամանակ նա մտքում քայլում եր Կրեմլով
ու խոսում ընկեր Ստալինի հետ:

— Պատիվ ունեմ ներկայանալու, — վորոտում եր
բոցմանը: — Յես հեռավոր նավագնացության բոցման
իվան Բակուտան եմ:

Հաջորդ բոպեյին նա զգացված շչում եր:

— Սրտիս խորքից շնորհակալություն եմ հայտ-
նում, ինձ շատ լավ եմ զգում ու պատրաստ եմ ամ-
բողջ ուժով նավելու:

— Վհչ, — մի վայրկանի չափ լոելուց հետո,
հարգանքով հրաժարվում եր նա, — յես արդեն ծեր եմ
սովորելու համար, իսկ այդպիսի բարձր պաշտոն, կըր-
թությանս թերության պատճառվ, չեմ կարող ընդու-
նել: Սակայն իբրև բոցման կարող եմ նավել, իսկ լեթե
պետք ե — նաև կովել...


Այդպես անցավ կես տարի: Մայիսի 15-ի գիշերը
յերեք գերիները, քնի պատրաստվելիս, ըստ սովորա-
կանին, լսում եյին Բակուտային:

— Դարձյալ միկ ուր անցավ, — զատում եր բոցմանը, — ովք գիտե, թե ինչ կարող ե պատահել: Հանկարծ դուռը կը ացվի...

Բակուտան չափարտեց նախաղասությունը: Ծանր յերկաթե զուռը զողաց, զբնգոցով ու դղբղոցով սողնակն ընկավ: Դուռը բացվեց, ու ծանոթ, բարձր կերպարանքը յերևաց դուան մեջ: Առաջին վալլկանին ծովագնացները չճանաչեցին Ալենդորֆին, այնքան եր փոխվել այդ մարդը: Նրա գլուխը ջղաձգվում եր, բացած բերանով ուզում եր ոդ, կլանելի Յեղ չկարողանալով մի խոռք ասել, որորվելով, նա վայր ընկավ ու զցեց լապտերը:

Բակուտան մի քայլ արեց ու սառեց իր տեղում: Ալենդորֆը կառչող մատներով բռնեց նրա ծնկներից.

— Փրկեցեք... փրկեցեք, — սարսափահար շուրջը նայելով բղավեց նա, — փրկեցեք ինձի: և յես ձեր ստրուկն եմ...



ՏԱՄՆՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

ՎԵՐՋԻՆ ԲՈՊԵՆԵԲԸ

Ալենդորֆը մահվան սարսափից դողդողացող ձեռքերով կառչում եր բոցմանին:

— Աստված իմ, այս ինչ արին նրանք: Անիծված, գարշելի կապիկներ: Նրանք ուզում են ինձ առնետի նման ջրախեղդ անել:

Բակուտան գարշանքով հետ քաշվեց, սակայն, վորքան ել ուժեղ եր բոցմանը, նա չկարողացավ ապավել իրեն կորցրած գերմանացու սլկուն ու կառչուն մատներից: Ամեն բոպե դռանը նայելով, յուրաքանչյուր հնչյունից ցնցվելով, Ալենդորֆը գոչում եր.

— Նրանք մտազրվել են վոչնչացնել կրեյսերը... զգմում եք: Մենք լողում ենք, լողում ենք: Նրանք խորը տեղալիտք ե տանեն կրեյսերն ու... սուզեն: Խցիկը սահուն կերպով ճոճվում եր: Անկասկած,

նավը շարժվում էր: Հեռվից լսվեցին անհասկանալի աղմուկ և աղաղակներ:

— Աղաղակում էն, — ականջ դնելով ասաց Ալենդրիքը: — Մահ... մահ...

Մի վայրկյան բաց թողնելով բոցմանին՝ նա վախվելով փակեց գուռն ու հեկեկալով և խեղվելով, կցկուր կերպով բացատրեց.

— Ինչ-վոր մեկը նավով այստեղ ե գալիս Սահմանցիսկոյից: Կղզու ուղղությամբ ե գալիս ամերիկական մի նավ: Ճապոնացիները... Ստոր դալաճաններ, նրանք ուղում եյին ինձնից թագցնել իրենց մտադրությունները: Բայց յես գիտեմ, հրամանատարը չի կարող թուլ տալ վոր ամերիկացիներն այս բազան հայտնաբերեն, և... նա կվոչնչացնի կրեյսերը... Յերեկ նա հրամայեց վոչնչացնել կղզու մուտքը, իսկ այսոր առավոտից պատրաստել են յերկու ստորջրյա նավակ, Նրանք այժմ կինգստոններն¹ են բաց անում, — աղաղակեց Ալենդրիքը: — Ինչի՞ համար: Աստված իմ, Պարոն Բակուտա, յես ինչի՞ համար պետք ե մեռնեմ: Յես մեղավոր չեմ ձեր վիճակի համար, յես միայն ծառայում եյի, ծառայում եյի փողի համար: Ոգնեցնք ինձ... Այսուել մենք միակ յելը ուղացիներն ենք: Փրկեցնեք ինձ — և գուք կփրկեք ձեզ: Մենակ յես վոչ մի դեպքում չեմ կարողանա փրկվել այս դժոխքից...

— Վերջ տուր գոռոցիդ, — մռայլորեն ընդհատեց նրան բոցմանը: — Քեզ ճշգրիտ հայտնի յե, վոր նրանք...

¹ Այն սարքն ե, վորով փակում են նավի յեղեկում գտնվող անցքերը:

— Կսուզեն, ալսոր, հենց հիմա... լերպվում եմ: Ո-ո, ինձնից վոչինչ չի կարելի թագցնել:

— Իսկ մարդիկ:

— Մարդիկ... Ո-ո, դուք դեռևս ի վիճակի յեք ուրիշների մասին մտածելու... Յերկու ժամ առաջ համարյա բոլոր զինվորներին քշեցին նավամբարը: Նրանք վոչ մի դեպքում չեն կարողանա այնտեղից դուրս գալ: Կորեացիները փակված են իրենց սենյակում...

— Սպանելը:

— Մի կասկածեք, նրանք բոլոր հնարավորություններն ունեն փրկվելու:

— Բայց չե վոր մենք ջրի տակն ենք:

— Պարոն Բակուտա, — աղերսեց Ալենդրիքը, — այդ բոլորը բացատրելու համար ժամանակ ե պահանջվում: Իսկ մեզ համար յուրաքանչյուր բողեն շատ թանգ ե: Շուտ, իմ հետեւից: Ամեն ըոպե...

